

գեր²

- ԳԻՐ², «արձանագրութիւն»
գեր, ու., ԻԳ 38
գգեր Ի 24
- ԳԻՐ³, «հաշուեցոյց»
գգեր ժՁ 6, 7
- ԳԻՐԿԲ, անեզ.
ի գերկս → Բ 28
- ԳԻՐԲ, անեզ.
գերբ-ս Դ 21
գերս Դ 17
գգերս ԻԴ 32, 45
գգերսն Դ 17, 20
ի գերս, նգ., Գ 4, Ի 42
յ . . . գերս, նգ., ԻԴ 27
- ԳԻՐԲ ՊԱՏԳԱՄԱՑ
ի գերս պատգամաց, նգ., Գ 4
- ԳԻՐԲ ՍԱՂՄՈՍԱՑ
ի գերս սաղմոսաց, նգ., Ի 42
- ԳԻՐԴ, տ. ԳԵ[Ի]Դ
- ԳԼԽԱՏԵԼ
գլխատեցի Թ 9
- ԳԼԽԱԻՈՐ, գ.
գլխաւորք ժԹ 47
- ԳԼՈՐՈՒՄՆ
ի գլորումն Բ 34
- ԳԼՈՒԽ
գլուխ, ու., Ի 17
գգլուխ է 46, Թ 58
ի գլուխ, նգ., Զ 12
գլխոյ, ս., է 38, ժԲ 7
ի գլխոյ ԻԱ 18
գգլուխս ԻԱ 28
- ԳԼՈՒԽ ԱՆԿԵԱՆ
գլուխ անկեան, ու., Ի 17
- ԳՆԱԼ
գնայքդ ԻԴ 17
գնան է 22, ժԱ 44
գնայր Դ 30
գնային Ա 6
գնաց Ա 23, 38, 39. Բ 51, Դ 43. Ե 13, 25,
28. է 6, Ը 39, ժԵ 13. ժԹ 12, 28. Ի 9,
ԻԲ 39, ԻԴ 12
գնացին Ե 11, է 24, Ը 22. Թ 11, 56. ժ 30,
ժէ 14, ԻԲ 39, ԻԳ 26, ԻԴ 24

- գնայցէք Թ 4
գնացից ժԵ 18
մի՛ գնասցէ Դ 43
գնա՛ Ե 8, 28. ժԳ 31, ժէ 19
գնալ Ը 37, ժԳ 33
ի գնալ ն, նգ., ժ 38
գնացեալ ժԵ 15, ԻԲ 13
- ԳՆԱԼ ԶԿՆԻ
գնաց գկնի Ե 28
- ԳՆԱԼ ԶԶԵՏ
գնացին գհետ Ե 11, Թ 11, ԻԲ 39
- ԳՆԱԼ Ի ՊԱՏՈՒԻՐԱՆՍ
գնային յամենայն պատուիրանս, նգ., Ա 6
- ԳՆԱԼ ՃԱՆԱՊԱՐՀ
գնաց ճանապարհ Ի 9
- ԳՆԱԼ ՅԱՌԱՋ
գնաց յառաջ ժԹ 28
- ԳՆԱԼ ՅԻՐԱԻՈՒՆՍ
գնային . . . յիրաւունս, նգ., Ա 6
- ԳՆԱՅԵԱԼ, տ. ԳՆԱԼ
- ԳՆԵԼ
գնէին ժէ 28
գնեցի ժԴ 18, 19
գնեցէ ԻԲ 36
գնեսցուք Թ 13
գգնողս, գ., ժԹ 45
- ԳՆՈՂ, տ. ԳՆԵԼ
- ԳՈԳ
ի գոգ, նգ., ժՁ 23
ի գոգն → ժՁ 22
ի գոգս → Զ 38
- ԳՈՀԱՆԱԼ, չ.
գոհանամ ժ 21, ժԸ 11
գոհանայր Բ 38, ժէ 16
գոհացաւ ԻԲ 17, 19
- ԳՈՂ
գող, ու., ժԲ 33, 39
- ԳՈՂԱՆԱԼ, ն.
մի՛ գողանար ժԸ 20

(Շարունակելի)

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵԻԱՑՈՒ ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵԱՑԳՆԵՐԸ

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱԿԱՐԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

Աշխատանքի արդիականութիւնը – Գրիգոր Տաթեւացին հայ միջնադարեան նշանաւոր մտա-
ծողներից է: Նրա գրական ժառանգութիւնը արժանացել է բազմաթիւ ուսումնասիրողների ու-
շաղրութեանը (Ղ. Ալիշան, Մ. Օրմանեան, Գ. Զարհանալեան, Լ. Յովհաննիսեան, Մ. Աբեղեան,
Ս. Արեւշատեան, Ն. Թովմասեան եւ այլք): Այն քննութեան նիւթ են դարձրել նաեւ Հ. Աճառեանը,
Գ. Զահուկեանը եւ Լ. Ուաչերեանը¹:

Աճառեանն անդրադարձել է Տաթեւացու բառամեկնութիւններին եւ ստուգաբանութիւններին՝
իր «Հայերէն Արմատական Բառարանում», (ՀԱԲ) լրմատների ստուգաբանութեան պատմութեան
մէջ հին մատենագիրների շարքում շարադրելով նաեւ Տաթեւացու բացատրութիւնը տուեալ բառի
վերաբերեալ:

Զահուկեանն իր «Քերականական եւ Ուղղագրական Աշխատութիւնները Հին եւ Միջնադարեան
Հայաստանում» աշխատութեան մէջ ի թիւս միւս քերականների՝ վերլուծելով նաեւ Տաթեւացու
հայեացքները, ներկայացնում է նրան իբրեւ «գրչութեան արուեստի» տեսաբան՝ ցոյց տալով
նախորդ քերականների հայեացքների հետ ունեցած ընդհանրութիւններն ու տարբերութիւնները:

Այնուհետեւ Տաթեւացուն իբրեւ «գրչութեան արուեստի» տեսաբան է ներկայացնում Ուաչերեանն
իր «Գրչութեան Արուեստի Լեզուական-Քերականական Տեսութիւնը Միջնադարեան Հայաստա-
նում» աշխատութիւնում:

Եւ, այնուամենայնիւ, Տաթեւացու լեզուագիտական հայեացքներն ամբողջութեամբ չեն ներ-
կայացուել, որովհետեւ դրանց մասին մինչեւ այժմ խօսք է ասուել միայն Արիստակէսի եւ Գէորգ
Սկեւուացու երկերի Տաթեւացու գրած մեկնութիւնների ընձեռած նիւթի հիման վրայ: Ինչպէս յայտ-
նի է, այդ երկու հեղինակները «գրչութեան արուեստի» տեսաբաններ են, ուստի եւ Տաթեւացին
ներկայացուել է միայն իբրեւ «գրչութեան արուեստի» տեսաբան: Մինչդեռ իր գրեթէ բոլոր աշխա-
տութիւններում մինչ այդ մեկնութիւնները գրելը (դրանք գրուել են նրա կեանքի վերջին տարիներին)
բազմիցս անդրադարձել է լեզուի խնդիրներին. այդ մեկնութիւններով ամբողջացել են նրա
հայեացքները լեզուի վերաբերեալ:

Ամբողջութեամբ չեն ներկայացուել նրա բառամեկնութիւնները եւ ստուգաբանութիւնները
նոյնպէս, որոնք բառական մեծ թիւ են կազմում նրա աշխատութիւններում, եւ դրանց զգալի մասը
գիտական արժէք է ներկայացնում: Զնայած սրան, գրաբարեան բառազանձը համակողմանիօրէն
ներկայացնող «Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի» (ՆՀԲ) վկայութիւնների մէջ դրանք ընդ-
գրկուած չեն ընդհանրապէս, իսկ Աճառեանի ՀԱԲ-ում վկայակոչուած են մասամբ միայն («Գիրք
Քարոզութեան» երկու հատորների, «Գիրք Հարցմանց»-ի «Ոսկեփորիկ»-ի լեզուական նիւթի հիման
վրայ):

¹ Հ. Աճառեան, Հայերէն Արմատական Բառարան, հ. հ. 1-4, Երեւան, 1971-79: Գ. Զահուկեան, Քերականական եւ
Ուղղագրական Աշխատութիւնները Հին եւ Միջնադարեան Հայաստանում, Երեւան, 1954: Լ. Ուաչերեան, «Գրչութեան
արուեստի» Լեզուական-Քերականական Տեսութիւնը Միջնադարեան Հայաստանում, Երեւան, 1962: Տե՛ս, նաեւ
Джмаунян Г. Языкознание в Армении в V-XV вв. В кн.: История лингвистических учений.
Средневековый Восток. Л., 1981.

Ուսումնասիրուած չեն նաեւ Տաթեւացու գրական ժառանգութեան լեզուա-ոճական առանձնայատկութիւնները, մինչդեռ այս առումով եւս նա միջնադարի ուշագրաւ հեղինակներէց է:

Սոյն աշխատանքով Տաթեւացու լեզուագիտական հայեացքների մասին առաջին անգամ խօսք է ասուում նրա ողջ գրական ժառանգութեան ուսումնասիրութեան հիման վրայ (վերոյիշեալ մեկնութիւններից բացի՝ առանձին քերականական աշխատութիւններ նա չունի): Յատկապէս պէտք է ընդգծել այն փաստը, որ ընդհանրապէս Տաթեւացու հայեացքների համակարգը մեզ է ներկայանում իբրեւ շրջապատող աշխարհի, երեւոյթների, դրանց վերաբերեալ մարդու գիտելիքների համակողմանի վերլուծութեան արդիւնք: Նրա ողջ գրական ժառանգութիւնը շարադրուած է հետեւեալ սկզբունքով. նա ամէն ինչ քննութեան նիւթ է դարձնում՝ ելնելով հոգեւոր-մարմնաւոր երկատու-մից: Մարմնաւորի համակարգում գուգակցում է իր ժամանակի յայտնի բոլոր գիտութիւնների տուեալները՝ ըստ հարկի դիմելով մէկին կամ միւսին, նայած այն բանին, թէ տուեալ բառը, դրանով նշանակուող առարկան, տուեալ արտայայտութիւնը ինչ բացատրութեան կարիք են զգում (բացատրութիւնների մէջ գերիշխում են փիլիսոփայական, աստուածաբանական, բարոյախօսական շերտերը. դա է պատճառը, որ օրինակ, «Մեկնութիւն Նրգ Նրգոցի» աշխատութեան մէջ գտնում ենք լեզուագիտական 5-6 հարցադրում եւ նոյնքան էլ աստուգաբանութեան փորձ): Այս առումով, նրա լեզուագիտական հայեացքները հանդէս են գալիս նրա միւս հայեացքների համակարգում՝ կողք-կողքի, իբրեւ հերթական բացատրութեան փորձ:

Քննութիւնը ցոյց է տալիս, որ Տաթեւացին ո՛չ միայն «գրչութեան արուեստի» տեսաբան է, այլ եւ Գրիգոր Մագիստրոսից եւ Յովհաննէս Նրզնկացուց՝ յետոյ երրորդ համակարգող հեղինակն է միջնադարեան քերականական մտքի պատմութեան մէջ, որովհետեւ նա համադրել է տեսակէտներ Դաւթից մինչեւ Նրզնկացի: Հանդէս բերելով խնդրին նորովի մօտենալու սկզբունք եւ բազմաթիւ տեսական ընդհանրացումներ կատարելով, Տաթեւացին ո՛չ միայն չի դառնում նախորդ հեղինակների տեսակէտների սոսկ կրկնողը, այլ եւ ներկայանում է իբրեւ ինքնատիպ հեղինակ:

Տաթեւացու լեզուագիտական հայեացքները, բառամեկնութիւնները, բառագործածութիւնները մի նոր էջ են բացում հայոց լեզուի պատմութեան մէջ, որով եւ պայմանաւորուած է սոյն ուսումնասիրութեան արդիականութիւնը:

Աշխատանքի նպատակը եւ խնդիրները – Աշխատանքի նպատակն է եղել ի մի բերել Տաթեւացու գրական ժառանգութեան մէջ տեղ գտած լեզուագիտական հարցերը, բառամեկնութիւնները եւ աստուգաբանութիւնները, ինչպէս նաեւ լեզուի խնդիրներին աղերսուող այլ կարգի հարցադրումներ: Սրանից էլ բխել են ուսումնասիրութեան խնդիրները.

1. համակարգել եւ համակողմանիօրէն ներկայացնել Տաթեւացու լեզուագիտական հայեացքները՝ ցոյց տալով ո՛չ միայն նրա կապը նախորդ քերականների հետ, այլ՝ որոշ չափով եւ նրա ազդեցութիւնը հետագայ ուսումնասիրողների վրայ.
2. ի մի բերել նրա կատարած բառամեկնութիւնները, աստուգաբանութիւնները՝ հաշուի առնելով դրանց միջնադարեան եւ ժամանակակից ընկալումների տարբերութիւնները.
3. բառամեկնութիւնների, մասամբ նաեւ աստուգաբանութիւնների գիտական արժէքը ցոյց տալ՝ դրանք համեմատելով մի շարք բառարանների (ՆՀԲ, ՀԱԲ եւ այլն) համապատասխան բացատրութիւնների հետ.
4. քանի որ նրա լեզուագիտական հայեացքները, բառամեկնութիւնները, աստուգաբանութիւնները հանդէս են գալիս միւս հարցերի հետ գիրկընդխառն, ուստի նրա տեսական հարցադրումները երբեմն պարզաբանել իր իսկ աշխատութիւնների լեզուական նիւթով (այդպէս վարուել ենք «Դիտողութիւններ ոճաբանութեան վերաբերեալ» ենթագլխում. այդ նպատակով որոշ չափով

² Տե՛ս, Գ. Ջահուկեան, Քերականական եւ Ուղղագրական Աշխատութիւնները:

ներկայացրել ենք նաեւ նրա բառագործածութիւնները եւ նրա գրական ժառանգութեան լեզուա-ոճական որոշ առանձնայատկութիւնները):

Աշխատանքի գիտական նորոյթը – Տաթեւացին գիտական մտքին մինչ այժմ յայտնի է եղել իբրեւ փիլիսոփայ, մանկավարժ, «գրչութեան արուեստի» տեսաբան: Նրա լեզուագիտական հայեացքների ամբողջական ուսումնասիրութիւնը թոյլ է տալիս նրան անվերապահօրէն դասել ու նաեւ միջնադարեան քերականների շարքին:

Նրա բառամեկնութիւնները եւ աստուգաբանութիւնները ո՛չ միայն հետաքրքիր են միջնադարեան ընկալման առումով, այլ եւ հաւաստի եւ ստոյգ աղբիւր են իբրեւ պատմական վկայութիւն բառի տուեալ նշանակութեամբ կիրառութեան վերաբերեալ:

Տաթեւացու կողմից բառերի ինքնատիպ գործածութիւնները կարելի է համարել բառերի բացատրութեան օժանդակ միջոց: Մեր կողմից գտնուած են նրա հեղինակած մի քանի տասնեակ նոր բառեր, որոնց մի մասը նա կիրառում է այս կամ այն բառի բացատրութեան ժամանակ:

Աշխատանքի տեսական եւ գործնական նշանակութիւնը – Աշխատանքի նիւթերը կարող են օգտագործուել բազմաթիւ քերականական հարցերի պատմութիւնն ամբողջացնելիս: Սրանցով կարող են լրացուել նաեւ հայոց լեզուի միջին շրջանի պատմութիւնը, իսկ աշխատանքում ընդգրկուած բառամեկնութիւնների գիտական լինելը իրաւունք է տալիս դրանք համարելու պատմական բառարանագրութեան յուսալի աղբիւրներից մէկը: Աշխատանքը կարող է ընդգրկուել հայոց լեզուի պատմութեան լեզուաքննական դասախօսութիւններում:

Միաժամանակ, պէտք է նշել, որ քանի որ Տաթեւացին ընդհանրացրել է գիտական մտքի նախորդ ձեռքբերումները (բնորոշ է հետեւեալ յիշատակութիւնը. «ոչ ամենեւին ընդ անկոխն ընթացեալ ուղի, այլ սակաւ ինչ հաւաքեալ ի քրտանց առաջնոց հարցն. այլ եւ է ուրեք երկարեալ բաթանից ոմանց ի թիւս գլխոց . . . եւ բազում ուրեք համառօտ անցեալ»³), ուստի նրա գրական ժառանգութիւնը դեռեւս լուրջ հետազոտութեան կարիք ունի. այն առատ նիւթ կարող է տալ գիտութեան բազմաթիւ բնագաւառների ուսումնասիրող ներին:

Ուսումնասիրութեան մեթոդները – Սովորաբար ուսումնասիրողները գործ են ունենում այս կամ այն հեղինակի հայեացքների համակարգը ներկայացնող որեւէ աշխատութեան վերլուծութեան հետ: Սակայն քանի որ Տաթեւացու հայեացքները ցրուած են նրա ողջ գրական ժառանգութեամբ մէկ, ուստի նրա ինքնատիպ ոճը ստիպում է վարուել հակառակը՝ ի մի բերել նրա հայեացքների համակարգը ողջ գրական ժառանգութեան ուսումնասիրութեամբ:

Ընդհանուր առմամբ մենք փորձել ենք վերլուծել Տաթեւացու հայեացքները նախորդ հեղինակների հետ ունեցած ընդհանրութիւններով եւ տարբերութիւններով, այսինքն՝ պատմական մօտեցմամբ: Բառամեկնութիւնները քննելիս դիմել ենք թէ՛ համաժամանակեայ, թէ՛ տարժամանակեայ սկզբունքների: Առաջինը կիրառուել է, երբ բառերի բացատրութիւնը դիտուել է իբրեւ ժամանակակից մեկնութիւն, երկրորդը՝ երբ քննութեան են առնուել նրա բացատրած բառերի կրած պատմական փոփոխութիւնները:

³ Գր. Տաթեւացի, Լուծումն Պարսպմանց Կիւրղի, Կ. Պոլիս, 1717, էջ 774:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ա. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻՆ ԵՒ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԸ

Քաղաքական կեանքում թէկուզ ո՛չ շատ նշանակալից դրական տեղաշարժը միջնադարեան հայ իրականութեան մէջ միշտ էլ նշանաւորուել է մշակութային կեանքի աշխուժացմամբ: Երբեմն նոյնիսկ լարուած ժամանակահատուկներում էլ յաջողուել է պահպանել դրա անընդհատութիւնը, ինչպէս օրինակ, հակասութիւններով լի ԺԳ.—ԺԴ. դարերում, երբ քաղաքական կեանքն աչքի էր ընկնում խիստ անկայունութեամբ: Այդ պայմաններում Սիւնիքում ամբողջ երկրի համար վարդապետներ, գիտնականներ ու գրիչներ էին պատրաստում միջնադարեան հայ մտքի նշանաւոր օջախները, Գլաճորի, ապա՝ Տաթեւի համալսարանները: Եւ եթէ դրանց հանդէս գալու ժամանակի մասին խօսելիս կարելի է նշել Սիւնեաց աշխարհում տիրող համեմատական հանգստի մասին, ապա նոյնը չի կարելի ասել յատկապէս Տաթեւի համալսարանի գոյութեան վերջին երեք տասնամեակները վերաբերեալ, որի ընթացքում, սակայն, նա շարունակում էր գործել՝ կրթական, գիտական հարցերից բացի լուծելով նաեւ քաղաքական հարցեր:

Տաթեւի համալսարանը հանդիսացել է հայ միջնադարեան մտքի իւրօրինակ ամփոփում. այդ առումով այստեղ խաչածեւուել են ո՛չ միայն նրա անմիջական նախորդի՝ Գլաճորի համալսարանի, այլեւ Կիլիկեան Հայաստանի, Սիւնիքի եւ առհասարակ նախորդ գիտական մտքի նուաճումները, մշակութային ավանդները: Այս փաստն իր արտացոլումն է գտել յատկապէս Գրիգոր Տաթեւացու աշխատութիւններում:

Գրիգոր Տաթեւացին իր բազմակողմանի գործունէութեամբ նշանաւորուել է դեռ կենդանութեան օրօք: Նա համբաւ է վայելել ե՛ւ իբրեւ դպրապետ, ե՛ւ իբրեւ գիտնական, ե՛ւ իբրեւ քաղաքական գործիչ: Աւելանը իրաւամբ նկատել է, որ նա երկար ժամանակ չի գերազանցուել իր հռչակով. «Ի՛ յետին ամս կենաց սորին (Յովհան Որոտնեցու — Ս. Գ.), յիւս ԺԴ. դարու եւ ի սկիզբն ԺԵ.ին պայծառացաւ բազում անգամ յիշատակեալ աշակերտ նորին Գրիգոր, որ վասն երկար բնակութեանն, ուսման, գրութեանց եւ վարդապետութեանն, մահուանն եւ թաղմանն ի վանքս, կոչեցաւ յատկապէս Տաթեւացի եւ ի յաջորդացն հռչակեցաւ ո՛չ միայն գերագոյն քան զամենայն յետոյ եկեալ վարդապետսն, այլ քան զհոլ ովս յառաջնոց»⁴:

Իոյ որ նրանք, ովքեր որեւէ առիթով գրել են Տաթեւացու մասին, յատկապէս նրա ժամանակակիցները, յիշում են նրան բազմապիսի մեծարող մակդիրներով. քաջ հոգեւոր, բանիբուն վարդապետ, եռամեծ, արեգակ պայծառ, մեծ բաբուն, տիեզերալոյս, երիցս երանեալ, բազմերախտ հայր, երկրորդ արփիաւորիչ Հայկազեան սեռի, պայծառամիտ, հանճարեղ եւ այլն:

Մեզ են հասել նրան նուիրուած Առաքել Սիւնեցու, Մեսրոպ վարդապետի, Մատթէոս Ջուղայեցու (վերջինս գրուած այբբենական գլխակապով) ներբողները, նրա անձի շուրջը հիւսած զրոյցներ⁵ եւ բազմաթիւ ու բազմապիսի յիշատակութիւններ:

Կենսագրական տեղեկութիւններ Տաթեւացու մասին հաղորդել են հիմնականում Թովմա Մեծփեցին եւ Մատթէոս Ջուղայեցին. սակաւաթիւ տեղեկութիւններ քաղում ենք նաեւ իր իսկ աշխատութիւններից, դրանց յիշատակարաններից: Ի՞նչ են հաղորդում նրա կենսագիրները: Ըստ Ջուղայեցու «էր ազգաւ Հայկազնի, աշխարհաւ կրկնակի՝ ի հայրենական տոհմէ՛ Գաջբերունի եւ

⁴ Ը. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 237:
⁵ Զրոյցներից մէկում, օրինակ, պատմում է, որ նրա ծնունդը աւետուել է ինչպէս սրբերինը. «Որպէս յաւուր միում բարեպաշտուհի մայր սորին ետես յանուրջս երազոյ գտուր Լուսաւորիչն մեր, ունելով ի ձեռին իւրում կանթեղ մի նուազեալ ի լուսոյն եւ ասէ ցնա. լուաւ Աստուած աղօթից քոց եւ ետ քեզ բարեգոյն զաւակ միջնորդութեամբ իմով. բայց ա՛ն զկանթեղս զայս եւ պահեա՛ ի քեզ, զի մանուկն որ ծնանել ոցն է ի քէն՝ նա լուսաւորեցէ զխաւարեալ կանթեղս զայս ուղղափառ զաւանութեամբ եւ ողջամիտ վարդապետութեամբ» (Գր. Տաթեւացի, Գիրք Քարոզութեան, Ամարան, Կ. Պոլիս, 1741, էջ 6):

մայրենական ցեղն յԱյրարատ գաւառէ ի գեղաւանէն Փարպոյ»⁶: Յովհան Որոտնեցին Երուսաղէմ գնալու ճանապարհին տեսնում է պատանի Սուրբուշահին⁷, նկատում նրա արտասովոր ընդունակութիւնները, դարձնում հոգէտրդի. «սնոյց ի բարին եւ ուսոյց զամենայն իմաստն աստուածային գրոց եւ արտաքին սոփեաստից»⁸: Զեռնադրում է սարկաւազ Սեպուհ լեռան վրայ գտնուող Գրիգոր Լուսաւորչի դամբարանի մօտ, նրա անունով էլ կոչում՝ Գրիգոր: Քահանայ ձեռնադրուած է Երուսաղէմում, իսկ վարդապետ՝ դարձեալ Դարանաղեաց գաւառի յիշարժան վայրում: Այս ամէնն ըստ Թովմա Մեծփեցու տեւում է 28 տարի:

1386 թ. Որոտնեցին անսպասելի հիւանդանում է. «յանկարծակի տկարացեալ հիւանդացաւ եւ կամ եղ եւ Արարչին գնալ առ նա. կոչեաց զմեծ վարդապետն (Տաթեւացուն — Ս. Գ.) եւ զընկերակիցսն նորա, օրհնեաց զնոսա ամենայն հոգեւոր եւ աստուածային օրհնութեամբ եւ եղ գրիգոր ամենեցուն զլուիս եւ ուսուցիչ»⁹: Փոխարինում է ուսուցչին Տաթեւացին՝ «հաւանութեամբ եւ կամօք մեծ վարդապետին Սարգսի սուրբ ուխտին Ոստաբաստայ եւ համշիրակ եղբարց իւրոց Յակոբայ Սաղմոսավանիցն Արարատեան գաւառին եւ Գէորգայ Երզնկացոյ եւ ամենայն աշակերտաց գնդին Յովհաննէս վարդապետին Մեծորայ, Յակոբայ եւ Միսիթարայ Ռշտունեաց»¹⁰: Տաթեւացու ըստնապետական նշանակմանը, այսպիսով, եկել են մասնակցելու Հայաստանի բոլոր անկիւններից: Այս ամէնը տեղի էր ունենում Ապրակունեաց վանքում, որտեղ Որոտնեցին եւ Տաթեւացին գտնուում էին հանգամանքների բերումով:

Որոտնեցու մահուանից յետոյ նրա աշակերտները, որոնք արդէն վարդապետական կոչում էին ստացել՝ մեկնում են տարբեր գաւառներ կատարելու իրենց առաքելութիւնը. «համշիրակ եղբարք իւր գնացին ի նմանէ (Տաթեւացու մօտից — Ս. Գ.). մեծն Յակոբ . . . վարդապետն Գրիգոր աշակերտովք իւրովք¹¹ եւ այլք աստ եւ անդ ցրուեալ եղեն»¹²: Տաթեւացին մնում է սակաւաթիւ աշակերտներով: Այստեղ նրա կենսագիրները չեն հաղորդում մի փաստ, որի մասին տեղեկանում ենք իր «Հարցմունք Գէորգայ եւ պատասխանիք Գրիգոր Տաթեւացոյ» աշխատութեան յիշատակարանից: Նա գնում է Շահապունիք, որտեղ եւ դառնում է Լենկթեմուրի Հայաստան կատարած առաջին արշաւանքի ականատեսը: 1387 թ. վերջինս պաշարում է Շահապունք բերդը. պաշարուածների մէջ էր նաեւ Տաթեւացին: Բերդի գրաւման, աւերման, բնակչութեան կոտորածի մասին է, որ նա գրում է նոյն թուականին թղթին յանձնած իր այդ աշխատութեան յիշատակարանում¹³: Այնուհետեւ Տաթեւացին աշակերտներով կրկին գալիս է Ապրակունեաց վանք «յաւուրս ձմեռայնոյ», իսկ զարնանը տեղափոխուում Տաթեւի վանք. «գնացեալ ի սուրբ Ուխտն եւ ի շնորհալից յաթոռ Ստաթէի առաքելոյսն եւ ի տուն Օրբելեանց առ իշխան Սմբատ, որդի Իւանի՛ թոռն Բուրթլի»¹⁴: Այստեղ Տաթեւացին օգտուելով Օրբելեան իշխանական տան հովանաւորութիւնից՝ վերակում է համալսարանի աշխատանքները՝ ունենալով երեք «ուսումնարան». «Ի՛ միումն ուսուցանէր զնախկին երգիչ վարդապետաց գերաժշտութիւնս քաղցրալ ուր ձայնիւ եղանակաւ . . . : Եւ ի միումն՝ նկարագրութիւն պատկերահանութեան եւ զանազան նկարչութիւնն: Եւ ի միւսումն՝ զներքին եւ զարտաքին

⁶ Նրա ծննդավայրի մասին երկու տարբեր տեղեկութիւններ ունենք. ըստ մէկի համարում է Վայոց ձորը, ըստ երկրորդի՝ Թմկաբերդը (Գուգարքի նահանգ):
⁷ Ստեփանոս Օրբելեանի ստուգաբանութեամբ նշանակում է «շնորհալի թագաւոր» (Ստ. Օրբելեան, Սիւնիքի պատմութիւն, Երեւան, 1986, էջ 368):
⁸ Մատենադարան, ձեռագիր Հ. 6607, էջ 6ա:
⁹ Թ. Մեծփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 56:
¹⁰ Նոյն տեղը, էջ 17:
¹¹ Ոսաքը Գրիգոր Ուլաթեցու մասին է, որ 1378—86 թ.թ. աշակերտել է Որոտնեցուն:
¹² Թ. Մեծփեցի, էջ 33:
¹³ Այս հատուածը պատմական արժէք ունի՝ գրուած ականատեսի անմիջականութեամբ եւ կենդանի գոյներով, որտեղ նկարագրում է պատմութեանն իր դաժանութեամբ յայտնի Լենկթեմուրի աւերածութիւնները: Ժամանակը բնորոշելով իբրեւ «սաստաարսուուն առնես»՝ Տաթեւացին գրում է. «Ոմանք ի գերութիւն վարեալ եւ կէսք առ թուր դիւթաւալ սրախող զալարեալ առհասարակ քահանայ եւ աշխարհականք գէշ անկեալ դիւականք, անթաղ ընկեցեալք եւ այլք ի բազմազան տանջարանս մաշեալք» (ԺԴ. Դարի Հայերէն Զեռագրերի Յիշատակարաններ, կազմեց Լ. Ուալիկեան, Երեւան, 1950, էջ 567):
¹⁴ Թ. Մեծփեցի, էջ 33:

գրեանս»¹⁵: Կարճ ժամանակ անց Մեծոփեցու վկայութեամբ Տաթևացին հաւաքում է բազմաթիւ աշակերտներ, եւ Տաթևի համալսարանի փառքը նրա շնորհիւ կրկին տարածուած է երկրով մէկ եւ նոյնիսկ՝ «պատուեցաւ ազգս հայոց յայլասեռիցն վասն ախորժ եւ իմաստայեղծ բանից վեհին Գրիգորի»¹⁶:

1406 թ. Քաջբերունեաց գաւառից Տաթևացու մօտ են գալիս նաեւ Սարգիս Ապրակունեցու, ապա նրան յաջորդած Վարդան վարդապետի տասներկու աշակերտները, որոնց մէջ էր եւ Թովմա Մեծոփեցին: Այդ թուականից անբաժան լինելով Տաթևացուց՝ Մեծոփեցին դառնում է նրա գործունէութեան ակնատեսը, ապա եւ սկզբունքների հետեւորդն ու կենսագիրը:

Տաթևացին, որպէսզի կարողանայ գերծ պահել համալսարանը աւերածութիւններից, կապեր է հաստատում նախ՝ Լենկթեմուրի, ապա՝ նրա որդի Միրանշահի հետ: Սրանք ո՛չ միայն ընդունում են նրան, այլ թերեւս նկատի առնելով նրա ունեցած հեղինակութիւնն ու ազդեցութիւնը՝ պատուի արժանացնում. «Եւ մեծարեցաւ եւ պատուեցաւ ի մեծ աշխարհակալէն Թամուրէն եւ յորդոյ նորին Միրանշայէն»¹⁷:

Լենկթեմուրի մահուանից յետոյ Հայաստանի վրայ հերթական արշաւանքն է ձեռնարկում Թուրք-մենական Կարա-Կոյունլու ցեղին Ղարա Շուսուֆը: Տաթևացին փորձում է բանակցութիւններ վարել նաեւ սրա հետ, սակայն՝ ապարդիւն (նպատակն էր բարեխօսել Որոտնեցու եղբոր՝ Սմբատ Օրբելեանի համար, որից Ղարա Շուսուֆը գրաւել էր Որոտնաբերդը. «էառ զՈրոտն բերդն ի Սմբատայ իշխանէն, վասն բարեխօսութեան նոցա եկն, եւ նա ոչ լուաւ աղաչանաց վարդապետին»¹⁸:

Դեռ 1402 թ. Թովմա Միւնեցու վկայութեամբ¹⁹ Տաթևացին համալսարանի բաբունապետութիւնը յանձնել էր Մատթէոս Զուղայեցուն՝ ամենայն հաւանականութեամբ վատառողջութեան պատճառով եւ ազատուած ժամանակը քարոզչական աշխատանքի եւ կաթողիկոսական աթոռի հետ կապուած հարցերի լուծմանը տրամադրելու ակնկալութեամբ: 1408 թ. նա թողնում է Տաթևը եւ գալիս Քաջբերունեաց գաւառ, Մեծոփավանք. «Եւ ի հալածմանէ անօրինաց շարժեցաւ ի գաւառէն Միւնեաց առեալ զմեզ եկն ի գաւառէն Արճիշոյ»²⁰ (այսինքն իր հետ տարել է նաեւ Արճիշից եկած վերոյիշեալ տասներկու աշակերտներին):

Տաթևացուն ընդառաջ է գալիս Յովհաննէս Մեծոփեցին, որ դեկավարում էր Մեծոփի ոչ պակաս հեղինակութիւնն ունեցող դպրոցը. «Վարդապետօք եւ աշակերտօք գնացեալ դէմ ընդառաջ նորա հոգեւոր ծնողին իւրոյ»²¹ եւ բերեալ յանապատն իւր»²²: Տաթևացու գալը մեծ աշխուժութիւն է առաջացնում այդ շրջաններում: Բազմաթիւ կրօնաւորներ եւ վարդապետներ շտապում են տեսնելու եւ լսելու ժամանակի մեծահամբաւ մարդուն: Տաթևացու շուրջը հաւաքւում են «մետասան վարդապետք եւ ութսուն կրօնաւորք», որոնց թւում՝ «Գրիգոր նահատակն եւ սուրբ այրն Ուլաթեցի, Յակոբ Ուլսաննացի ի Ռշտունեաց, Մարգարէն ի Վարագայ, Յակոբ ի յԱսպիսնկու, Յովհաննէս ի Փափլինոյ, Ստեփանոս ի Բերկրոյ, Մկրտիչն ի Հիզնայ, Յովհաննէսն ի Բաղիշոյ, Սարգիս վարդապետն ի Յարութեանէն, Մելիքսէթն ի յԵրզնկու»²³:

¹⁵ Լ. Ուշիկեան, Գլաճորեան Համալսարանը եւ նրա Սաների Աւարտական Ատենախօսութիւնը: Երեւանի պետ. համալսարանի գիտական աշխատութիւնների ժողովածու, հ. 23, 1947:
¹⁶ Մատենադարան, ձեռագիր հ. 6607, էջ 6ա:
¹⁷ Նոյն տեղը:
¹⁸ Թ. Մեծոփեցի, էջ 34:
¹⁹ ԺԵ. Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, կազմեց Լ. Ուշիկեան, Ա. մաս, Երեւան, 1955, էջ 24:
²⁰ Թ. Մեծոփեցի, էջ 52:
²¹ «Հոգեւոր ծնող» է անւանում, որովհետեւ Յովհաննէս Մեծոփեցին վարդապետական կոչումը ստացել է Տաթևացուց. տե՛ս, Թ. Մեծոփեցի, էջ 56: Նաեւ՝ Մ. Չամչեանց, Հայոց Պատմութիւն, հ. Գ, Երեւան, 1984, էջ 453:
²² Թ. Մեծոփեցի, էջ 59:
²³ Նոյն տեղը, էջ 52:

Այստեղ Տաթևացին մնում է մէկ ամբողջ տարի, որի ընթացքում ծաւալում է բազմակողմանի գործունէութիւն. վարդապետում, քարոզում, թղթին յանձնում նոր աշխատութիւններ եւ, որ ամենակարեւորն է, ընդարձակ քննութեան նիւթ է դարձնում Հայոց կաթողիկոսական աթոռի հարցը: Սա ուշագրաւ պատմական փաստ է, որովհետեւ արդէն պետականութիւն չունեցող Հայաստանի համար էական է դառնում այդ հարցի լուծումը, որի ձեռնարկումը դառնում է Տաթևացու վերջին հայրենասիրական քայլը: Սա նաեւ Ունիթուների դէմ մղած պայքարի շարունակութիւնն էր, որ սկսել էր դեռ Որոտնեցին: Տաթևացին յիշատակում է 1379 թ. վերջինիս կազմակերպած հզօր հակահարուածը եւ նրանց դէմ տարած կարեւոր յաղթանակը: Տաթևացին այս պայքարը վախճանակէտին է հասցնում նաեւ տեսականօրէն. նրա աշխատութիւնների բազմաթիւ էջեր նուիրուած են այդ շարժման սնանկութիւնը բացայայտելուն, նրա ակունքները մատնանշելուն, դրա դէմ պայքարի ձեւերի ուսուցանելուն: Նրա «Վասն Աթոռոյն Աղթամարայ» աշխատութեան քննութիւնից պարզ է դառնում, որ 1114 թուականից երկպառակիւնձ հայոց կաթողիկոսական աթոռը վերամիաւորելու ծրագիր ունեցել էր դեռ Որոտնեցին: Գալով Արճիշ եւ օգտուելով այն հանգամանքից, որ Աղթամարի հակաթոռ կաթողիկոսութեանը պատկանելու պատճառով Քաջբերունեաց գաւառը գտնւում էր «կապանաց անիծից» ներքոյ, Տաթևացին օգտագործում է գաւառը բանադրանքից ազատելու առիթը եւ լուծարել է ենթարկում Աղթամարի կաթողիկոսական Աթոռը՝ ստանալով կաթողիկոսից դժգոհ, տեղի աշխարհիկ եւ հոգեւոր առաջնորդների համաձայնութիւնը: Տաթևացուն չնայած չի յաջողում ծրագիրն ամբողջութեամբ իրականացնել, սակայն այդ ուղղութեամբ արուած քայլերը վճռական նշանակութիւն են ունենում: 1441 թ. նրա հետեւորդներից յատկապէս Թովմա Մեծոփեցու եւ Յովհաննէս Հերմոնացու ջանքերով ընդհանրական կաթողիկոսական աթոռը վերջնականապէս հաստատուած է էջմիածինում, որով եւ վերանում է հայ ժողովրդի լուծարքի, դրանով իսկ ժողովրդի ինքնութեան վերացման հարցը:

Այսպիսով, հարազատ մնալով իր սկզբունքներին, Տաթևացին իր կեանքի վերջին երկու տարին նոյնպէս նուիրաբերում է հայրենիքի ամրապնդմանը:

Տաթևացին շուտով ստիպուած է լինում թողնել Քաջբերունեաց գաւառը: Այդ մասին Գարեգին Յովսէփեանը գրում է. «Տաթևացու Մեծոփից հեռանալու շարժառիթները մեզ յայտնի չեն: Թովման թէ՛ իւր Պատմութեան եւ թէ՛ ՊՄԹ թուի յիշատակարանի մէջ յայտնում է, թէ՛ աշակերտներն են ծածուկ փախցրել»²⁴: Փաստերը վկայում են այն մասին, որ Մեծոփում մնալը Տաթևացու կեանքի համար դարձել էր վտանգաւոր²⁵, այլապէս նրան «գաղտագողի» անելու հարկ չէր լինի («եկեալ աշակերտք նորա կացին ժամանակս ինչ գաղտագողի առեալ գնացին ի գաւառն Արարատեան»²⁶):

Յովհաննէս Մեծոփեցին իր աշակերտներով եւ միաբանութեան վարդապետներով ուղեկցում է Տաթևացուն: Վերջինս գալիս է Երեւան²⁷, ապա՝ Սաղմոսավանք՝ «առ մեծ վարդապետն Յակոբ Սաղմոսավանից՝ հոգեւոր հարազատն իւր»²⁸: Շուտով Տաթևից մեծ վարդապետին տանելու է գալիս Առաքել Միւնեցին՝ «սուրբ եպիսկոպոսն եւ մեծ իմաստասէրն, քուերորդին մեծ վարդապետին»²⁹: Մեծոփից եկած վարդապետները եւ նրանց աշակերտները նրա հետ մեկնում են Տաթև՝ ըստ ամենայնի, նրա ընդհատուած քարոզչական աշխատանքին եւ վարդապետելուն հետեւելու ակնկալութեամբ: Սակայն սպառուած անմնացորդ նուիրումից եւ դեգերումներից, Տաթևացին

²⁴ Գ. Յովսէփեան, Թովմա Մեծոփեցու կեանքը, Վաղարշապատ, 1914, էջ ԺԲ:
²⁵ Չամչեանցի վկայութեամբ, քիչ ժամանակ անց թունաւորում են Յակոբ Սեցի կաթողիկոսին, որը եւ պէտք է փոխադրուէր Աղթամար Դաւիթ կաթողիկոսի փոխարէն: Դժուար չէ կուսել, որ նման մի ճակատագիր էլ սպասում էր Տաթևացուն (Մ. Չամչեանց, հ. Գ, էջ 457):
²⁶ Թ. Մեծոփեցի, էջ 53:
²⁷ Տաթևացու Երեւան գալու մասին Գ. Յովսէփեանը գրում է. «Երեւանում Տաթևացին վարդապետական աստիճան է տալիս Թովմային. այս մասին թէեւ Թովման յայտնում է վերոյիշեալ յիշատակարանի մէջ, բայց առանց տեղի անունը տալու: Այդ պակասը լրացնում է Կիրակոս բանասէրը» (Գ. Յովսէփեան, նոյն տեղը, էջ ԺԲ):
²⁸ Թ. Մեծոփեցի, էջ 53:
²⁹ Նոյն տեղը, էջ 51:

Հիւանդանում եւ կնքում է իր մահկանացուն (ըստ Մեծոփեցու՝ Տաթեւ գալուց ութ օր անց)։ «Հանգեաւ երանելի մահուամբ ի վանքի Տաթեւոյ ի դեկտեմբերի Ի՛է (27-ին) եւ թաղեցաւ ի տօնի մեծ առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի եւ եղեւ դասակից եւ պատուակից նոցին ի թուին ՊԾԼ (1410 թ.)»⁵⁰։

Տաթեւացու մահը ժամանակակիցների կողմից յիշատակում է իբրեւ մեծ կորուստ. «Եւ մեք մնացաք անգլուխ անձն եւ մարմին առանց հոգոյ»⁵¹, - գրում է Թովմա Մեծոփեցին։ «Աւա՛ղ զմեզ, զի այլ ոչ տեսանէ քաղցրահայեաց կերպարանն եւ այլ ոչ բարբառի հրածորան լեզուն»⁵² - յիշատակում է Առաքել Միւնեցին։ «Ի սուգ են անհնարին վասն քոյին տեսութեան զրկելոյն»⁵³, - վկայում է նաեւ Մատթէոս Ջուղայեցին։

Այդ մեծարանքների, գովասանքի, յարգանքի տուրքի արտայայտութիւնների մէջ մեզ է ներկայանում հռչակաւոր մարդու ամբողջական նկարագիրը։ Ժամանակակիցները գնահատելով Տաթեւացու բոլոր ծառայութիւնները, յատկապէս շնորհում են Հայ Եկեղեցու ինքնութեան փրկութեան նրա ջանքերը։ Նկատելի է նաեւ, որ բոլոր նրանք, ովքեր գրել են Տաթեւացու մասին, մտաւախութիւն են ունեցել, որ չեն կարողանայ ըստ արժանւոյն ներկայացնել նրան. «Եթէ բոլոր լեզուք ի մի վայր ժողովին՝ ոչ կարեն ըստ արժանւոյն ներբողական բանիւք դրուատել»⁵⁴։ Նոյն կարծիքին է նաեւ Ջուղայեցին. «Զի թէ բազմահարուստ ոք լեալ՝ ոչ կարէ ըստ արժանւոյն պատուասիրել զնա»⁵⁵։ Եւ այսուհանդերձ, աներկբայ է եղել նրանց հաւատը, որ Տաթեւացին անջնջելի հետք կը թողնի Հայ ժողովրդի պատմութեան մէջ. «զբանս ոգեշահ իբրեւ արձան մեզ թողեր . . . ոսկեպսակ գլխոյ տոհմին մեր եղեր»⁵⁶։

Այս ամէնի մէջ հարկ չկայ չափազանցում տեսնելու, որովհետեւ Տաթեւացու ծառայութիւնը իրաւամբ մեծ եւ անգնահատելի էր պետականութիւնը կորցրած ժողովրդի համար, որի ինքնութեան ամրապնդմանը նա նուիրաբերեց իր ողջ կեանքը⁵⁷։

Տաթեւացին իր գործունէութեան ընթացքում երբեմն հարկադրաբար եւ երբեմն էլ սեպհական նախաձեռնութեամբ յաճախ շրջագայել է՝ Տաթեւի համալսարանից բացի, ուշադրութեան կենտրոնում պահելով նաեւ Ապրակունեաց, Մեծոփի, Սաղմոսավանի դպրոցները։ Տաթեւացու գործընկերներն են եղել Յովհաննէս Մեծոփեցին, Սարգիս Ապրակունեցին, Յակոբ Սաղմոսավանեցին, Գէորգ Երզնկացին, Գրիգոր Ուլաթեցին (Ծերենց), այնուհետեւ նրան աշակերտած Մատթէոս Ջուղայեցին, Առաքել Միւնեցին, Թովմա Մեծոփեցին, Յովհաննէս Հերմոնացին եւ այլք։ Բնականաբար, այս սակաւաթիւ մտաւորականների անուններով չի սպառուում նրանց շարքը, ովքեր ունենդրել եւ ուսանել են Տաթեւացուն, աջակցել եւ աշխատակցել նրան։ Մեծոփեցին յանուանէ յիշատակում է նրանցից շուրջ չորս տասնեակին, որոնք եկել էին Ջուղայից, Աստապատից, Ծամախից, Կապանից, Ռշտունիքից, Բաղէշից, Երզնկայից, Գանձասարից, Թավրիզից, Փայտակարանից եւ բազմաթիւ այլ վայրերից. յիշատակարանների, այլ աղբիւրների հիման վրայ երկար կարելի է շարունակել այս թուարկումը։

Տաթեւի համալսարանը Տաթեւացու օրօք այս դպրոցների եւ այդ անձանց հետ սերտ կապերի մէջ գտնուելով է կատարել իր համահայկական դերը։ Տաթեւացին պարբերաբար այցելելով այդ դպրոց-

⁵⁰ Մատենադարան, ձեռագիր հ. 6607, էջ 6բ։
⁵¹ Ժճ Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, էջ 103։
⁵² Գր. Տաթեւացի, Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 717։
⁵³ Ժճ Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, էջ 119։
⁵⁴ Գր. Տաթեւացի, Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 6։
⁵⁵ Մատենադարան, ձեռագիր հ. 6607, էջ 6բ։
⁵⁶ Գր. Տաթեւացի, Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 720։
⁵⁷ Գնահատելով Տաթեւացու ներդրումներն իբրեւ Գրիգոր Լուսաւորչի, Սահակ Պարթեւի, Մեսրոպ Մաշտոցի, Գրիգոր Նարեկացու եւ այլ ոց ծառայութիւններին հաւասարաբէք՝ Հայ Եկեղեցին վերջինը Տաթեւացուն է ընդունել իր սրբերի շարքը, որի առիթով ուզում ենք բերել Մաղաքիա Օրմանեանի դիպուկ դիտողութիւնը. «Հայ Եկեղեցոյ սուրբերէն անոնք, որ Ե. դարէն ետքն են, հազիւ թէ տասնեակ մը կը կազմեն, եւ ամէնքն ալ այդ պատուոյն բարձրացած են իրենց մեծահռչակ եւ լուսաւոր արդիւնքներուն համար (տես՝ Մ. Օրմանեան, Հայոց Եկեղեցին, Կ. Պոլիս, 1912, էջ 174)։

ները՝ զարկ է տուել նրանց գործունէութեան ընդարձակմանը եւ նպաստել հեղինակութեան բարձրացմանը, սրանց նոյնպէս մասնակից դարձնելով կրթական մեծ աշխատանքի ծաւալմանը եւ որոշ առումով նաեւ՝ քաղաքական հարցերի լուծմանը։ Յանձին վերոյիշեալ վարդապետների Տաթեւացին ունեցել է հայ ժողովրդի ինքնութեան պահպանմանը նախանձախնդիր իր համախոհների։

Տաթեւացու գործունէութեան տարիներին, այսպիսով, Տաթեւի համալսարանը ներկայանում է մեզ իբրեւ մի կենտրոն, որից շարաւիղներ էին ձգուում դէպի Հայաստանի ամենատարբեր կողմերուն եւ նրա սահմաններից դուրս գտնուող բազմաթիւ ուսումնական օջախները։ Ներառելով հայ մշակույթի անցեալի արժէքները՝ այն նշանաւորուեց գիտութեան, «գրչութեան արուեստի»՝ զարգացման, ինչպէս նաեւ ազգային ինքնութեան պահպանման համար մղուած պայքարի մի նոր աստիճանով։

Տաթեւացին մեծազոյն հմտութեամբ դեկավարեց հայ միջնադարեան մտքի վերելքը եզրագծող այդ նշանաւոր օջախը։

Բ. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Գրիգոր Տաթեւացու գրական ժառանգութիւնը կազմում են նրա շուրջ երեք տասնեակ աշխատութիւնները։ Սրանց ճշգրիտ թիւը տատանում է 24-ից 32-ի սահմաններում, որովհետեւ ըստ Տաթեւացու ժամանակակիցների վկայութեան նա գրել է 24 աշխատութիւն, սակայն Մատենադարանում գրանց թիւը հասնում է 32-ի։ Եթէ ճիշդ է գրիչների (նաեւ Առաքել Միւնեցու) հաղորդած թիւը, ապա Մատենադարանում Տաթեւացու աշխատութիւնների աւելի մեծ քանակի պատճառը կարող է լինել հետեւեալը. Տաթեւացու երկերը բազմիցս ընդօրինակուել են (միայն Մատենադարանում պահուում են շուրջ 1050 օրինակներ), ընդ որում ըստ հարկի արտագրուել է նրա այս կամ այն երկը ո՛չ թէ ամբողջութեամբ, այլ նաեւ՝ հատուածաբար։ Բնականաբար, հարիւրամեակների ընթացքում ո՛չ բոլոր գրիչներին է վիճակուել ձեռքի տակ ունենալ Տաթեւացու երկի բնագիրը, կամ նոյնիսկ՝ արտագրուած ամբողջական օրինակը։ Ուստի ընդօրինակուել եւ բազմացուել են նաեւ հատուածները, որոնք եւ հետագայում անտեղեակ գրիչների կողմից կարող էին ընկալուել իբրեւ առանձին աշխատութիւններ, այս կերպ 24 աշխատութիւնների թիւը հասցնելով 32-ի։ Այս ենթադրութիւնը կարող է հիմնաւորուել այն փաստով, որ Տաթեւացու աշխատութիւնների մէջ կան նաեւ խիստ համառօտները, որոնք բովանդակային աղերսներ ունեն այս կամ այն մեծածաւալ երկի հետ։ Այսպէս օրինակ, նրա «Ընդդէմ Տաճկաց»ը առանձնացուած է «Գիրք Հարցմանց»ից⁵⁸։ Նոյն կերպ «Մեկնութիւն Հայր Մերի»ն կարող է առանցնացուած լինել «Գիրք Քարոզութեան» կամ «Մեկնութիւն Մատթէի» երկերից, որովհետեւ երկուսում էլ առանձին ենթավերնագրերով այն հանդիպում է։

Տաթեւացու գրական ժառանգութիւնը սերտ միասնութեան մէջ է գտնուել նրա հասարակական-քաղաքական գործունէութեան հետ. նա տեսականօրէն հիմնաւորել է այն, ինչը նրա գործունէութեան բովանդակութիւնն է կազմել։ Դաւանաբանական-քաղաքական գործունէութեամբ կեանքի են կոչուել նրա «Գիրք Քարոզութեան» երկհատոր, «Ոսկեփորիկ», «Վասն Աթոռոյն Աղթամարայ», «Յաղագս Գաւազան Տալոյ» երկերը։ Նոյն նպատակին են ծառայել նաեւ նրա փիլիսոփայական երկերը, այդ թւում են՝ «Համառօտ Տեսութիւն ի Գիրս Պորփիրի», «Լուծմունք Համառօտ ի Տեսութիւն Դաւթի» աշխատութիւնները։ «Գրչութեան արուեստի» եւ քերականական խնդիրների պարզաբանմանն են նուիրուած «Լուծումն Համառօտ Դժուարիմաց Բանից ի Գիրս Գրչութեան», «Լուծումն Համառօտ ի Որոտ Գրչութեան», «Յաղագս Գրչութեան Արուեստի» երկերը։

Տաթեւացու գրական ժառանգութեան մէջ մեծ թիւ են կազմում մեկնութիւնները եւ լուծմունքները, որոնք հայ իրականութեան մէջ վաղուց ընդունուած եւ բազմիցս մեկնուած երկերի նոր մեկ-

⁵⁸ Աւելի մանրամասնօրէն տես՝ Բ. Կիւլէսէրեան, Իսլամը Հայ Մատենադարութեան Մէջ, Վիեննա, 1930։

նաբանությունն են. «Լուծմունք Առակաց», «Լուծմունք Սաղմոսաց», «Մեկնություն Երգոց Երգոյն», «Մեկնություն Յոբայ», «Մեկնություն Մատթէի», «Լուծմունք Յովհաննու», «Լուծմունք Նայեայ»: սրանք բոլորն էլ, այսպէս կոչուած, մեկնութեան մեկնություն են (երբեմն մի հեղինակի, երբեմն էլ՝ քաղուածոյ): Սրանք գրելով, Տաթևացին նպատակ է հետապնդել մատչելի դարձնել ավանդական մեկնողական գրականությունը՝ դրանց յաւելելով իր ինքնատիպ վերլուծությունները: Վերջապէս ժամանակի բազմաթիւ խնդիրների վերլուծութեան իւրօրինակ ժողովածու է նրա նշանաւոր «Գիրք Հարցմանց»³⁹:

Տաթևացու փիլիսոփայական⁴⁰, սոցիալ-տնտեսագիտական⁴¹, բժշկագիտական⁴², մասամբ նաեւ գեղագիտական⁴³ հայեացքները ուսումնասիրուել են մի շարք հեղինակների կողմից, թէեւ նրա խիստ ծաւալուն գրական ժառանգությունը իւրաքանչիւր նոր ուսումնասիրողի հնարաւորութիւն է ընձեռում նորանոր տուեալ ներ գտնել նոյնիսկ արուած ուսումնասիրությունների ուղղութեամբ:

Ասեմք նաեւ, որ սկզբունքօրէն իր աշխատութիւնները շարադրելով հին հայերէնով, Տաթևացին հոգ է տարել, որ դրանք լինեն մատչելի եւ պարզ՝ խոսակցելով բարբառային եւ խօսակցական տարրերի առատ գործածութիւնից («ոչ գեղջուկ իմն աշխարհական խօսից յարմարեալ»⁴⁴)՝ չխուսափելով սակայն ժողովրդական մտածողութեանը յատուկ բազմազան միջոցներից. վերջինիս յատուկ խոր ընդհանրացումներն են նրա բազմաթիւ ասոյթները, թեւաւոր խօսքերը: Ի դէպ, նա սիրել է իր խօսքը պարզաբանել նաեւ առակներով:

Տաթևացին հեղինակ է նաեւ մի գեղեցիկ ներբողեանի, որ նուիրուած է Յովհան Որոտնեցու յիշատակին: Սա թերեւս միակ գեղարուեստական գործն է նրա գրական ժառանգութեան մէջ: Այդ ներբողեանի մասին Մ. Աբեղեանը գրում է. «Նրա ներբողեանն իսկապէս հարուստ է ճարտասանական ձևերով — հարցում, բացազանչութիւն, կրկնութիւն նման կազմութեամբ խօսքերի եւ այլն. կան նաեւ պատկերաւոր եւ առատաբան արտայայտութիւնները առանց ճոռոմութեան, տրտմագին գզգզմունքով եւ անկեղծ սիրով լի մի գեղեցիկ ներբողեան, Սուրբ Գրքից առած նմանութիւններով մի երախտագիտական գովեստ արժանաւոր գործչի»⁴⁵:

Այսպիսով, Տաթևացու ներդրած ծառայությունները քննելիս, առաջին հերթին աչքի է ընկնում այն կուռ կապը, որ գոյություն ունի նրա գործունէութեան բոլոր ոլորտների միջեւ: Իւրացնելով միջնադարեան մշակոյթը գրեթէ ամբողջութեամբ, նա հանդէս է եկել իբրեւ համակարգող հեղինակ: Եւ թէ՛ դաւանաբանական-քաղաքական պայքարով, թէ՛ «գրչութեան արուեստի» նկատմամբ հանդէս բերած հոգածութեամբ, թէ՛ մեծաթիւ ուսուցիչների պատրաստումով նա հետապնդել է մի նպատակ. հոգ տանել հայ ժողովրդի ինքնութեան եւ անկախութեան ամրապնդմանը, հաստատուն եւ յուսալի դարձնել նրա կեցութիւնը:

Քանի որ Հայաստանում պատմական իրադարձությունների բերումով ժՆ. դարի սկզբից գիտական եւ մշակութային կեանքը անկում է ապրում, ուստի եւ հասկանալի է, որ ընդհատում է նաեւ

³⁹ Տաթևացու գրական ժառանգութեան ընդհանուր բնութագրմանը անդրադարձել են Ղ. Ալիշանը (Միսական, Վենետիկ, 1893), Մ. Օրմանեանը (Ազգապատում, մասն Բ, Կ. Պոլիս, 1914), Գ. Զարբանայեանը (Պատմութիւն Հայերէն Դպրութեանց, Վենետիկ, 1878), Հ. Աճառեանը (Հայոց Անձնանունների Բառարան, հ. Ա, Երևան, 1942), Մ. Աբեղեանը (Հայ Հին Գրականութեան Պատմութիւն, հ. Բ, Երևան, 1946):

⁴⁰ Փիլիսոփայական հայեացքներին է նուիրուած Ս. Արեւշատեանի ուսումնասիրությունները (Философские взгляды Григора Татеваци, Е., 1957; տե՛ս, նաեւ՝ Բանբեր Մատենադարանի, հ. 4, 1958 եւ հ. 6, 1962):

⁴¹ Տնտեսագիտական հայեացքներին՝ Ն. Թովմասեանի աշխատութիւնը. Գրիգոր Տաթևացու Սոցիալ-Տնտեսագիտական Հայեացքները, Երևան, 1966:

⁴² Նրա բժշկագիտական հայեացքները վերլուծել է Լ. Յովհաննիսեանը (Л. А. Оганесян, История медицины в Армении, часть вторая, Ереван, 1946):

⁴³ Տաթևացու կատարած մանրանկարների մասին առաջին անգամ խօսել է Լ. Դուռնովոն. Հին Հայկական Մանրանկարչութիւն, Երևան, 1952. նաեւ՝ Հայ Մանրանկարչութիւն, Երևան, 1967: Գեղագիտական հայեացքները մասամբ տեղ են գտել «Мастера искусства об искусстве» մատենաշարում (т. 6, М., 1969):

⁴⁴ Գր. Տաթևացի, Գիրք Հարցմանց, էջ 772:

ձեռք բերուած արժէքների սերնդից-սերունդ փոխանցման յաջողականութիւնը: Այս առումով խիստ սեղ մւում է ազդեցութեան այն շրջանակը, որ սպասելի էր, եւ պէտք է, որ ունենային Տաթևի համալսարանի մտածող ներքը, այդ թւում եւ՝ Տաթևացին: Եւ այնուամենայնիւ, ուսումնասիրողները նշում են նրա աներկբայ ազդեցութիւնը Առաքել Միւնեցու, Թովմա Մեծոփեցու, Յակոբ Դրիմեցու եւ այլոց վրայ. «Անշուշտ, Տաթևացու եւ Միւնեցու երկերի ամենաթուցիկ համեմատութիւնն իսկ ակնյայտ է դարձնում նրանց գաղափարական միասնութիւնը»⁴⁶, — գրում է Ա. Մաղոյեանը: Ջ. Էյնաթեանի կարծիքով Յակոբ Դրիմեցու «Տաթևի աւանդոյթների արժանի շարունակողի» «աշխարհայեացքի շատ հարցեր կապուած են այդ դպրոցի եւ նրա ղեկավարի՝ Գրիգոր Տաթևացու տեսակէտների հետ»⁴⁷:

Սակայն պէտք է ասել, որ Տաթևացու ազդեցութիւնը հետագայ գիտական մտքի վրայ առայժմ ամբողջապէս չի ուսումնասիրուել: Այսպէս օրինակ, քննութիւնը ցոյց է տալիս, որ ԺԶ. դարի քերական Դաւիթ Ձէյթունցին օգտուել է նաեւ Տաթևացու աշխատութիւններից (Տաթևացու լեզուագիտական հայեացքները քննելիս մենք համապատասխան գուգահեռներ ենք անցկացրել): Յայտնի է, թէ ազդեցութեան ի՞նչ շրջանակ է ընդգրկել Տաթևացու գրական ժառանգությունը ԺԸ. դարի մի շարք հրատարակություններից յետոյ:

Այսպիսով, Տաթևացու գրական ժառանգությունը եղած ուսումնասիրություններով հանդերձ դեռեւս լուրջ հետազոտությունների կարիք ունի, որը հնարաւորութիւն կ'ընձեռի վեր հանելու այն բոլոր կապերը, որ ունեցել են մի կողմից նրա աշխատութիւնները գիտական մտքի նախորդ ձեռքբերումների հետ, միւս կողմից՝ հետագայ շրջանի գիտական միտքը նրա գրական ժառանգութեան հետ:

ԳՂՈՒՆ ԵՐԿՐՈՐԻ

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ ՏԱԹԵՒԱՑՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Ա. ԱՐԻՍՏԱԿԵՍԻ ԵՒ ԳԷՈՐԳ ՄԿԵԻՌԱՑՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տաթևացու գրական ժառանգությունը քննելիս, ինչպէս նշեցինք, նա քաջածանօթ լինելով գիտական մտքի նախորդ նուաճումներին, կարողացել է ընդհանրացումներ անել, որը եւ թոյլ է տուել նրան նոր խօսք ասել գիտական մտքի մէջ: Այս առումով, բացառութիւն չեն կազմել նաեւ նրա լեզուագիտական հայեացքները: Նա համադրել է տեսակէտներ՝ սկսած Դաւիթից մինչեւ Յովհաննէս Երզնկացի, ընդ որում ոչ՝ թէ պատահական քաղումներ անելով, այլ որոշակի սկզբունքով դիմել է այն հեղինակներին, որոնց տեսակէտները ընդունելի է համարել եւ դրանցով ամբողջացրել է իր հայեացքները:

Սակայն մինչեւ դրանց քննութեանը անցնելը մի քանի խօսք Արիստակէսի եւ Սկեւացու երկերի մեկնությունների մասին:

Դիտնիսիոս Թրակացու «Բերականական արուեստի» թարգմանությունից յետոյ մի քանի դար շարունակ գրւում են մեկնություններ, որոնց շարքում բուն հայերէնի իրողությունները ներկայացնելու տեսանկյունից աչքի են ընկնում Դաւիթի, Մովսէս Բերթողի, Գրիգոր Մագիստրոսի, Վարդան Արեւելցու, Յովհաննէս Երզնկացու եւ այլոց աշխատութիւնները:

ԺԱ. դարից «գրչութեան արուեստի» բուռն ծաղկման թելադրանքով գրւում են աշխատութիւններ, որոնք աւելի գործնական բնոյթ են կրում: Սրանք նպատակ են հետապնդում կայունացնել հայերէնի ուղղագրութիւնը, կէտադրութեան կանոնները: Այս կարգի աշխատութիւններից համընդհանուր ընդունելութիւն եւ գործածութիւն են գտնում Արիստակէսի «Վերլուծութիւն

⁴⁶ Ա. Մաղոյեան, Առաքել Միւնեցի, Երևան, 1987, էջ 25:

⁴⁷ Յակոբ Դրիմեցի, Տոմարագիտական Աշխատութիւնները (աշխատասիրութեամբ՝ Ջ. Էյնաթեանի), Երևան, 1987, էջ 89:

Բացերեւապէս Բազմազան Բառից եւ Բայից . . .», Գէորգ Ակեւոացու «Որտա Վասն Հանգամանաց Հեզից, որն եւ պատճառն իսկ է գրադարծին յարուեստ գրչութեան», «Որտաք Վասն Առողջանութեանցն», «Որտաք Յաղագս Գրչութեան Արուեստի» երկերը:

«Գրչութեան արուեստն» իբրեւ առանձին առարկայ դասական դեղիով, ըստ էութեան, Տաթեւացին Արիստակէսի եւ Ակեւոացու գործերն օգտագործել է սկիզբից եւեթ, սակայն դրանց մեկնութիւնները գրել է միայն 1408 թուականին, Մեծոփավանքում գտնուելու ժամանակ: Ինքը՝ Տաթեւացին այդ մասին վկայում է հետեւեալը. «Ի թուականութեանս Հայոց ՊԾԷ (1408 թ.) ամի եկեալ մեր յերկիրս Քաջբերունի եւ ձմեռեալ ի հրեշտակաբնակ վանս Մեծոփայ, ի սպասու դամբարանաց վարդապետացն սրբոց եւ ընթերցմամբ հաւաքեցի զգրուարայոյժ բանս Յոբայ եւ զմեկնողաց նորա եւ այլ սակաւ ինչ լուծումն Արիստակէսի եւ Գէորգայ ի խրատս գրչութեան . . . եւ ընծայեցի ի պատիւ սուրբ տեղւոյս ուսումնասէր անձանց»⁴⁸:

Իսկ թէ ինչ նպատակով է Տաթեւացին գրել այդ մեկնութիւնները, մասամբ պարզ է դառնում Արիստակէսի երկի մեկնութեան վերնագրից. «Լուծումն համառօտ դժուարիմաց բանի ի գիրս գրչութեան Արիստակիսէ հետորէ»: «Գրչութեան արուեստը» շարունակում էր ծաղկել, մինչդեռ Արիստակէսի աշխատութիւնը, որ երկար ժամանակ գործնական ուղեցոյց էր եղել գրիչներին համար, Տաթեւացու օրերում արդէն դժուարմատչելի էր լեզուի խրթնութեան պատճառով: Այսպիսով, Տաթեւացին մեկնութիւն է գրում, որը կ'օգնէր գրիչներին հասկանալու վերոյիշեալ երկերը: Սա էլ թեւադրում է Տաթեւացու մեկնութեան բնոյթը. հարցադրումների մանրատում, թուարկումներ, բնագրի բառակապակցութիւնների եւ առանձին բառերի մեկնութիւններ, որը սակայն ո'չ իրաւացիօրէն՝ դիտուել է իբրեւ նրա աշխատութեան թերութիւն⁴⁹:

Աւելորդ չենք համարում կանգ առնել նաեւ այն տեսակէտի քննութեան վրայ, ըստ որի Տաթեւացու մեկնութիւնները աղբիւրների համեմատութեամբ գրեթէ նորութիւն չեն բերում: Այսպէս, ըստ Լ. Ուշերեանի՝ «եթէ Արիստակէսն ու Ակեւոացին իրենց երկերում գերազանցապէս քերականներ էին, քերականական լուծում էին տալիս իւրաքանչիւր հարցին, ապա Տաթեւացին «գրչութեան արուեստին» վերաբերող իր մեկնութիւններում գերազանցապէս տրամաբան-իմաստասէր է, այդ պատճառով էլ եթէ մի կողմ թողնենք Արիստակէսի եւ Ակեւոացու քերականական դրոյթների կրկնութիւնը նրա երկերում, ապա քիչ բան կը մնայ Տաթեւացու հայեցակէտից: Այդ չափով էլ գնահատում ենք նրա յիշեալ աշխատութիւնները»⁵⁰:

Քննական համեմատութիւնը, սակայն, ցոյց է տալիս, որ Տաթեւացին հիմնականում այդ երկերը մատչելի դարձնելու նպատակ ունենալով հանդերձ, տեսական հարցադրումներ աղբիւրների համեմատութեամբ աւելի շատ է անում՝ ընդգրկելով նաեւ բազմաթիւ յարակից հարցեր: Բացի այդ, ինչպէս իրաւացիօրէն նկատել է Գ. Ջահուկեանն իր աշխատութեան մէջ, Արիստակէսը իր երկը գրել է «ո'չ այնքան տալով սահմանումներ, որքան դիւրամատչելի դարձնելու նպատակով՝ բերելով առատ օրինակներ»⁵¹: Նա նշում է նաեւ, որ Արիստակէսն իր բացատրութիւնների մէջ «համապատասխան քերականական տերմիններ չի՝ գործածում», թէեւ նրա լեզուական իմացութիւնները կասկած չեն յարուցում⁵²: Մինչդեռ Տաթեւացին հիմնականում վարում է հակառակ ձեւով. աւելի շատ ընդհանրացումներ է կատարում՝ օգտագործելով համապատասխան տերմիններ:

- Տաթեւացու մեկնութիւններում որոշակիօրէն կարելի է սահմանազատել երեք շերտ.
 - ա. բառերի բացատրութիւն
 - բ. քերականական հարցադրումներ, սահմանումներ
 - գ. այլաբանական բացատրութիւններ:

⁴⁸ Ժ. Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, Ա մաս, էջ 86:
⁴⁹ Տե՛ս, Լ. Ուշերեան, նշուած աշխատութիւնը, էջ 181:
⁵⁰ Լ. Ուշերեան, նշուած աշխատութիւնը, էջ 192-193:
⁵¹ Գ. Ջահուկեան, Քերականական եւ Ուղղագրական Աշխատութիւնները, էջ 232:
⁵² Նոյն տեղը:

Մեր կարծիքով, Տաթեւացու մեկնութիւնների բուն արժէքը բացի նրանից, որ ինչպէս նշեցինք, նա նոր կեանք է հաղորդել գործածութիւնից դուրս եկող երկերին, վերոյիշեալ առաջին երկու շերտերի մէջ է: Գալով այլաբանական բացատրութիւններին, թուերի խորհրդապաշտութեանը, ապա անդրադառնալով դրանց Տաթեւացու «Քարոզգրքի» մասին խօսելիս, Մանուկ Աբեղեանը գրել է, որ այն «ազատ չէ սքոլաստիկ ձեւերից, թուարկութիւններից եւ մեկնութիւններից, որոնք իր ժամանակի մարդկանց համար անհրաժեշտ ու հաճելի են եղել»⁵³: Այսինքն, այդ փաստը ժամանակի մտածողութեամբ է պայմանաւորուած, թէեւ Տաթեւացու կողմից դա նոյնպէս վերաիմաստաւորուած է. իւրաքանչիւր այլաբանական բացատրութեամբ նա նպատակ է հետապնդում շրջապատող աշխարհում համաչափութիւն տեսնել, շեշտել մարդու բանականութեան եւ իմաստութեան դերը, ներքին կապ գտնել երեւոյթների միջեւ:

Բերում ենք Արիստակէսի երկի եւ Տաթեւացու մեկնութեան համառօտ համեմատութիւնը, նշելով վերջինիս այն յաւելումները, որոնք քերականական բնոյթի են:

Արիստակէսի երկի մեկնութիւնը սկսելով հէնց վերնագրից, Տաթեւացին բացատրում է նախ, թէ ինչ է վերլուծութիւնը. «վերլուծութիւն (է) մեկնութիւն յայտնապէս»⁵⁴: Եւ քանի որ խօսքը «գրչութեան արուեստին» վերաբերող աշխատութեան մասին է, նա բացատրում է նաեւ, թէ ինչ է գրչութիւնը: Այնուհետեւ, մէջընդմէջ անդրադառնում է այն բառերի մեկնութեանը, որոնք օգնում են հասկանալու Արիստակէսի երկը.

- գաղափարէ — աւրինակէ ստուգութեամբ
- վերտառել — վերագրել եւ յայտնի գործել առ միմեանս կապելով
- յորջորջել — կոչելն է
- հրահանգն — կրթութիւն
- սատարն — միջնորդ եւ աւգնականն է
- բացերեւ — յայտնի
- գլխազիրն — յառաջազիրն է
- շաղաշարել — դասելն է
- ուաբբիք — վարդապետք⁵⁵

Եւ բազմաթիւ այլ բառեր, որոնց թիւը միայն Արիստակէսի երկի մեկնութեան մէջ հասնում է մի քանի տասնեակի:

Իսկ եթէ առանձնացնելու լինենք քերականական հարցադրումները, ապա Արիստակէսի երկի առաջաբանի մեկնութեան մէջ դրանք հետեւեալն են. Տաթեւացին Արիստակէսի «բառից եւ բայից» բառակապակցութեան փոխարէն առաջադրում է «անուն եւ բայ»ը, այսինքն ճշդում է քերականական տերմինը: Այնուհետեւ խօսում է բառիմաստի, գաղտնավանկի (եթ կապն), մի քանի բառերի սեռականը ճիշդ հոլովելու կարգի մասին:

Արիստակէսի երկի առաջին կանոնի մեկնութիւնը Տաթեւացին սկսում է «կանոն» բառի բացատրութիւնից, որը նոյնպէս տեղեկութիւն է հաղորդում գրիչներին աշխատանքի նպատակի վերաբերեալ. «կանոնն կարգ ասէ կամ ուղղութիւն»⁵⁶, այլ կերպ ասած, աշխատութիւնը գրուած է ուղղութիւն ցոյց տալու համար: Այնուհետեւ Արիստակէսի բերած բառացանկերը իմբաւորում է ըստ խօսքի մասային պատկանելութեան. «Ապա, ահա: Նախդիր է: Սա, դա, նա: Դերանուն է, որպէս այն՝ ես, դու, նա, դա, սա»⁵⁷: Ծախ է նաեւ «բանի» (նախադասութեան, դատողութեան) բնորոշումը⁵⁸:

⁵³ Մ. Աբեղեան, Երկեր, Հ. Դ, Երեւան, 1970, էջ 416:
⁵⁴ Մատենադարան, ձեռագիր, Հ. 1115, էջ 196բ:
⁵⁵ Նոյն տեղը, էջ 196բ-204բ:
⁵⁶ Մատենադարան, ձեռագիր, Հ. 1115, էջ 199ա:
⁵⁷ Նոյն տեղը:
⁵⁸ Գ. Ջահուկեան, Քերականական եւ Ուղղագրական Աշխատութիւնները, էջ 293:

Երկրորդ կանոնի մեկնությունում Տաթևացիին աւելի համառօտ եւ մատչելի է բացատրում սեռական հոլովում գուգահեռ ձեւեր ունենալու դէպքերը. «Յորժամ գրես Անանիայ ազգն, Բառնաբայ ազգն, նոյն է, յորժամ գրես Անանիայի եւ Բառնաբայի ազգն, զի այն մին յիւն աստ գերկու գրոյ տեղն ընու ի կարճոյ եւ սա յերկար է»⁵⁹: Բնութագրում է նաեւ ուղղական հոլովմաստը. «ուղղական անունն գյատուկն որոշեալ դէմն ցուցանէ»⁶⁰:

Երրորդ կանոնի մեկնությունում դիտողություններ է անում միավանկ բառերի հնչիւնափոխութեան վերաբերեալ⁶¹:

Չորրորդ կանոնի մեկնութեան մէջ շարունակելով խօսել հնչիւնափոխութեան մասին, նա կանգ է առնում «երեք լծորդ քմակիցք» հնչիւններ ի, ւ, յ հերթագայութեան վրայ: Սա բաց վանկի հնչիւնափոխութիւնն է. տարբերում է նաեւ փակ վանկի հնչիւնափոխութիւնը, ուր «միջին գիրն փոխի»⁶²: Վերջում կատարում է ընդհանրացում, ըստ որի բառերի թեք ձեւերը ի տարբերութիւն ուղիղ ձեւի, կարող են ունենալ հնչիւնների փոփոխութիւն, յաւելում կամ պակասում:

Հինգերորդ կանոնի մեկնութեան մէջ ցոյց է տալիս յօդերի եւ ցուցական դերանունների կապը. «Իսկ երեք գիրն ցուցական է՝ դա, նու, սէ, որպէս այն դա, նա, սա»⁶³: Զգուշացնում է չչփոխել կալ (հաստատուն կալ) եւ կեալ ձեւերը, որովհետեւ վերջինս «գկեանքն նշանակէ»:

Վեցերորդ կանոնը քանի որ հիմնականում բառացանկ է, ուստի Տաթևացիին ստուգաբանում է դրանցից մի քանիսը:

Եօթներորդ կանոնի մեկնությունում նա նշում է, որ Արիստակէսի բերած օրինակները՝ արքայ, արքայից, քահանայ, քահանայից եւ այլն, հասարակ անուններ են. յո՛ւմ գրւում են նաեւ մի շարք յատուկ անուններ. «գոն եւ սոցին նման ի մեծ այք անուն, որպէս Ադամայ, Անդրեայ կամ Նոյ...»⁶⁴: Աւելացնում է նաեւ, որ «արքայ արքայից» ձեւով հայերէնում կազմւում է գերադրականը. «Տն՛ս եւ աստ եւ ի միտ առ զգերադրականն, որպէս արքայ արքայից, տէր տէրանց, իշխան իշխանաց»⁶⁵: Միայն է համարում «իշխանաց իշխան» ձեւը:

Ութերորդ կանոնի մեկնությունում խօսում է ու հնչիւնի բարդ կազմութիւն ունենալու մասին, «զի երկու րէն մին ուա է»⁶⁶: «Ո՛ւր նստի անուանց հոլովն եւ բայից» հարցին պատասխանում է, ընդունելով հոլովման երկու տիպ. նախդրաւոր եւ վերջաւորութիւններով⁶⁷:

Իններորդ կանոնի մեկնությունում նա դարձեալ շարունակում է մեկնել անհասկանալի բառերը, ինչպէս նաեւ ամփոփում է մինչ այդ ասածը, թէ ընդհանրացնելու դէպքում «զի՞նչ նշանակէ գրել գրանն յի՛ով եւ առանց յի՛ոյ»⁶⁸:

Տասներորդ կանոնի մեկնությունում մանրամասն խօսում է պատուազրուութեան մասին, նշում, որ այդ նշանը «նախ յատկացի այլ հոմանուն տէրանց եւ Աստուածոյ», իսկ մնացածները պատուով գրելը ուղղաբերի յաւելում են. «ոչ են ի թարգմանչացն սոքա պատուով գրեալ, այլ՝ պարզ»⁶⁹: Ինչպէս գրում է Գ. Զահուկեանը «այս կարծիքը հաստատում են եւ նորագոյն հետազօտութիւնները. Մեյէն միայն 5 բառ է գտել հնուց պահպանուած պատուազրութեամբ»⁷⁰:

⁵⁹ Մատենադարան, ձեռագիր, հ. 1115, էջ 199բ:
⁶⁰ Նոյն տեղը:
⁶¹ Գ. Զահուկեան, նշուած աշխատութիւնը, էջ 295:
⁶² Մատենադարան, ձեռագիր, հ. 1115, էջ 200բ:
⁶³ Մատենադարան, ձեռագիր, հ. 1115, էջ 200բ:
⁶⁴ Նոյն տեղը, էջ 201բ:
⁶⁵ Նոյն տեղը:
⁶⁶ Նոյն տեղը:
⁶⁷ Մանրամասն տե՛ս, Գ. Զահուկեան, նշուած աշխատութիւնը, էջ 293:
⁶⁸ Նոյն աշխատութիւնը, էջ 295:
⁶⁹ Մատենադարան, ձեռագիր, հ. 1115, էջ 202բ:
⁷⁰ Գ. Զահուկեան, Քերականական եւ Ուղղագրական Աշխատութիւնները, էջ 296:

Ոստում է նաեւ ուղղական, սեռական, գործիական հոլովմաստների մասին⁷¹:

Տաթևացիին վերջում խորհուրդ է տալիս ընթերցողներին ուղեցոյց ունենալ Արիստակէսի աշխատութիւնն իբրեւ ուղղագրական բառարան. «Իարձեալ իմա՛, ո՛վ ընթերցաւ, զբազմազան բառերը նայեա որպէս գրեալ է, ի միտ առ եւ այնպէս գրեա եւ դու զուղղականն եւ գհոլովն . . . : Եւ գոր չկարես հասկանալ ի բառգիրքն տես եւ զթարգման բառերոյն»⁷²:

Աւելացնում է նաեւ, թէ Արիստակէսի երկի տասներորդ կանոնի ո՛ր հատուածներն են հեղինակինը, որոնք ծաղկաբաղ արուած Գէորգ Լամբրոնացուց:

Գէորգ Սկեւոացու երկի մեկնութեան առիթով պէտք է ասել հետեւեալը. Տաթևացիին այստեղ նոյնպէս տալիս է բացատրութիւններ, որոնք նպատակ ունեն օգնելու գրիչներին ճիշդ հասկանալու Սկեւոացու երկը: Միւս կողմից՝ քանի որ հէնց Սկեւոացու վկայութեամբ նա օգտուել է Արիստակէսից⁷³, ուստի Տաթևացիին հարկ չի համարում նորից անդրադառնալ արդէն մեկնուած հարցերին. նա առանձնապէս չի խորանում նաեւ այն հատուածներին մեկնութեան մէջ, որոնք հանգամանօրէն եւ մատչելի են բացատրուած Սկեւոացու կողմից: Այսուհանդերձ, յաւելումներ եւ տեսական ընդհանրացումներ կատարում է:

Սկեւոացու երկու աշխատութիւնները՝ «Որատ վասն հանգամանաց հեգից, որ եւ պատճառն իսկ է գրադարձին յարուեստ գրչութեան», «Որատք վասն առօգանութեանց» Տաթևացիին քննում է մի մեկնութեան մէջ՝ վերածելով կէտերի: Եւ քանի որ խօսքը նաեւ գրերի մասին է, իսկ Տաթևացու կարծիքով գիր ունենալը մարդու ամենաարժէքաւոր մենաշնորհն է (այս միտքը նա բազմիցս ընդգծում է իր միւս աշխատութիւններում եւս), ուստի նա օգտագործում է առիթը մէկ անգամ եւս դրուատելու մարդուն եւ մարդկային բանականութիւնը: Դա է պատճառը, որ յատկապէս այս մեկնութեան մէջ շատ են այլաբանական բացատրութիւնները եւ բազմաթիւ խորհրդապաշտական գուգահեռները, որոնք նպատակ ունեն ընդգծելու իմաստաւորուած կապի գոյութիւնը մարդու ստեղծածի եւ նրա շրջապատող աշխարհի միջեւ:

Լեզուագիտական հարցադրումները ընդհանուր առմամբ հետեւեալն են. Տաթևացիին խօսում է ձայնի արտաբերմանը մասնակցող «ձայնական գործիքներ», գրանշանների արտաքին ձեւերի, գրերի գիւտի արժէքի մասին: Նա կապ է ստեղծում մի կողմից գծի, գրի, տառի, միւս կողմից՝ գրի, հեգի, բառի, «բանի», իմացման միջեւ:

Բերում է խօսքի մասերի դասակարգման թէ՛ իմաստասիրական եւ թէ՛ քերականական բաժանումները:

Ոսելով ե՛ի եւ է՛ի ուղղագրութեան մասին, Տաթևացիին առաջադրում է չսխալուելու, բառի ուղղագրութիւնը ճշդելու համար ստուգում անցկացնել հոլովման միջոցով:

Ամփոփում է տողադարձի մասին ասուածը, աւելացնելով, որ չի՛ կարելի տողադարձ անել ինչպէս միավանկ բառը, այդպէս էլ՝ միահեգ գիրը (է, ի, ո): Տողադարձի կանոնները շխախտելու համար ճիշդ է համարում կամ բացատրող նելը կամ խիտ գրելը, որ «բառն վճարի»⁷⁴:

Քանի որ աշխատութիւնը նախատեսուած էր գրիչներին գործնական օգնութիւն ցոյց տալու համար, ուստի Տաթևացիին անհրաժեշտ է համարում նաեւ բացատրութիւններ տալ լուսանցքը պահպանելու, էջի, տողի նշանակութեան վերաբերեալ: Ոսում է գլխագրի երեք տեսակներին (ծաղկագիր, երկաթագիր եւ հասարակ գլխագիր) մասին, որոնք ունեն «զանազան կերպարանք թուչնոց, մարդոյ, եգին եւ առիւծոյ»⁷⁵ եւ դրոշմում են չորս գոյնով. սեւ, կարմիր, կապոյտ եւ ոսկի:

⁷¹ Մատենադարան, ձեռագիր հ. 1115, էջ 203բ:
⁷² Նոյն տեղը:
⁷³ Սկեւոացիին նշում է, որ այն հարցերը (գրադարձ, առօգանութիւն, կէտագրութիւն), որոնց մասին Արիստակէսը իր երկի առաջաբանում միայն ակնարկել է, կարօտ են հանգամանալից բացատրութեան, որը եւ ինքը կատարում է լրացնելով «գրչութեան արուեստի» կանոնները:
⁷⁴ Մատենադարան, ձեռագիր հ. 1115, էջ 209ա:
⁷⁵ Մատենադարան, ձեռագիր հ. 1115, էջ 208ա:

Եւ վերջապէս, Տաթեւացու «Դարձեալ խրատ . . . յաղագս գրչութեան արուեստի» մեկնութիւնը, քանի որ վերաբերում է Սկեւացու «Պրատ գրչութեան . . .» փոքրածաւալ աշխատութեանը, ուստի ամենահամառօտն է, թէեւ ծաւալի փոքրութիւնը պայմանաւորուած է նաեւ նրանով, որ Սկեւացու այս երկը տեսական նորութիւն գրեթէ չի բերում ո՛չ Արիստակէսի եւ ո՛չ իր իսկ նախորդ երկու երկերի համեմատութեամբ⁷⁶, ուստի Տաթեւացին թուցիկ ցուցումներ է տալիս՝ խորհուրդ տալով օգտուել նաեւ Արիստակէսի գրքից, որովհետեւ այնտեղ այդ հարցերը աւելի ընդարձակ են քննուած. «նոյնպէս ի Բառագիրքն տեսն: Այսպէս եւ վասն դնելոյ յի յանուանս մարդկան կամ քաղաքաց ասացաւ յառաջագոյն տասն գլխով»⁷⁷:

Գնահատելով «գրչութեան արուեստը»՝ Տաթեւացին միանգամայն իրաւացիօրէն նրա տեսական հիմքերը տեսնում է «քերականական արուեստի» մէջ. «գրչութեան արուեստս նախ ի քերականէն ուսանիմք, երկրորդ՝ ի թարգմանչացն»⁷⁸: Եւ իսկապէս, գործնական նպատակներ հետապնդելով հանդերձ, «գրչութեան արուեստն» իր տեսութիւնը կառուցում է քերականների սահմանած կանոնների, օրէնքների հիման վրայ: Ահա, թէ ի՞նչ է գրում այդ մասին Գ. Զահուկեանը. «Գրչութեան արուեստի վերաբերեալ աշխատութիւնները բաւականաչափ տեղեկութիւններ են պարունակում քերականական զանազան հարցերի շուրջը: Քանի որ նրանց նպատակն էր գրիչներին սովորեցնել անխալ գրելու արուեստը, ուստի եւ նրանք չէին կարող բաւարարուել զուտ տեխնիկական եւ գործնական գիտելիքներ հաղորդելով, այլ պիտի տային անհրաժեշտ տեսական պատրաստութիւն՝ քերականութեան եւ ուղղագրութեան հարցերում կողմնորոշուելու համար, իհարկէ, որչափով թոյլ էր տալիս ժամանակի քերականական գիտելիքների մակարդակը»⁷⁹:

Այսպիսով, հիմնականում նպատակ ունենալով մատչելի դարձնել Արիստակէսի եւ Սկեւացու երկերը, Տաթեւացին անհրաժեշտ բացատրութիւններ է տալիս, միաժամանակ, բազմաթիւ յաւելումներ անում, որոնք համադրելով նրա միւս աշխատութիւններում տեղ գտած քերականական հարցադրումների հետ, կարելի է խօսել նրա որոշակիօրէն համակարգուած լեզուագիտական հայեացքների մասին:

Ինչպէս նշել ենք, բացի Արիստակէսի եւ Գեորգ Սկեւացու երկերի մեկնութիւններից Տաթեւացին լեզուի խնդիրներին վերաբերող առանձին ուրիշ աշխատութիւններ չունի: Իր մնացած երկերում լեզուական հարցերին նա անդրադառնում է ամենատարբեր առիթներով: Այդ հարցադրումները երբեմն կապում են նրա փիլիսոփայական, որոշ դէպքերում էլ՝ նոյնիսկ քաղաքական հայեացքների հետ:

Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Տաթեւացին լեզուի մասին առանձին վերնագրեր ունի «Գիրք Հարցմանց» («Վասն լեզուաց»), «Մեկնութիւն Սաղմոսաց» («Վասն լեզուի եւ գրչի»), «Գիրք Քարոզութեան» («Նորին քարոզ վասն լեզուի») աշխատութիւններում:

Տաթեւացու ինչպէս փիլիսոփայական, տնտեսագիտական, մանկավարժական, այնպէս էլ լեզուագիտական հայեացքներն աչքի են ընկնում հարցերի ընդգրկման բազմազանութեամբ. նա հարցադրումներ է անում արտասանական օրգանների, գրանշանների, շարժանշանների, ձեւաբանութեան, շարահիւստութեան, ոճաբանութեան վերաբերեալ:

Հետաքրքիր են Տաթեւացու ընդհանուր հարցադրումները, որոնք առնչւում են ո՛չ միայն հայերէնի իրողութիւններին, այլ եւ փորձում են բացատրել, թէ ինչ է լեզուն, ինչ՞ դեր ունի այն, ինչ՞ կապ

⁷⁶ Քանի որ մենք աշխատել ենք վեր հանել Տաթեւացու մեկնութիւնների արժէքը, ուստի նպատակադրմար չենք գտել ծաւալուն խօսել Արիստակէսի եւ Սկեւացու երկերի մասին, առաւել եւս, որ դրանք ըստ արժանուոյն գնահատուել են Գ. Զահուկեանի աշխատութիւնում (տե՛ս, էջ 240):
⁷⁷ Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 212բ:
⁷⁸ Նոյն տեղը, էջ 211բ:
⁷⁹ Գ. Զահուկեան, Քերականական եւ Ուղղագրական Աշխատութիւնները, էջ 230:

կայ լեզուի եւ մտածողութեան միջեւ: Յատկապէս այս ընդհանուր տեսական հարցերը աղերսում են նրա փիլիսոփայական հայեացքներին: Դեռ 1371 թ. ընդօրինակելով Բարթոլոմէոս Մարաղացու «Յաղագս Վեցօրեայ Արարչութեանն» աշխատութիւնը, Տաթեւացին հետազայում օգտագործում է այդ հեղինակի որոշ դրոյթները: Մասնաւորապէս, «Գիրք Հարցմանց»ում խօսելով մարդու ուղղահայեաց կեցուածքի մասին, որով պայմանաւորում է նաեւ խօսելու ընդունակութիւնը, Տաթեւացին իւրովի է մատուցում այդ տեսակետը՝ ամբողջացնելով մարդու եւ կենդանական աշխարհի տարբերութեան մասին իր բազմաթիւ այլ օրինակներով բերած փաստարկումները. «Մարդն իշխան եւ տէր է ամենայն կենդանեաց, վասն որոյ ամենայն կենդանիք գլխակոր են իբրեւ զծառայ եւ հնազանդ եւ մարդն ուղղածեւ իբրեւ ազատ եւ թագաւոր . . . զի այլ կենդանիք միայն հեշտանան կերակրով եւ ցանկութեամբ, իսկ մարդն հեշտանայ առաւել գեղեցկութեամբ զզալեացս, յորժամ տեսանէ աչօքն զերկին եւ զերկիր եւ ժողովէ զճարտար գիտութիւնս . . . Զի թէ կորագլուխ էր որպէս այլ կենդանիքն, իսպիսկ լինէր զզայութեանցն եւ պակասումն գիտութեան: . . . Ի վեր է գլուխն, զի լեզուն եւ ձեռն սպասաւորեցն բանի եւ գործոց: Զի թէ կորագլուխ էր մարդն եւ երկօրէին ձեռքն ի յերկիր հաստատեալ, ոչ կարէր գործել: Եւ պիտոյանայր լեզու երկայն եւ շրթունք ստուար, զի ժողովեացէ զկերակուր եւ յայնժամ ոչ կարէր սպասաւորել բանի որպէս այժմ»⁸⁰:

Տաթեւացին յաճախ է ձեռքը եւ լեզուն միասին իբրեւ օրինակ բերում, առաջինը գիտելով իբրեւ աշխարհի կառուցման գործիք, երկրորդը՝ մտքի. լեզուն մեզանում իր այդ գործաւորութեան, այսինքն իբրեւ գործիք մտքին սպասաւորելու համար՝ կոչւում է «բան». «Լեզու զբան կոչի ի մեզ, զի գործի է բանին»⁸¹: Նա նկատում է նաեւ, որ լեզու անուանմամբ նշանակում են մի քանի հասկացութիւններ. լեզու է կոչւում թէ՛ խօսքը (գրաւոր եւ բանաւոր), թէ՛ միտքը, թէ՛ լեզու անդամը եւ երբեմն էլ՝ քարոզողը. «Լեզուն է գործի եւ գրիչ իմաստութեան»⁸². «Լեզուն փոքր ինչ անդամ է եւ մեծամեծս բարբառի»⁸³. «Թարգման սրտին լեզուն է»⁸⁴. «Եւ գիտելի է, զի երբեմն լեզու կոչէ զքարոզողս»⁸⁵:

Տաթեւացին դեռ իր ժամանակին կռահելով մարդկային հասարակութեան եւ կենդանական աշխարհի հիմնական տարբերութիւնները, նշել է նաեւ լեզուի այն մեծ դերը, որ ունի այն հասարակութեան համար, որով եւ մարդը տարբերում է կենդանուց. «բանիւք խօսիմք ընդ միմեանս եւ զծածուկ գիտութիւն սրտիս՝ լեզուաւն յայտնեմք. զկարիսն ցուցանեմք. զպէտսն խնդրեմք. շինութիւն եւ աւեր, առ եւ տուր եւ այն ամենայն բանիւք կատարին. . . բանիւք եւ իմաստութեամբ որոշիմք յանբանից. տիրեմք, իշխեմք եւ թագաւորեմք, յերկրէ յերկիր ընթանամք, ի ծով անցանեմք, ի ճանապարհ գնամք եւ բանիւք զպիտոյս մեր հայթայթեմք»⁸⁶:

Տաթեւացին, միաժամանակ, լեզուն սահմանում է իբրեւ ժողովուրդներին միմեանցից բաժանող շատ էական յատկանիշ. «Եւ սահման կոչէ զլեզուս, որ բաժանէ ի միմեանց զազգս եւ զազինս, որպէս պարըսպով եւ նշանիւ սահման դնեն: . . . Եւ դարձեալ որպէս սահմանն գտեսակս ազգացն նշանակէ, նոյնպէս եւ լեզուն զիւրաքանչիւր ազգս ցուցանէ»⁸⁷:

Ոստելով աշխարհի ժողովուրդների լեզուների մասին, Տաթեւացին լեզուների առաջացման հարցին պատասխանում է՝ հետեւելով Վարդան Արեւելցուն եւ Յովհաննէս Երզնկացուն: Նա թուարկում է Արեւելցու նշած 72 լեզուները, առանձին թուարկում է գիր ունեցող ազգերին. «Իսկ որ դպրութիւն գիտէ եւ գրով վարի՝ բաժան ազգ է, այսինքն Եբրայեցիք, Քաղղէացիք, Ասորիք, Պարսիկք, Մարք, Հնդիկք, Փիւնիկեցիք, Հոմայեցիք, որ են Սպանացիք: Իսկ ոմանք զԱրաբացիս եւ

⁸⁰ Գր. Տաթեւացի, Գիրք Հարցմանց, էջ 232:
⁸¹ Գր. Տաթեւացի, Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 216:
⁸² Նոյն տեղը, էջ 225:
⁸³ Նոյն տեղը, էջ 226:
⁸⁴ Գր. Տաթեւացի, Մեկնութիւն Մատթէի, Մատենադարան, ձեռագիր Հ. 1264, էջ 106բ:
⁸⁵ Գր. Տաթեւացի, Մեկնութիւն Սաղմոսաց, Մատենադարան, ձեռագիր Հ. 5869, էջ 71բ:
⁸⁶ Գր. Տաթեւացի, Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 221:
⁸⁷ Գիրք Հարցմանց, էջ 298:

զՄակեղոնացիս Յեբրայեցիս համարին եւ կէսք՝ ոչ: Իսկ Վիրք եւ Աղուանք ո՛չ կատարեալ գրով, այլ առեալ ի Հայոց, որպէս Անորին եւ Իսմայէլացին յԵբրայեցեացն»⁸⁸:

Ինչպէս եւ Վարդան Արեւելցին, Տաթեւացին նոյնպէս Աստուածաշունչի «աշտարակաշինութեան պատուհասը» դիտարկում է իր օգտակար կողմով. նա համադրում է նաեւ Յովհաննէս Երզնկացու կարծիքն այս հարցում⁸⁹. «Ի միոյ խոշոր լեզուէ Քաղղէացոցն խառնակեցան եւ եղեն զանազանք . . . զի թէպէտ բաժանումն լեզուաց պատուհաս երեւի, այլ պիտանի է. նախ՝ ի գեղեցկութիւն լեզուի, զի որպէս գոյն առ գունով պայծառանայ եւ արուեստ առ արուեստ, նոյնպէս լեզու առ լեզու գեղեցկա՝ նայ ի խօսքն: Դարձեալ՝ պիտանի է ի ստուգաբանութիւնս բանի»⁹⁰:

Դարձեալ հետեւելով Արեւելցուն, նա սկզբնական լեզուն պահպանուած է համարում Եբրայեցի մօտ. «Եւ թէ ո՞րն է Աղամայ լեզուն: Ասեմք եթէ Քաղղէացին որ է Արամայն. զի մնաց առ Եբրեւ եւ ոչ խառնակեցաւ»⁹¹: Նա «Եբրեւ» բառը ստուգաբանում է իբրեւ առաջին լեզուն բերող. «Թէ զառաջին լեզուն նա եբրեւ»⁹²:

Որպէսզի խառնաշփոթութիւն չառաջանայ, ըստ Տաթեւացու, մարդն անուններ է դնում բոլոր իրերին եւ երեւոյթներին: Այստեղ նա դիմում է Դաւթին, որն ընդունում է ստուգաբանութեան երեք տեսակ. ըստ իրի, արուեստի եւ ձայնի⁹³: Այս բաժանումը Տաթեւացին որոշ փոփոխութիւններ է ենթարկում եւ օգտագործում ո՛չ թէ ստուգաբանութիւնը, այլ մարդու կողմից անուններ դնելու սկզբունքները բնորոշելու համար: Դաւթի համեմատութեամբ նա զգալիորէն ընդարձակում է նաեւ օրինակների ցանկը: Մարդը անուններ է տալիս «յիրէն եւ ի գործոյն եւ ի ձայնէն: Յիրէն՝ որպէս սափոր, երկին, երկիր, զազան, անասուն: Ի գործոյն՝ որպէս սողուն ի սողալոյն, ի շողոքորթելոյն՝ շունն, ի հեղոյն՝ եզն, յառնելոյն՝ առիւծ: Եւ կայ ի տուն՝ կատուն եւ խոզոզն՝ խոզ: Եւ ի ձայնէն՝ որպէս ճնճողուկ, ծիծառն, խօսող, ագռաւ» եւ այլն⁹⁴: Բացատրութիւնը ամբողջական դարձնելու համար նա նաեւ ստուգաբանում է այդ բառերը. զազանը՝ «զզող եւ պատառօղ», «անասունք, զի անխօսուն են»⁹⁵ եւ այլն:

Իսկ ընդհանրապէս անուններ տալու անհրաժեշտութիւնը նա հետեւեալ կերպ է պատճառաբանում. նախ անունը միայն բաւական է, որպէսզի մարդը իր մտքում բոլոր առարկաներից տարբերակի խօսքի առարկան. «Հարկաւոր է անուն ամենայն իրի. նախ զի անուամբն գոյանայ իրն ի միտս մեր»⁹⁶, եւ բացի այդ, անունն ի տարբերութիւն սահմանման, կարճառօտ տեղեկութիւն է տալիս խօսքի առարկայի վերաբերեալ. «Անունն սահման է կարճառօտ՝ յայտնիչ բնութեան ենթակայ իրին»⁹⁷, մինչդեռ սահմանումը տալիս է նաեւ խօսքի առարկայի էական յատկանիշների բնութագրումը. «ամենայն ինչ անուամբ կամ սահմանաւ ճանաչի, այլ սահմանաւ՝ առաւել քան անուամբ: Որպէս յորժամ ասեմք. զի՞նչ է մարդ. յորժամ զանունն պատասխանեմք, ոչ գիտեմք թէ ո՞ր մարդ է. կենդանի է, թէ գրեալ: Եւ յորժամ զսահմանն ասեմք՝ կենդանի, բանաւոր, մահկանացու, մտաց եւ հանճարոյ ընդունակ, ահա առաւել յատկացաւ մարդն»⁹⁸:

Տաթեւացին թէեւ այստեղ ընդգծում է սահմանման առաւելութիւնը, սակայն չի թերագնահատում նաեւ անուան դերը: «Գիրք Հարցմանց»ում նա լրացնում է այս բնորոշումը հետեւեալ կերպ. «զինչ էն՝ անուամբ կամ սահմանաւ ճանաչի եւ անունն յայտնի է ըստ ինքեան»⁹⁹:

⁸⁸ Նոյն տեղը, էջ 299:
⁸⁹ Հմմտ. Գ. Ջահուկեանի նշուած աշխատութեան, էջ 250, 264-ի հետ:
⁹⁰ Գիրք Հարցմանց, էջ 297:
⁹¹ Նոյն տեղը, էջ 298:
⁹² Գիրք Հարցմանց, էջ 299:
⁹³ Տե՛ս, Գ. Ջահուկեան, նշուած աշխատութիւնը, էջ 133:
⁹⁴ Գիրք Հարցմանց, էջ 220:
⁹⁵ Նոյն տեղը, էջ 216:
⁹⁶ Նոյն տեղը, էջ 219:
⁹⁷ Նոյն տեղը:
⁹⁸ Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 165: Անուան եւ սահմանման նոյնատիպ բնորոշում հետագայում հանդիպում ենք Դաւիթ Ալեքսանդր «Մեկնութիւն Քերականի» աշխատութեան մէջ (Տե՛ս, Դաւիթ Ալեքսանդր, Մեկնութիւն Քերականի, էջ 97):
⁹⁹ Գիրք Հարցմանց, էջ 140:

Ինչպէս եւ Յովհաննէս Երզնկացին, նա նոյնպէս ընդունում է մարդու անուանադիր (օնոմաթետոս) լինելը¹⁰⁰. «զի ցուցցէ անձնիշխան գոլ զմարդն, վասն որոյ հրամայէ նմա զի գոր ինչ եւ կամեացի անուն դնիցէ»¹⁰¹: Սակայն, ինչպէս յայտնի է, ըստ Երզնկացու, անունները դրուում են ըստ «բնութեան»: Տաթեւացին չի համաձայնում այս տեսակետի հետ. նրա կարծիքով «անունն ոչ է բնութեամբ, որ ոչ փոփոխի, այլ գրութեամբ է»¹⁰²:

Տաթեւացին որոշակիորէն առանձնացնում է մի շարք երեւոյթներ, որոնք մարդու կեանքում առանձնայատուկ նշանակութիւն ունեն. դրանց մասին նա համեմատաբար ընդարձակ է խօսում եւ յաճախ է շեշտում դրանց դերը: Այդպիսի երեւոյթներէն է գիր ունենալը: Նա բազմիցս պատասխանում է այն հարցին, «թէ վասն է՞ր մարդու կարօտացաւ գրոյ»: Առաջին հերթին նա նշում է, որ գիրը իմացութիւն ձեռք բերելու միջոց է. «գրով եւ բանիւ, այսինքն ընթերցմամբ եւ լսելով ժողովեմք զգիտութիւն: . . . Ապա յայտ է, զի գիրն ներգործական է իմացութեանց»¹⁰³: Մտքի վերացարկմանը մարդը հասնում է թէ՛ բանաւոր եւ թէ՛ գրաւոր (տուեալ դէպքում գրի) խօսքի միջոցով. «նիւթեղէն միտք՝ միջնորդութեամբ նիւթոյ հասանէ աննիւթն»¹⁰⁴: Նա ո՛չ միայն նշում է գիր ունենալու օգտակարութիւնը («ի գրոյն յառաջ գայ բան եւ խօսք ի յօգուտ մարդկան»¹⁰⁵), այլ եւ ընդգծում նրա հաղորդակցման եւ պայքարի միջոց լինելը. «ի գատ, ի հեռիքն եւ ի յատեւիքն գրով խօսիմք»¹⁰⁶:

Գրի ամենամեծ դերը պատմութեան հաստատումն է: Բանաւոր խօսքն անցնում է «բանն անցանի եւ գիրն մնայ»¹⁰⁷: Նիւթական հետքեր չի թողնում նաեւ ժամանակը. «անցեալ ժամանակն կորեաւ եւ հանդերձեալն չէ ի միջի եւ ներկայն փութով անցանի»¹⁰⁸: Այս դէպքում գրաւոր յուշարձանները դառնում են մարդկութեան յիշողութեան փրկութեան միջոց. «Վասն մոռացման գրեմք»¹⁰⁹:

Տաթեւացին նշում է, որ լեզուի մէջ կատարուող փոփոխութիւնների պատճառներից մէկը՝ ժամանակն է. «Նախ ի ժամանակէն զի փոփոխի»¹¹⁰:

Նա նոյնիսկ գրելաձեւերի (ձախից աջ կամ աջից ձախ) տարբերութեանն է վերագրում ժողովուրդների նկարագրի որոշ առանձնայատուկութիւններ. «Վասն է՞ր այլ ազգիք առ ներս ի մեզ գրեն եւ քրիստոնեայք արտաքս: Վասն կրկին իրաց: Նախ այլ ազգիք ի ներս գրեն, որպէս թէ զիմաստութիւն աշխարհիս ի մեզ բերեմք: Եւ մեք արտաքս, որպէս թէ զիմաստութիւն հոգւոյն ունիմք ի մեզ եւ այլոց ուսուցանեմք»¹¹¹:

Գիր եւ լեզու գուգահեռով նա խօսում է գրաւոր եւ բանաւոր խօսքի տարբերութիւնների եւ ընդհանրութիւնների մասին: Առաջինի համար միջոց է համարում ձեռքը, երկրորդի համար՝ լեզուն,

¹⁰⁰ Գ. Ջահուկեան, Քերականական եւ Ուղղագրական Աշխատութիւնները, էջ 263:
¹⁰¹ Գիրք Հարցմանց, էջ 219:
¹⁰² Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 682:
¹⁰³ Գիրք Հարցմանց, էջ 143:
¹⁰⁴ Գիրք Հարցմանց, էջ 131:
¹⁰⁵ Մեկնութիւն Մատթէի, էջ 24բ:
¹⁰⁶ Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 80ա:
¹⁰⁷ Նոյն տեղը:
¹⁰⁸ Նոյն տեղը, էջ 67բ:
¹⁰⁹ Նոյն տեղը, 80ա:
¹¹⁰ Գիրք Հարցմանց, էջ 742: Այստեղ մենք ուզում ենք խօսել Տաթեւացու մի տեսակետի մասին: Ուզող հետեւեալին է վերաբերում է. Աղայեանն իր «Հայ կեղուաբանութեան Պատմութիւն» աշխատութեան մէջ խօսելով Տաթեւացու մասին, հետեւեալն է նշում, որ Տաթեւացին ճիշդ է տարբերում լեզուն իբրեւ օրգան եւ իբրեւ խօսելը, սակայն սխալ է համարում Տաթեւացու այն կարծիքը, թէ «լեզուն ո՛չ ոք կարէ փոխել. ո՛չ բունաւոր, ո՛չ իշխան, բայց միայն Աստուած, որ եղ զաա» (է. Աղայեան, Հայ կեղուաբանութեան Պատմութիւն, հ. 1, Երեւան, 1958, էջ 77): Մինչդեռ մեր կարծիքով Տաթեւացին այդ հատուածում խօսում է ո՛չ թէ լեզուի փոփոխութիւնների, այլ նրա սահմանների մասին, որ տուեալ դէպքում նոյնանում է լեզուների զանազան տեսակների հետ. «Եւ դարձեալ զի անփոփոխելի է սահմանն, որպէս սահմանն մարդոյն եւ ձիոյն եւ այլոցն, նմանապէս եւ զայս սահման լեզուի ո՛չ ոք կարէ փոփոխել. ո՛չ բունաւոր եւ ո՛չ իշխան, բայց միայն Աստուած, որ եղ զաա: Եւ յորժամ փոփոխի այս, այսինքն ի հանդերձեալն, յայնժամ ի լեզուս հրեշտակաց խօսիցիմք: Եւ ո՛չ որպէս ասեն ոմանք թէ՛ ի լեզուս Աղամայ» (Գիրք Հարցմանց, էջ 298):
¹¹¹ Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 80ա:

դրանք կոչելով «արտաքոյ կրկին գրիչ»¹¹²: Երկուսի համար ընդհանուր է այն, որ ծառայում են: «Արտաբերեալ բանին» տարբերութիւնը իրականացման միջոցները մէջ է: Առաջինը «ի քարտէջ եւ ի նիւթ գրէ» եւ «աչօք ուսցի», երկրորդը՝ «ի յօղս եւ ի լսելիս մարդկան» եւ «լսել եօք ուսցի»¹¹⁵:

Նա երբեմն բանաւոր եւ գրաւոր խօսքը ընդհանրացնում է «բարբառ» անուանմամբ. «Բարբառն երբեմն ականջովն լսի, երբեմն աչօք տեսանի գրեալ ի քարտիզի»¹¹⁴, սակայն բազմաթիւ այլ օրինակներում նկատելի է, որ դրանով հիմնականում նկատի ունի բանաւոր խօսքը. «Բարբառն այն է, որ խօսքն ի սրտէն յառաջ գայ ի լեզուն եւ անտի յականջս մեր մտանէ»¹¹⁵: Կամ՝ «բան եւ ձայն միաւորեալ բարբառ կոչի»¹¹⁶:

Գրաւոր խօսքը նա բնութագրում է հետեւեալ կերպ. «բանս մեր անմարմին է՝ զի ոչ տեսանի եւ ոչ շօշափի եւ գրեալն ի քարտիզի լինի տեսանելի եւ շօշափելի»¹¹⁷: Գրաւոր խօսքում միտքն ստանում է նիւթական ձեւաւորում. «Բանն գրեալ մի լինի ընդ գրոյն անբաժանելի, զի ասեմք զգիրն բան եւ զբանն գիր. . . . յերից է գոյացեալ գիր անշփոթելի միութեամբ, այսինքն բան, նիւթ եւ ձեւն»¹¹⁸:

Այսպիսով, ըստ Տաթեւացու, միտքն իրականանում է բանաւոր կամ գրաւոր խօսքի միջոցով, ընդ որում նա երբեմն նոյնացնում է միտքը բանաւոր խօսքի («բարբառն մի եւ նոյն բանն է, որ ի սրտին էր անմարմին եւ լեզուան եղեւ բարբառ եւ լսելի մեզ»¹¹⁹), երբեմն էլ՝ գրաւորի հետ. «ասեմք զգիրն բան եւ զբանն գիր»: Ըստ ծագման առաջնութիւնը իհարկէ պատկանում է բանաւոր խօսքին. ձեռքն է, որ հետեւում է մտքին. «Բանս մեր ունի բ ծնօղ. մին զմիտս եւ մին զձեռս»¹²⁰. «զբանն խորհեալ ի սրտի արտաքին օղովն ի լեզուն դնէ եւ խօսի եւ անանձնական օղովն ի ձեռի տանի եւ գրէ»¹²¹. «բանս մեր՝ մտաց ծնանի եւ ապա յետոյ ի քարտիզի տպաւորի»¹²²:

Նա նշում է նաեւ գրաւոր համեմատութեամբ բանաւոր խօսքի մատչելիութիւնը ժողովուրդի համար. «Գիրն սակաւուց է գիտելի, իսկ բանն՝ բազմաց»¹²³: Իսկ թէ ինչո՞ւ, այնուամենայնիւ, անհրաժեշտ են գրաւոր յուշարձանները, նա պատասխանում է՝ հոգածութիւն հանդէս բերելով դարձեալ ապագայ սերունդներին նկատմամբ. «վասն որդոց եւ զաւակաց զկնի եկելոց»¹²⁴:

Տաթեւացին բաւական մանրամասն է վերլուծել նաեւ մտածողութեան եւ լեզուի միջեւ եղած կապը: Վերլուծելով մտածողութեան բանախօսական կողմը, նա այն կարծիքն է յայտնում, որ մտածողութիւնն իրականանում է գլխուղեղի երեք հատուածներով¹²⁵. զգայականը՝ ճակատի առաջին փորուածքով, իմացականը՝ միջին, յիշողականը՝ վերջին. «Առաւել մասն գլխոյն է տեղիք եւ գործիք մտացն, որ բաժանի նախ յերեքին մասուս. ի հասարակ զգայութիւնս, յիմացականն եւ ի յիշողականն: Եւ է հասարակ զգայութիւն յառաջին փորուածս ճակատին եւ իմացականն ի միջին փորուածն եւ յիշողականն ի վերջին»¹²⁶:

112 Նոյն տեղը:
113 Նոյն տեղը:
114 Գիրք Քարոզութեան, Ձմերան, էջ 104:
115 Նոյն տեղը:
116 Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 36բ:
117 Գիրք Քարոզութեան, Ձմերան, էջ 35:
118 Գիրք Քարոզութեան, Ձմերան, էջ 35:
119 Նոյն տեղը, էջ 103:
120 Նոյն տեղը, էջ 35:
121 Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 80ա:
122 Գիրք Քարոզութեան, Ձմերան, էջ 35:
123 Մեկնութիւն Մատթէի, էջ 20ա-20բ:
124 Նոյն տեղը:
125 Մի կողմ թող նելով այն հարցը, թէ այս տեսակէտի մանրամասնելը որքանով են գիտական, պէտք է նշել իհարկէ, որ նման հարցադրումն արդէն իսկ ուշագրաւ է:
126 Գիրք Քարոզութեան, Ձմերան, էջ 189:

Տարբերելով մտածողութեան այս երեք աստիճանները, Տաթեւացին առաջինին վերագրում է զգայութիւնը, երեւակայութիւնը եւ կարծիքը, երկրորդին՝ տրամախոհութիւնը, երրորդին՝ յիշողութիւնը. դրանք նա անուանում է «գորութիւնք մտացն»: Սրանք միմեանց յարաբերում են աստիճանական բարդացմամբ. առաջինը՝ «որպէս յարտաքին դիւանս թագաւորաց դիւանադպիրք մի քան զմի առաւել հարցանեն եւ գրեն ի թղթի», երկրորդը՝ «է առաւել խորհրդական որպէս վեզիր թագաւորին եւ բանական լուսով տեսանէ զամենայն ուղղապէս եւ իմանայ եւ խորհի եւ ընտրէ եւ այս է մեծագոյն ճանաչումն, քան զամենայն որ ասացաւ յառաջագոյն, զի սովաւ ոչ միայն գիտէ զներկայն, այլ եւ զհանդերձեալն»¹²⁷, երրորդը մտքի եւ յիշողութեան պահեստն է, «զի ի նա մտանէ ամենայն իրաց գիտութիւն եւ ժողովի. եւ այսպէս վերջին փորուածն կոչի միտք եւ յիշողութիւն: Զի ըստ որում զամենայն ինչ մուծանէ եւ հաւաքէ՝ միտք կոչի եւ ըստ որում վերստին յիշէ եւ յարտաքս բերէ՝ յիշողութիւն անուանի»¹²⁸: Իսկ թէ ինչպէս է ճակատի այս երրորդ փորուածքը ամբարում միտքը եւ յիշողութիւնը, բացատրում է հետեւեալ կերպ. նա տարբերում է երկու ականջ՝ արտաքին եւ ներքին: Առաջինը ականջ օրգանն է, որ ունի երկու դուռ. «ըստ միմեանս մտանէ եւ ընդ միւսն ելանէ բանն եւ ոչ պահէ»¹²⁹: Ներքին ականջն ունի մէկ դուռ. «զսողութիւն եւ յորժամ լսէ, տանի ի միտս եւ ամբարէ, գոր յիշողութիւն կոչեմք եւ միտք»¹³⁰:

Տաթեւացին հանգամանօրէն վերլուծում է նաեւ իրականութեան, մտքի եւ լեզուի միջեւ եղած կապը, ընդ որում, նա ներկայացնում է դա մի կողմից՝ իբրեւ իրականութեան եւ մտքի, միւս կողմից՝ մտքի եւ լեզուի միջեւ եղած կապ: Գրքի որ ըստ նրա մտքի աղբիւրը իրականութիւնն է, ուստի նա հարցականի տակ չի դնում այն, ինչ չկայ մարդու գիտելիքների մէջ. իրականութիւնը անընդհատ կարող է նոր փաստեր առաջադրել եւ այդ դէպքում՝ «զի զոր ինչ վեր է քան զմիտս մեր՝ ի տեսանելն զայնպիսի գործն՝ շարժիմք մտօք ի զարմացումն»¹³¹ (որն, անշուշտ, կարող է ստանալ իր լեզուական արտացոլումը): Տաթեւացին բերում է բազմաթիւ օրինակներ, որտեղ նկարագրում է իրականութեան, մտքի, լեզուի փոխկապուածութիւնը: Յատկապէս հետաքրքիր է այսպէս կոչուած, «հայելու տեսութիւնը» (անուանումը առաջադրում ենք մենք՝ Ս. Գ.), ըստ որի միտքը նմանեցնում է հայելու եւ զուգահեռներ է անցկացնում նրանց միջեւ. իրականութեան արտացոլման առումով:

1. Ինչպէս հայելին է ճիշդ ցոյց տալիս իրերը, այդպէս էլ միտքն է ճիշդ արտացոլում իրականութիւնը. «որպէս հայելին մաքուր տպաւորէ յինքն զկերպարան իրաց զինչ եւ իցէ, նոյնպէս եւ միտքն պարզ տպաւորէ յինքն զամենայն իմացուածս»¹³²:

2. Հայելին արտացոլում է ամէն ինչ, սակայն ոչ մի պատկեր նրա մէջ չի խառնում. այդպէս եւ միտքն արտացոլելով բազմազան իրականութիւնը, ոչինչ չի խառնում. «Որպէս հայելին կարէ ընդունիլ յինքեան զամենայն կերպարանս յոր եւ դիպի եւ ոչ շատանայ եւ ոչ ի միմեանս խառնակէ, այսպէս եւ միտն ընդունի զբազմազան եւ ազգի ազգի գիտութիւն եւ զամենայնս ամբողջաբար ունակացուցանէ յինքեան, զի ոչ խառնակիս ի միմեանս բանքն»¹³³:

Իսկ մտածողութիւն եւ լեզու յարաբերութիւնը ներկայացնելիս, նկատելի է, որ Տաթեւացին հիմնականում առաջնութիւնը տալիս է մտածողութեանը («Աղբիւր է նոյն ինքն բանական միտքն, որ միշտ եւ հանապազ բղխէ զբան եւ զիմաստութիւն»¹³⁴. «Արգանդ մտացն ծնանի զբանս եւ լեզուն

127 Նոյն տեղը, էջ 190:
128 Նոյն տեղը:
129 Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 448:
130 Նոյն տեղը:
131 Գիրք Քարոզութեան, Ձմերան, էջ 273:
132 Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 444:
133 Նոյն տեղը: Տաթեւացին այս զուգահեռները շարունակում է բազմաթիւ կէտերով, սակայն մնացած հատուածներում, խօսքն արդէն աշխարհընկալման ենթակայական կողմին է վերաբերում՝ մտաւոր զարգացմանը համապատասխան. այսպէս օրինակ՝ «որպէս հայելին ըստ իւրեան չափուն մեծ եւ փոքր ցուցանէ զիրն, այսպէս եւ միտք ըստ չափոյ իմացուածոյ իւրեանց առաւել ուն զիմանալիս եւ նուազին» (նոյն տեղը):
134 Գիրք Քարոզութեան, Ձմերան, էջ 233:

կերակրել»¹⁵⁵ եւ այլն), երբեմն, սակայն, նոյնացնում է դրանք, շատ քիչ դէպքերում նշում է նաեւ լեզուի ինքնուրոյնութիւնը:

Առաջին դէպքում միտքը դիտելով իբրեւ լեզուի աղբիւր («միտքն է աղբիւր լեզուին»¹⁵⁶), նա նշում է, որ «բանը» (նախադասութիւն, դատողութիւն) նախ ծնւում է մտքում, ապա՝ արտաբերում լեզուով. «Բանն ի մտացն ծնանի եւ գայ ի սիրտն եւ ապա ի լեզուն»¹⁵⁷: Եւ քանի որ նրա կողմից նախադասութեան եւ դատողութեան իմաստները տրուում են միեւնոյն «բան» տերմինով եւ յստակօրէն տարբերակուած չեն նաեւ լեզուն եւ խօսքը, ուստի նա երբեմն այդ հասկացութիւնները օգտագործում է մէկը միւսի փոխարէն. մի դէպքում՝ «խօսքն է թարգման մտաց եւ բանի (դատողութեան - Ս. Գ.). . . խօսքն որ է արտաբերեալ բան»¹⁵⁸, միւս դէպքում՝ «բանն է (նախադասութիւնը - Ս. Գ.) որով խօսիմք»¹⁵⁹: Եթէ առաջին օրինակում խօսքն է մտքի արտաբերման միջոց, ապա հետեւեալ բնորոշման մէջ՝ լեզուն. «Դարձեալ լեզուն մի է յամենայն անդամս եւ նա ի մէջ բերանոյ է ամրացեալ եւ նա խօսի եւ յառաջ բերէ գնորդին իմաստն»¹⁶⁰ (այստեղ էլ լեզու օրգանի եւ լեզուի իբրեւ խօսքի նոյնացում կայ):

Երկրորդ դէպքում Տաթևացիի մտածողութեան եւ լեզուի կապն այնքան միահիւստուած է տեսնում, որ երբեմն մտածողութեամբ պայմանաւորուած երեւոյթները վերագրում է լեզուին: Նա տարբերում է լեզուի բարի եւ չար դերեր. «Եւ լեզուն ի գանազան ազգս խօսի կամ զբարի կամ զչար»¹⁶¹: Առաջին դէպքում լեզուից առաջ են գալիս բոլոր բարութիւնները՝ հոգեւոր եւ մարմնաւոր. «Եւ բազում բարութիւն գայ ի լեզուէն յառաջ՝ հոգեւոր եւ մարմնաւոր»¹⁶²: Սա մեծապէս պայմանաւորուած է ըստ նրա այն հանգամանքով, որ միտքն է առաջնորդում լեզուին. «Իմաստութիւն է, որ նախ միտքն ընթանայ ի բանն եւ ապա լեզուն հետեւի, որպէս նախ ճրագն ընթանայ եւ ապա մարդն, յայնժամ ոչ թիւրի»¹⁶³: Երկրորդ դէպքում տեղի է ունենում ճիշդ հակառակը. «Թէ լեզուն յառաջ է քան զմիտսն՝ նա տգիտութեամբ սխալի եւ որոգայթի»¹⁶⁴: Սրանից ծնւում են լեզուի չար գործառութիւնները. սուտը, դատարկաբանութիւնը, խաբէութիւնը, բամբասանքը, յիշոցները, մատնութիւնը եւ այլն, որոնք աւելի քան մէկ այլ երեւոյթ դատապարտելի են. «բայց լեզուն եւ բերանն չար խօսիւք՝ զազիր է եւ զարշելի քան զամենայն ինչ որ կայ յաշխարհի. անլուսայ ձեռք ուտել ոչ ապականէ, այլ ամենայն չար որ ելանէ ի բերանոյ՝ այն ապականէ զմարդն»¹⁶⁵: Նա բերում է նաեւ այլոց հաստատումը. «Որպէս ասէ Առաքեալն. ամենայն բնութիւնք զազանաց եւ անասնոց հնազանդեալ են մարդկան, այլ զչար լեզուն՝ ոչ ոք կարէ հնազանդել»¹⁶⁶: Այս ամէնի պատճառը ըստ նրա նաեւ լեզուի դիրքն է. «Լեզուն դիւրաւ սահի եւ սխալի . . . մեծամեծս բարբառի . . . ոչ երկնչի յամրոցի ի բերանոյն միջոցի գլուխ»¹⁶⁷: Ուստի նա խորհուրդ է տալիս «որպէս արծաթ եօթն անգամ յըստակել եւ ապա խօսիլ: Յայնժամ մարդիկ հաւանին ի գեղեցիկ խօսան: Ապա թէ զայսպիսի ընտրութիւնս ոչ ստանայ, որ գինչ ի բերան գայ փութապէս խօսի, ամենայն վնաս եւ որոգայթ լինի»¹⁶⁸:

Այս դատողութիւններում մտածողութեան եւ լեզուի նոյնացմամբ հանդերձ, առաջին հերթին գնահատելի է իհարկէ նրանց միջեւ առկայ կապի ընդգծումը: Եւ երկրորդ, նա թէեւ բացասական

¹⁵⁵ Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 276:
¹⁵⁶ Նոյն տեղը, էջ 340:
¹⁵⁷ Գիրք Քարոզութեան, Ձմերան, էջ 103:
¹⁵⁸ Գ. Տաթևացի, Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, Կ. Պոլիս, 1746, էջ 135:
¹⁵⁹ Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 422:
¹⁶⁰ Նոյն տեղը:
¹⁶¹ Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 80ա:
¹⁶² Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 220:
¹⁶³ Նոյն տեղը, էջ 406:
¹⁶⁴ Նոյն տեղը:
¹⁶⁵ Նոյն տեղը, էջ 225:
¹⁶⁶ Նոյն տեղը, էջ 220:
¹⁶⁷ Նոյն տեղը:
¹⁶⁸ Նոյն տեղը:

առումով, այնուամենայնիւ, նշում է նաեւ լեզուի ինքնուրոյնութիւնը («ապա թէ լեզուն յառաջ է քան զմիտսն»):

Այսպիսով, թէեւ Տաթևացու հարցադրումներում երբեմն նոյնանում են տրամաբանական եւ քերականական տերմինները¹⁴⁹, մտածողութիւնը եւ լեզուն, սակայն, այդուհանդերձ, լեզուն նա դիտում է նախ եւ առաջ իբրեւ մտածողութեան միջոց: Այս միտքը նա հաստատում է, ինչպէս տեսանք, բազմաթիւ օրինակներով: Այդ բոլոր ձեւակերպումների առատութիւնն ի վերջոյ հեղինակին հնարաւորութիւն է ընձեռել հասնելու մտածողութեան եւ լեզուի կապի այնպիսի յստակ բնորոշման, ինչպիսիսն էր «արգանդ մտացն ծնանի զբանս եւ լեզուն կերակրէ» բանաձեւումը:

Գ. ԳՐԱ-ՆՇԱՆՆԵՐԻՆ, ՇԱՐԺԱ-ՆՇԱՆՆԵՐԻՆ ԵՒ ՀՆԶԻՒՆԱԲԱՆՈՒԹԵԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Տաթևացու լեզուագիտական ընդհանուր հայեացքները քննելիս, մենք նշեցինք, որ նա յստակօրէն տարբերում է գրաւոր եւ բանաւոր խօսքը, որոնց բնութագրման մէջ առկայ է նաեւ գրամիջոցների եւ հնչամիջոցների զանազանում:

Գրի եւ տառի յարաբերութիւնը նա ներկայացնում է երկու կերպ. մի դէպքում նա տառը դիտում է որպէս գրի անուանում. «Գիրն որ է գծեալ, տառն որ է կոչումն գրոյ, որպէս ասեմք՝ այլ»¹⁵⁰: Երկրորդ բնութագրման մէջ նա ցոյց է տալիս աստիճանական անցումը չձեւաւորուած գրից (ըստ նրա՝ գծից) մինչեւ ձեւաւորումը (գիրը) եւ անուանումը (տառ). «Ոմանք ասեն զտառն որպէս հոգի եւ զգիրն որպէս մարմին: Այլ ես ասեմ. գիծ է՝ յորժամ ծայր գրչին գծի ի քարտէսն, եւ գիր՝ յորժամ քերէ զմակերեւոյթն, եւ տառ՝ յորժամ բոլորգիրն ձեւանայ»¹⁵¹:

Նա համաձայնուած է թրակացու երկի մեկնիչների այն տեսակէտի հետ, ըստ որի տառը խօսքի համար նոյնն է, ինչ տարրը՝ աշխարհի. «Եւ տառ կոչի որպէս տարր աշխարհի: Նախ զի ամենայն բան եւ գործ եւ անուն եւ էութիւն տարրեալ ունի: Երկրորդ, որպէս ի չորից տարրից խառնին եւ կազմին մարմինք, այսպէս տառք՝ եւ ձայնաւորք եւ անձայնք, թաւ եւ սոսկ խառնին եւ կազմին զբանս եւ զխօսս»¹⁵²:

Տաթևացիի խօսելով գրանշանների արտաքին ձեւաւորման մասին, նշում է, որ դրանք կարող են լինել բազմապիսի. «ունի գիրն զձեւ երկայն եւ կարճ, ուղիղ եւ թիւր, բոլոր, եռանկիւնի, քառանկիւնի եւ այլն»¹⁵³, ընդ որում նա նշում է, որ սրանց համար գործում է չափման մի միաւոր, որ յատուկ չէ առանձին-առանձին ոչ գծին, ոչ մակերեւոյթին եւ ոչ մարմնին. «Դարձեալ ունի գանյայտ նիչն, որ ոչ խոր է եւ ոչ երկայն եւ ոչ լայն. իսկ գիծն է երկայն միայն, իսկ մակերեւոյթն՝ լայն, իսկ մարմինն՝ որպէս խորութիւն եւ այսպէս յայտնէ թէ զամենայն ձեւ ունի գիրն»¹⁵⁴:

Եթէ գրերին յատուկ է նախ եւ անձնջ տեսողութեան համար ընկալելի լինելը, ապա հնչիւնները ընկալւում են լսողութեան միջոցով. «Ի լսելիս մարդկան»¹⁵⁵: Տաթևացիի այստեղ հիմնաւոր գիտելիքներ է հաղորդում հնչիւնների արտաբերման համար կարեւոր պայման հանդիսացող օդի եւ ձայնի, վերջինիս դերի, ֆիզիկական յատկութիւնների, արտասանական օրգանների վերաբերեալ:

¹⁴⁹ Այդ մասին Գ. Ջահուկեանը գրում է. «Գրիգոր Տաթևացու համար քերականութիւնը եւ տրամաբանութիւնը սերտօրէն միահիւստուած են, քերականական հասկացութիւնները նոյնանում տրամաբանականի հետ»: Դրա պատճառն, ըստ հեղինակի, այն է, որ «քերականութեան վերաբերեալ նրա հայեացքների հիմքում ընկած են Արիստոտելի «Մտորդութիւնք» եւ «Յաղագս Մեկնութեան» աշխատութիւնների այն տեղերը, որոնց տերմինները համընկնում են քերականական տերմինների հետ, (Տե՛ս, Գ. Ջահուկեան, նշուած աշխատութիւնը, էջ 293):
¹⁵⁰ Գիրք Հարցմանց, էջ 177:
¹⁵¹ Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 205բ:
¹⁵² Նոյն տեղը:
¹⁵³ Նոյն տեղը, էջ 206ա:
¹⁵⁴ Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 206ա:
¹⁵⁵ Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 80ա:

Հաշուի առնելով օդի խաղացած կարեւոր դերը հնչիւնի արտաբերման մէջ, Տաթեւացին «ձայնա- կան» (այսինքն՝ արտասանական) գործիքների շարքում նշում է նաեւ օդը. «Նօթն է ձայնական գործիք, այսինքն թոք, խոչափող, մակալեղու, բերան, լեզու, ատամուկ, շրթուկ եւ ութերորդ աւել»¹⁵⁶: Օդի միջոցով ձայնը հասնում է լսողական օրգաններին. «լեզուաւ յօդս բախեալ հասանէ մինչեւ ի լսելիս եւ անը ձայնն արտաբերոյ մնացեալ եւ բանն անմարմին ի միտս լսողացն նստեալ»¹⁵⁷: Հետաքրքիր է, որ նա կուսի է նաեւ, որ հեռավորութեան վրայ ձայնը հասնում է դարձեալ օդի միջոցով. «Բացակացեալն ընդ աղօտ լսէ ոչ զձայն բերանոյն, այլ զձայն բախման օդոյն»¹⁵⁸:

Նա զգուշացնում է նաեւ չզփոթել ձայնը եւ խօսքը, որովհետեւ իւրաքանչիւր արձակուած ձայն չի կարող խօսք համարուել, քանի դեռ այն մտքի արտաբերման արդիւնք չէ. «զի բանն անմարմին ծնունդ է մտաց եւ ձայնն է շարժումն օդոյ ի ձայնական գործեաց ի յօդս բախեալ»¹⁵⁹:

Հնչիւնների արտաբերմանը մասնակցող օրգաններից ծնօտը ընդհանրապէս համարում է խօսքի սպասարկու. «ծնօտն սպասաւոր է բանի»¹⁶⁰. ատանձին ընդգծում է լեզու օրգանի դերը. «Լեզուն մի է յամենայն անդամս եւ նա ի մէջ բերանոյն է ամրացեալ եւ նա խօսի եւ յառաջ բերէ զներքին իմաստն»¹⁶¹:

Հետեւելով Արիստոտելին, Դաւիթին՝ Տաթեւացին մարդկային ձայնը յօդաւոր է համարում: Նրա տարրորոշուած լինելու պատճառը նա վերագրում է հնչիւններին, ձայնի ելեւէջներին. «Վասն է՞ որ է ձայն մարդոյս յաւաւոր: Նախ՝ զի բան եւ ձայն յաւաւոր են մարդոյն. երկրորդ՝ զի ձայն գրով յաւաւոր. երրորդ՝ զի սրի եւ բթի, զոր չունին կենդանիք»¹⁶²:

Ինչպէս Դաւիթ Անյաղթը¹⁶³ նա տարբերում է ձայնի չորս տեսակ՝ ըստ տարրորոշուած եւ իմաստաւորուած լինելու յատկանիշների, այդ տարբերակման մէջ ճիշդ հակադրելով մարդու եւ կենդանու ձայնը. «Գիտելի է, զի ձայն ի Դ բաժանի. մին անյօդ եւ աննշան որպէս անշնչից. երկրորդ, անյօդ եւ նշանական, որպէս կենդանեաց. երրորդ, յօդեալ եւ աննշան, որպէս յակիրաւիփօս. չորրորդ, յօդեալ եւ նշանական, որպէս բանս մարդոյ»¹⁶⁴:

Գէորգ Սկեւոացու երկի մեկնութեան մէջ Տաթեւացին հետեւելով վերջինիս, ձայնաւորների եւ բաղաձայնների համար օգտագործում է «ձայնաւոր» եւ «անձայն» անուանումները, առաջինը համարելով հոգի, երկրորդը՝ մարմին. «Գիտելի է, որ յերկուս բաժանին. ի ձայնաւոր եւ յանձայն: Եւ է ձայնաւորն հոգի եւ անձայնն՝ մարմին»¹⁶⁵: Սակայն ի տարբերութիւն Սկեւոացու, նա ձայնաւորների բուն թուին աւելացնում է նաեւ ուղի. «Գիտելի է, զի եւթն ձայնաւոր գիր է եւ մեծ ուլն՝ ութերորդ ի վերայ»¹⁶⁶: Ատանձին գլխով «Գիրք Հարցմանց»ում խօսում է ա ձայնաւորի մասին եւ նշում, որ նա հայերէնի ամենայնաճախական ձայնաւորն է. «ի բազում բանս մտանէ եւ գրի քան զայլ ձայնաւորս»¹⁶⁷: Ձայնաւորներից առանձնացնում է է, ի, ո-ն իբրեւ «միահեգեան գրեր», որոնք

156 Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 204բ:
 157 Գիրք Հարցմանց, էջ 230:
 158 Նոյն տեղը, էջ 131:
 159 Նոյն տեղը, էջ 230:
 160 Մեկնութիւն Մատթէի, էջ 258ա:
 161 Գիրք Բարոգութեան, Ամարան, էջ 422:
 162 Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 210բ:
 163 Հմմտ. Դաւիթ Անյաղթ, Վերլուծութիւն «Ներածութեան» Պորփիրի, աշխատասիրութեամբ Ս. Արեւշատեանի, Երեւան, 1976, էջ 9-10:
 164 Մեկնութիւն Մատթէի, էջ 40բ: Այս տարբերակմանը աննշան փոփոխութիւններով հանդիպում ենք Դաւիթ Զէթուցու աշխատութեան մէջ. ձայնը «ի չորս բաժանէ, այսինքն յօդեալս եւ ի նշանաւորս, որպէս է բանական մարդոյս, որ ենթակայացեալ են, եւ կան նշանք նոցա եւ յօդեալ եւ աննշան, որ են սոսկ մտածութիւնք եւ մերկ եւ ոչ գոյ նշանք, որպէս արալեզն եւ եղջիւրաքաղն, եւ անյօդ եւ նշանաւոր, որպէս ներշնչական եւ զգայական կենդանեացն, եւ անյօդ եւ աննշան, որպէս անշունչ տարերցն, քարից եւ փայտից» (Դաւիթ Զէթուցի, Մեկնութիւն Բերականի, էջ 74):
 165 Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 204բ:
 166 Նոյն տեղը:
 167 Գիրք Հարցմանց, էջ 177:

ինչպէս միավանկ բառերը տողադարձ չեն լինում. «Եւ միահեգեան գիրը որ առանձին է, գրադարձ ոչ լինի որպէս այս է, ի, ո: Եւ ոչ միավանգեան անուն որպէս այր, մարդ, եզն, գառն»¹⁶⁸:

Տաթեւացին բաղաձայնների քննութեան վրայ առանձին կանգ չի առնում. նշում է ու-ի կրկնակ լինելու մասին. «զի Բ ըէն մի ու է»¹⁶⁹:

«Լծորդ եւ քմակիցք» է համարում ի, ւ եւ յ («զի սոքա երեք լծորդ եւ քմակիցք են, վասն այնորիկ հիւնն յիւոյ տեղ նստի, այլ եւ յին փոխանակ ինոյ դնի»¹⁷⁰), ինչպէս եւ ղ, ի («երկու քմակիցք գիրն ղատ եւ իւէ»¹⁷¹) հնչիւնները:

Ինչպէս նախորդ քերականները Տաթեւացին կապ է ստեղծում գրի, հեգի, բառի, «բանի», այլ եւ իմացման միջեւ. «Այսպէս ի հեգիցն բառ եւ բան ծնանին եւ ի բանիցն իմաստքն ծնանին»¹⁷², ընդ որում, «զգիրն աշաւք տեսանեմք եւ զհեգն ականջաւք լսեմք, զբանն ի միտս ուսանիմք որպէս սաղմոս եւ այլն եւ իմաստքն իմացականն տեսանէ եւ ի լոյս ածէ»¹⁷³: Եւ այս բոլորի համար շինանիւթ են հանդիսանում գրերը, ինչպէս չորս տարրերը՝ աշխարհի: Լեզուական միաւորների միջեւ այս կապը սակայն, ինչպէս յայտնի է, Թրակացու երկի մեկնիչները հիմնականում նշել են միայն քանակական կողմով՝ անտեսելով իմաստայինը¹⁷⁴: Տաթեւացին որոշ փոփոխութիւն է մտցնում այդ դասակարգման մէջ՝ համալրելով շարքը միւս տարբերակութեամբ միաւորներով, սակայն իմաստը դիտելով ոչ թէ բառին եւ «բանին» (ինչպէս նշել ենք վերջինս Տաթեւացու մօտ երկիմաստ է) ներյատուկ, այլ իբրեւ առանձին միաւոր: Աւելին. նրա կարծիքով սա նոյնպէս ունի տարատեսակներ՝ սովորական, մատչելի եւ «ներքին իմաստներ»: Այս աստիճանաւորումը «Գիրք Հարցմանց»ում բնորոշում է հետեւեալ կերպ. «գիրն, որ է գծեալ: Երկրորդ՝ տառն, որ է կոչումն գրոյ, որպէս ասեմք այք: Երրորդ՝ հեգն ի ձայնաւորէ եւ ի բաղաձայնէ: Զորրորդ՝ վանկ կամ փաղառութիւն: Հինգերորդ՝ բառն: Վեցերորդ՝ բանն խօսեցեալ յայտնի մեկնութեամբ: Նոթներորդ՝ ներքին իմաստքն ամենեւին խոր եւ բարձրագոյն տեսութիւն, զոր ըստ ինքեան միայն իմացումն տեսանէ եւ ի դուրս արտաբերէ»¹⁷⁵:

Վանկի վերաբերեալ Տաթեւացու դիտողութիւններում ուշագրաւ է հետեւեալը. նա այն կապել է մի կողմից հնչելու, միւս կողմից՝ շնչի հետ. «զհեգն ականջաւք լսեմք»¹⁷⁶. «ցուցանէ զչունչս մեր, որ ոչ տեւէ յերկար, այլ կրկնելով»¹⁷⁷:

Ձայնաւորի եւ բաղաձայնի զուգորդումը վանկում բացատրում է բազմաթիւ զուգահեռներով. «Նախ՝ որպէս բանն ի մտաց եւ ի հոգւոյ ծնանի. երկրորդ՝ որպէս շունչն ի հոգւոյ եւ ի մարմնոյ ծնանի. երրորդ՝ որպէս զաւակ յարուէ եւ յիգէ ծնանի»¹⁷⁸:

Անդրադառնալով հնչիւնափոխութեան հարցերին, Տաթեւացին նշում է, որ բառերի թէք ձեւերը կարող են ունենալ հնչիւնների փոփոխութիւն, յաւելում կամ պակասում: Ըստ դիրքի տարբերում է երեք տեսակ հնչիւնափոխութիւն. բառակցքի, բառամիջի եւ բառավերջի, ընդ որում առաջինը վերաբերում է բարդ բառերի բաղադրիչում կատարուող փոփոխութիւններին. կիսէջ, կիսաժամ: Երկրորդի համար իբրեւ օրինակ բերում է Հրէայ, Հրէայք, Հրէից ձեւերը, փոփոխութիւններ դիտելով վերջինում՝ նախորդ երկուսի համեմատութեամբ: Յաջող չէ նաեւ բառավերջի հնչիւնափոխութեան օրինակը. այծենաւք, այծենիւք¹⁷⁹:

168 Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 209ա:
 169 Նոյն տեղը, էջ 201բ: Նաեւ՝ Մեկնութիւն Մատթէի, էջ 23բ:
 170 Նոյն տեղը, էջ 200բ:
 171 Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 79բ:
 172 Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 205բ:
 173 Նոյն տեղը:
 174 Բառը եւ «բանը» իբրեւ իմաստակիր միւս միաւորների հակադրում է Դաւիթը, ապա նրան հետեւելով՝ Յովհաննէս Երզնկացին (տե՛ս, Գ. Ջահուկեան, նշուած աշխատութիւնը, էջ 149, 270): Իսկ միւս քերականները (Անանուն, Ստեփանոս Սիւնեցի եւ այլք) այդ տարբերութիւնը յստակօրէն չեն պատկերացնում:
 175 Գիրք Հարցմանց, էջ 177:
 176 Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 205բ:
 177 Նոյն տեղը, էջ 206բ:
 178 Նոյն տեղը, էջ 205ա:
 179 Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 201բ:

Աւելի ճիշդ է բաց եւ փակ վանկերի հնչիւնափոխութեան տարբերակումը. առաջին դէպքում նշում է բառավերջի ի > ւ, ի > յ փոփոխութիւնը (բարի-բարուոյ, գինի-գինուոյ), երկրորդ դէպքում, ուր «միջին գիրն փոխի»¹⁸⁰ երկբարբառների փոփոխութիւնը դիտում է իբրեւ նրանց կազմի մէջ մտնող ձայնաւորներից մէկի փոփոխութիւն¹⁸¹:

Ըստ հնչիւնափոխութեան տարբերում է նաեւ միավանկ բառերի երկու խումբ¹⁸². առաջին խումբը հոլովելիս չի հնչիւնափոխուում (Միս, ձի, գետ), երկրորդը՝ հնչիւնափոխուում է (ինձ, ծիծ, ցից - ընձոյ, ծծոյ, ցցոյ):

Ուղղագրութեան հարցերում Տաթևացիի դասաւարտում է խօսակցական լեզուի ազդեցութեամբ գրութեան մէջ փոփոխութիւններ մտցնելը: Մասնաւորապէս, նա սխալ է համարում մի շարք յատուկ անուններում է-ի հնչիւնափոխութիւնը. Արիստակէս, Վրթանէս, Ներսէս, Մովսէս, որոնք սեռականում պէտք է գրել ոչ թէ Արիստակիսի, Վրթանիսի եւ այլն, այլ՝ Արիստակէսի, Մովսէսի, Ներսէսի, քանի որ վերջին շարքը «ստոյգ է եւ հայեցի», իսկ նախորդը՝ «աշխարհական եւ արցախայի»¹⁸³:

Ոսելով ե-ի եւ է-ի ուղղագրութեան մասին, Տաթևացիի չսխալուելու բառի ուղղագրութիւնը ճշդելու համար առաջադրում է հետեւեալ սկզբունքը. ստուգում անցկացնել հոլովման եղանակով, նկատի առնելով, որ է-ով գրուող բառերը թեք հոլովածներում հնչիւնափոխուում են եւ դառնում ի, իսկ ե-ով գրուողները չեն հնչիւնափոխուում. «յայտ է, զի ուղղական է-ովն է, զի յորժամ հոլովի՝ ին փոխի: Զի թէ եչ էր, որպէս թեւ, նետ, գետ ի հոլովն նոյնպէս եչն մնայր, որպէս՝ թեւով, նետով, գետով, իսկ գէտն՝ գիտուն հոլովի եւ կիտի»¹⁸⁴:

Նշում է նաեւ Արիստակէսի եւ Գէորգ Ալեւացու անհամաձայնութիւնը «կէտ» բառի ուղղագրութեան շուրջը. ըստ առաջինի պէտք է գրել ե-ով, ըստ երկրորդի՝ է-ով: Տաթևացիի համաձայնում է վերջինիս հետ՝ ե-ով ձեւը համարելով արեւելեան կողմերուն ընդունուած սխալ. «ասեմ թէ հասարակ սովորութիւնն ի սխալման է Արեւելից կողմանց, որ կետ ասեն»¹⁸⁵:

Առողանութեանը եւ կէտադրութեանը Տաթևացիի մեծ դեր է տալիս: Առողանութիւնը նա համարում է «արուեստ եւ զարդ բանից . . . տեսակարար եւ կերպարանաւ»¹⁸⁶, որն անհրաժեշտ է «գրողաց, ընթերցողաց եւ իմացողաց»¹⁸⁷: Այն մերթ ստուգաբանում է «առովաստութիւն», մերթ էլ՝ «ոռոգումն», որը «կենդանութիւն է գրոյն»¹⁸⁸: Նախորդ քերականների նման տարբերում է առողանութեան տաս նշաններ:

Նրա կարծիքով ընթերցանութեան նիւթը իմաստաւորում է նաեւ առողանութեան միջոցով: Նա տարբերում է ընթերցանութեան տեսակները, որ կոչում է «արուեստք ընթերցողաց, այսինքն՝ տրտմական, ուրախական, ըղձական, խորխտական»¹⁸⁹, որոնք ըստ նրա կարող են «թէ՛ ուրեք ուրեք ի բանս» հանդիպել եւ թէ՛ «զբոյր գիրս»¹⁹⁰: Այնուհետեւ խորհուրդ է տալիս, թէ՛ ի՛նչպէս կարգալ աղօթքը, առակը, պատմութիւնը՝ նկատի առնելով բովանդակութիւնը. «ըստ այնմ դիմաց զբանն յարմարել. ուրախութեան կամ սգոյ եւ այլն»¹⁹¹:

Տաթևացիի կէտադրութեան մասին նախ նշում է, որ այն սովորաբար առողանութիւնից յետոյ են դասում, թէեւ իր կարծիքով, իր նշանակութեամբ այն աւելի առաջնային է. «Կէտն թէպէտ յետոյ

180 Նոյն տեղը, էջ 200բ:
181 Գ. Ջահուկեան, Գերականական եւ Ուղղագրական Աշխատութիւնները, էջ 294:
182 Նոյն տեղը, էջ 295:
183 Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 197բ:
184 Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 211բ:
185 Նոյն տեղը, էջ 211ա:
186 Նոյն տեղը, էջ 210ա:
187 Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 5բ:
188 Նոյն տեղը:
189 Նոյն տեղը:
190 Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 5բ:
191 Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 210ա:

է կարգեալ դասիւ, այլ առաջին է, քան զայլ առողանութիւնս՝ պատուով»¹⁸⁸, որովհետեւ ըստ նրա, եթէ առողանութեան նշանները երանգաւորում են մէկ հնչիւն կամ բառ, ապա կէտադրութիւնը վերաբերում է բազմաթիւ հնչիւնների կամ բառերի. «այլքն (առողանութեան նշանները - Ս. Գ.) ամենայն մի գիր կամ մի բառ ցուցանեն, իսկ կէտն՝ զբազում գիրս եւ զբառս»¹⁸⁹:

Գէորգ Ալեւացու երկի մեկնութեան մէջ նախորդ քերականների նման Տաթևացիի տարբերում է երեք կէտ. «ստորակէտ, միջին կէտ, աւարտեալ կէտ», իսկ «Մեկնութիւն Սաղմոսաց» աշխատութեան մէջ աւելացնում է նաեւ վերնակէտը, նշելով դրանց հետեւեալ գործառութիւնը. «վերնակէտ, ստորակէտ, սոքա անուան կամ բայի դնեն: Եւ միջին կէտ. այս գանուն եւ զբայն յայլ բանից յատանէ. աւարտակէտ, որ է տուն, Բ կէտ ի միասին, յորժամ բանն կատարեալ լինի»¹⁹⁴:

Նա առանձին խօսում է նաեւ աստղանշան (Ճ), յորելեան (Յ), լիմինիսկոս (Յ) եւ հիպիլիմինիսկոս (Յ) նշանների մասին: Տալիս է հետեւեալ բացատրութիւնը. «կոչի աստղանշան ի վերայ բանիցն գոր եթանասունքն թողին, եւ յորելեան, որ կոչի տէգ ի վերայ բանիցն, գոր եթանասունքն յաւելին: Եւ լիմինիսկոսն է . . . ի վերայ Բ բանիցն ստուգութեան նշան, որ մեք ի վերայ Բ գրոյն պատիւ դնեմք: Եւ հիպիլիմինիսկոսն, որ . . . ի վերայ գանազանութեան բանից, որպէս մեք ի լուսանացն դրոշմեմք»¹⁹⁵: Հետաքրքիր է, որ Տաթևացիի նշում է հայերէնում գործող դրանց համարժեքների մասին, մինչդեռ, ինչպէս յայտնի է, առողանութեան վերոյիշեալ տաս նշանները Թրակացու երկի թարգմանիչը հայերէն է փոխադրել միասնիկորէն, որոնք հետագայում միայն աստիճանաբար վերաիմաստաւորուած գործառութիւն են ձեռք բերել:

Վերջին ժամանակներս լեզուաբանական աշխատութիւններում խօսուում է յարալեզուական շարժանշանների մասին¹⁹⁶: Գ. Ջահուկեանն առանձնացնում է գլխի (իբրեւ հաստատման կամ բացասման նշան), ձեռքի եւ դէմքի գանազան շարժումներ. վերջիններս ըստ նրա «հանդէս են գալիս որպէս մարդկային գանազան յոյզերի ակամայ արտայայտութիւններ»¹⁹⁷, որոնք յիշեցնում են ձայնարկութիւնները:

Տաթևացիի այս հարցերի վերաբերեալ նոյնպէս արժեքաւոր դիտողութիւններ ունի: Նա տարբերում է գլխի, դէմքի, ձեռքի մի շարք շարժումներ (առաջին երկուսը միաւորում է). «Եւ շարժումն գլխոյ Զ ազգ է: Նախ՝ հաւանական: Երկրորդ՝ հրաժարական: Երրորդ՝ սպառնական: Չորրորդ՝ հեղնական: Հինգերորդ՝ տրտմական: Վեցերորդ՝ զարհուրական»¹⁹⁸: Հաւանականը եւ հրաժարականը համարում է մտքի բուն թարգման. «Առաջին երկուքն՝ որ հաւանականն եւ հրաժարականն՝ յայտնապէս զկիրս մտացն թարգմանեն. հաւանիլ բանին կամ ոչ հաւանիլ»¹⁹⁹, մինչդեռ ձեռքի շարժումները ըստ նրա օգնում են խօսքին. «շարժումն ձեռաց լեզուի է օգնական եւ թարգման»²⁰⁰, Չնայած նա թուարկում է դէմքի միայն չորս շարժում (սպառնական, հեղնական, տրտմական, զարհուրական), սակայն խօսում է նաեւ զարմանքի, ախտասանքի մասին, ընդ որում այդ բացատրութիւններում ակնյայտ է, որ դէմքի շարժումների պատճառը նա համարում է միտքը. «Զի գոր ինչ վեր է քան զմիտս մեր՝ ի տեսանելն գայնապիսի գործն՝ շարժիմք մտօք ի զարմացումն»²⁰¹:

Նա ընդհանուր եզր է տեսնում ախտասանքի զգացումի եւ «ոհ» ձայնարկութեան միջեւ, վերջինս համարելով նրա դրսեւորման միջոց. «զոհ է ի վերայ այն իրաց ասեմք, յորժամ ձկտիմք եւ ոչ հասանեմք, յայնժամ ի կսկիծն ախտասանք եւ ասեմք, ոհ է թէ զինչ եղեւ»²⁰²:

192 Նոյն տեղը, էջ 210բ:
193 Նոյն տեղը:
194 Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 5բ:
195 Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 5բ:
196 Տե՛ս, Գ. Ջահուկեան, Ժամանակակից Հայերէնի Տեսութեան Հիմունքները, Երևան, 1974, էջ 121:
197 Նոյն տեղը:
198 Գիրք Քարոզութեան, Ձմերան, էջ 273, 123: Նաեւ, Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 43ա:
199 Գիրք Քարոզութեան, Ձմերան, էջ 273:
200 Նոյն տեղը:
201 Գիրք Քարոզութեան, Ձմերան, էջ 273:
202 Նոյն տեղը, էջ 214:

Դ. ՁԵՒԱԲԱՆՈՒԹԵԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Պօսքի մասերը դասակարգելիս Տաթևացիի զուգորդել է փիլիսոփայական-տրամաբանական և քերականական սկզբունքները²⁰⁵, այս անգամ նախորդող ունենալով Յովհան Որոտնեցուն²⁰⁴: Ինչպես յայտնի է, այսպիսի բաժանում կատարել է նաև Դաւիթը, սակայն եթէ նա փիլիսոփայական-տրամաբանական սկզբունքը առաջադրելիս հինգ խօսքի մաս է առանձնացնում²⁰⁵, ապա Որոտնեցիին և Տաթևացիին նշում են երկուսը: Տաթևացիի գրում է. «Իմաստասէրքն երկու ասեն զմասունս բանի, այսինքն՝ անուն և բայ, որ նշանակէ զեութիւն և զգործ: Իսկ քերականն ութ ասէ, այսինքն՝ անուն, բայ, ընդունելութիւն, յաււ, դերանուն, նախդիր, մակբայ, շողկապ»²⁰⁶: Ակնյայտ է, որ Տաթևացիի առաջին սկզբունքի դէպքում նկատի ունի Արիստոտելին, սակայն յայտնի է նաև, որ վերջինս առանձնացրել է ոչ թէ երկու, այլ երեք խօսքի մաս. անուն, բայ և շողկապ (երրորդը շատ ընդհանրական բնոյթ է կրել), հետեւաբար, կրճատելով նաև երրորդը և խօսքի մասերի քանակը հասցնելով նուազագոյնի, Տաթևացիին փիլիսոփայական-տրամաբանական սկզբունքի դէպքում բացարձակապէս մի կողմ է թողնում լեզուականը և ամէնաընդհանուր իմաստներն է նշում. զեութիւն և զգործ:

Պօսելով Դաւիթի անցկացրած այս բաժանման մասին, Գ. Զահուկեանը հետեւեալ դիտողութիւնն է անում. քանի որ Դաւիթը «փիլիսոփաների կարծիքը դնում է Դիոնիսիոսի բաժանման կողքին», ուստի «այս դէպքում բնական է սպասել, որ նա քերականութեան նկատմամբ հաւասարապէս կիրառելի համարի տրամաբանութեան և փիլիսոփայութեան տուեալները»²⁰⁷: Այդպիսի միահիւստում մենք տեսնում ենք նաև Տաթևացու մօտ. ըստ նրա «բանը» հաւասարապէս է նախադասութիւն է, և՛ դատողութիւն, անունը և բայը՝ և՛ նախադասութեան, և՛ դատողութեան անդամներ²⁰⁸:

Նա անուանը և բային յատկացնում է մի ընդհանուր յատկանիշ ևս, ինչպէս վարուել էր Արիստակէսը. թէ՛ անունները, թէ՛ բայերը բաժանում է երկու խմբի՝ կատարեալ և անկատար, տարբերելով ըստ ձևական յատկանիշի, այն է՝ յի առկայութեամբ կամ բացակայութեամբ: Այստեղ պէտք է նկատել, իհարկէ, որ այս բաժանումը եթէ որոշ չափով կիրառելի է բայերի ձևական դասակարգման դէպքում, ապա անունների դէպքում լիովին արհեստական է: Կատարեալ բայեր է համարում բայի խոնարհուած ձևերը, որ «զանցեալ գործն և զիրքն պատմէ»²⁰⁹, ընդ որում հետեւելով Տաթևացու բերած բայերի օրինակներին, կարելի է նկատել, որ դրանք մեծ մասամբ ներկայացուած են անցեալ կատարեալ ժամանակաձևով. ապրեցայ, արդարացայ, դժուարացայ, գժդմնեցայ և այլն: Կատարեալ անունները ևս պէտք է վերջաւորուեն յով. արքայ, քահանայ, Նոյ, խոյ և այլն:

Տաթևացիին «յուր նստի անուանց հոլովն և բայից» հարցին պատասխանում է, որ անունները հոլովւում են կամ նախդիրներով կամ էլ՝ վերջաւորութիւններով²¹⁰, և չնայած տարբերակման սկզբունքով նա հետեւում է Գրիգոր Մագիստրոսին, սակայն հրաժարուում է վերջինիս բերած երկակի հոլովման և իզական սեռի օրինակներից, որ Մագիստրոսը բերել էր յունարէնի համաբանութեամբ.

1. գԴաւիթ, ի Դաւիթ, առ Դաւիթ
2. Դաւիթի, Դաւթով, Դաւթում:

²⁰⁵ Որպէսզի Տաթևացու լեզուագիտական հայեացքները ներկայացուեն ամբողջութեամբ, շարունակում ենք բերել նաև Գ. Զահուկեանի աշխատութեան մէջ տեղ գտած հարցադրումները՝ տեղում կատարելով յղումներ:

²⁰⁴ Որոտնեցու դասակարգման մասին տե՛ս, Գ. Գրիգորեան, Յովհան Որոտնեցու Փիլիսոփայական Ուսմունքը, Երևան, 1980, էջ 196: Աւելացնենք միայն, որ այդ դասակարգումը տեղ է գտել Որոտնեցու «Համառօտ Լուծմունք Պերի Արմէնիաս Գրոցն» աշխատութեան մէջ, որն ինչպէս յայտնի է, գրառել և խմբագրել է Գրիգոր Տաթևացիին:

²⁰⁵ Գ. Զահուկեան, Գերականական և Ուղղագրական Աշխատութիւնները, էջ 138:

²⁰⁶ Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 209ա:

²⁰⁷ Գ. Զահուկեան, Գերականական և Ուղղագրական Աշխատութիւնները, էջ 138:

²⁰⁸ Նոյն տեղը, էջ 293:

²⁰⁹ Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 209ա:

²¹⁰ Գ. Զահուկեան, նշուած աշխատութիւնը, էջ 293:

Նկատենք, որ ի տարբերութիւն Յովհաննէս Երզնկացու, որ տարբերակում էր միայն հասարակ անունների սեռական-տրականը, Տաթևացիին տարբերում է նաև յատուկ անունների սեռական-տրականը.

Դաւիթի-Դաւթում:

Շարունակելով առաջնորդուել փիլիսոփայական-տրամաբանական սկզբունքով, Տաթևացիին հակադրում է ուղղականը և միւս հոլովները, իբրև ուղիղ և թեք. «Ուղղականն է ի յանունս և ի բայս և հոլովելն շրջումն նոցա»²¹¹: Պօսելով պատիւ և պատուի բառաձևերի տարբերութեան մասին և հակադրելով նրանց, որոնց կարծիքով «պատիւ գառաւելն ցուցանէ, իսկ պատուի՝ զնուազն», նա գրում է. «Այլ ևս ասեմ, ուղիղ է և հոլով, որպէս Դաւիթ և Դաւթի: Արդ պատիւն ուղղական զինքն նշանակէ և պատուի հոլով զայլ ինչ»²¹²: Նոյն կերպով հակադրում է դերանունն ուղիղ և թեք ձևերը. «ես, դու, նա, դա, սա: Այս ուղղական է. իմ, քո, նորա, մա, դմա՝ հոլովն է: Զիմ, զքո, զնորա, զմա, զդմա և այս ևս հոլով է»²¹³: Թէ՛ գոյականի և թէ՛ դերանունի, երբեմն նաև բայի խոնարհուած ձևերը Տաթևացիին միաւորում է «հոլովական» անուան տակ:

Այսպիսով, Տաթևացիին միաւորում է անունը, դերանունը և բայը իբրև փոփոխուող խօսքի մասեր: Եւ քանի որ նա հիմնականում առաջնորդուած է խօսքի մասերի բաժանման փիլիսոփայական-տրամաբանական սկզբունքով, ուստի և սպասելի էր, որ նա առանձնապէս կանգ չի առնում հոլովների քննութեան վրայ: Ուղղականը նրա կարծիքով ի տարբերութիւն միւս հոլովների յատուկ որոշեալ դէմք է ցոյց տալիս. «Ուղղական անունն զյատուկ որոշեալ դէմն ցուցանէ: Իսկ հոլովն ո՛չ զդէմն, այլ անորոշ և անյայտ իր, այնմ դիմաց կամ զազգն կամ զտուն կամ այլ ինչ»²¹⁴:

Նա ընդհանրացնում է հոլովիմաստները հետեւեալ կերպ. ուղղականը նշանակում է «զեութիւն», սեռականը՝ «վասն նորա», գործիականը՝ «զնովաւն նշանակէ»²¹⁵:

Զգուշացնում է նաև, որ սեռականով նշանակուող պատկանելիութիւնը միշտ չէ՛, որ պէտք է բառացի հասկանալ. «որպէս յորժամ ասեմք. այս անուն քաղաքս գետ, այդ ջուրն ոչ է ի նոցանէ, այլ ի համատարած ծովէն, այլ ընդ նոսա անցանելով, անուամբ նոցին կոչի»²¹⁶:

Նա հասարակ և յատուկ անունների հետեւեալ տարբերակումն է անցկացնում. «Այլ գոյացութիւն է ունող բնութեան կամ ներքոյ կացեալ բնութեան, որպէս մարդ: . . . Իսկ անձն է զանազանեալն հանդերձ բացորոշ յատկութեամբ, որպէս Պետրոս»²¹⁷: Միաժամանակ, սրանց հակադրում է անորոշ առումով վերցրած գոյականը հետեւեալ կերպ. «Իսկ ենթադրութիւն է՝ զանազանելին և ոչ զանազանեալն բացորոշ յատկութեամբ, որպէս ոմն մարդ»²¹⁸:

Ութիւն ածանցով կազմուած անունների հիմնական իմաստը նա համարում է միեւնոյն բնութեան նշանակումը. «Եւ այն զոր ասեմք ութիւնն՝ զմի բնութիւն նշանակէ, որպէս ասեմք մարդկութիւն, ձիութիւն»²¹⁹: Եթէ այս դէպքում նա նկատի ունի միեւնոյն յատկանիշով առարկաների խմբաւորուելը, միւս կողմից՝ ըստ նրա, մասի և ամբողջի յարաբերութեամբ են կապուած այդ ընդհանուրը և նրա մէջ մտնող իւրաքանչիւր միաւոր. «Եւ այսու զանազանին . . . այսինքն մասամբ և բոլորովին, որպէս մարդ և մարդկութիւն»²²⁰:

Տաթևացիին անունների առաջացման երեք ուղի է նշում. յարանունաբար, սերման ճանապարհով և գոյացական. «Նախ ի միոջէ կալմանէ յարանունաբար, որպէս ի Հերակլեայ՝ Հերակլեանք, յԻւրայէլէ՝ Իւրայէլեանք: Այսպէս ի Գրիստոսէ՝ քրիստոնեայք, զի ի նմանէ յառաջ եկեալք

²¹¹ Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 197բ:

²¹² Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 90ա:

²¹³ Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 199ա:

²¹⁴ Նոյն տեղը, էջ 199բ:

²¹⁵ Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 203բ:

²¹⁶ Մեկնութիւն Մատթէի, էջ 22բ:

²¹⁷ Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, էջ 472:

²¹⁸ Նոյն տեղը:

²¹⁹ Գիրք Պարապմանց Կիւրդի, էջ 598:

²²⁰ Գիրք Հարցմանց, էջ 121:

են»²²¹։ Երկրորդը չնայած նման է առաջինին առաջացման ձևով, սակայն մի շարք յատկանիշներով տարբերվում է. «Երկրորդը սեռ. ասին եւ սերման սկիզբն, որպէս հայրն եւ հայրենիքն: Եւ այս այլ է, քան զառաջինն: Զի այն ի միոյն առ բազումս էր կալումն եւ այս ի բազմաց ի մինն, որպէս հայրն եւ հաւն, գեղն եւ գաւառն, հայրն եւ մայրն»²²², այսինքն եթէ առաջին դէպքում ընդհանրացում է, երկրորդ դէպքում ընդհանուրից վերցրւում է ամենայնպէս շահականը, ընդ որում, Տաթեւացու կարծիքով առաջացման ժամանակով երկրորդ տեսակը նախորդում է առաջինին. «Եւ գիտելի է, զի այս նախ է ժամանակաւ, քան զառաջին սեռն . . . զի նախ ծնանին եւ ապա անուանին Հերակլեանք կամ այլ ոք»²²³։ Երրորդը սեռի եւ տեսակի յարաբերութեան մէջ գտնուող առարկաների անուանումներն են. «Իսկ երրորդը սեռ է գոյացականն, որ ստորագի տեսակաց որպէս կենդանին»²²⁴։

Նա զգուշացնում է նաեւ, որ ածանցման ճանապարհով առաջացող նոր բառը ձեռք է բերում գործառական նոր արժէք, ինչպէս օրինակ, տարբեր են մին եւ միակը. «այլ է մինն եւ այլ է միակն, զի մինն հասարակ է եւ միակն մասնաւոր եւ առանձնակի, զի ամենայն միակ մի է, այլ ամենայն մի միակ ոչ է, որպէս յորժամ ասեմք՝ մի հօտ, մի շեղջ, մի լիտր, այսպիսիքս մի են, այլ միակ ոչ են»²²⁵։

Իսկից տարբերում է Դիոնիսիոս Թրակացու առանձնացրած անուան 23 տեսակներից մէկի՝ փաղանուան, փիլիսոփայական եւ քերականական ըմբռնումները. ««Փաղանուն» ասելով փիլիսոփաները հասկանում են միեւնոյն սեռի մէջ մտնող տեսակները նշանակող անունները . . . : Քերականները «փաղանուն» կամ «բազմանուն» են կոչում միեւնոյն իրին տրուող անունները²²⁶։ Ըստ Վարդան Արեւելցու «փաղանուն է՝ որ ի զանազան անունն զնոյնս ցուցանէ, որպէս խառն, դալապր, մարտոց, վաղակաւոր, սուսեր, նրան: Ծարտասանի գործ է այս եւ զաւրութիւն, որ զմէկ իրքն բազում անուամբ ցուցանէ եւ հարուստ, զոր քերթաւորքն «բազմանուն» ասացին եւ այլ իմաստասէրքն՝ «փաղանուն»»²²⁷։ Տաթեւացին հետեւեալ փոփոխութիւններն է կատարում այս սահմանումների մէջ. նախ՝ նա «բազմանունը» եւ «փաղանունը» ընդունում է իբրեւ առանձին տեսակներ եւ ապա՝ հոմանունն ու յարանունն հետ դիտում անունների ոչ թէ քերականական, այլ փիլիսոփայական ըմբռնումներ: Դրանց վերաբերեալ տալիս է հետեւեալ բացատրութիւնները. «Իմաստասէրք զանունն ի չորս բաժանեն, այսինքն ի հոմանունն, ի փաղանունն, ի յարանունն եւ ի բազմանունն: Հումանունն է, որ զանազան իր նշանակէ եւ չտայ զբան գոյացութեան, որպէս յորժամ ասեմք ակն: Եւ է աչաց ակն. աղբեր ակն. սայլի ակն եւ սոքա այլ եւ բնութիւնք են եւ զանազան սահմանս ունին: Իսկ փաղանունն է, որ տայ զանունն եւ տայ զիրն, այսինքն զսահման իւր, որպէս ասեն սեռն, որ տեսակաց ստորագի. զի կենդանին փաղանունաբար կոչի ձիոյն եւ ոչխարին, զի կարեմք ասել զոչխարն կենդանի, գոյացութիւն, ներշնչական եւ զգայական, նոյնպէս եւ ձին: Յարանունն այն է՝ որ ի գործոյն կոչի, որպէս յառաքինութենէն առաքինի, ի քերականութենէն՝ քերական: Իսկ բազմանունն այն է, որ մին իրանց բազում անուն տամք, որպէս սուսեր, նրան, դալապր, մարտացու, վաղակաւոր»²²⁸։ Նկատենք, որ Տաթեւացու այս բացատրութիւններում հոմանունը եւ փաղանունը հակադիր եզրեր ունեն առաջացման առումով. հոմանունով (արդի քերականական ըմբռնմամբ՝ համանուն գոյականները) նշանակուող առարկաները առաջացմամբ կապ չունեն մէկը միւսի հետ, մինչդեռ փաղանունները ստորագում են մէկը միւսին իբրեւ սեռ եւ տեսակ. սրա հետ փաստօրեն նոյնանում էր «գոյացական» սեռը:

Նա հոմանուն է համարում նաեւ նոյն բաղադրիչը ունեցող բարդ բառերը. երկնային խոյ, ջրային խոյ, ցամաքային խոյ. միաշաբաթ, երկու շամաթ, երեք շաբաթ, չորեք շաբաթ. «զի սոքա թէպէտ ունին զշաբաթ անունն հոմանունաբար, բայց այլ է միաշաբաթն եւ այլ է երկուշաբաթն եւ

221 Գր. Տաթեւացի, Համառոտ տեսութիւն ի գիրս Պորփիրի, Մադրաս, 1793, էջ 336:
 222 Նոյն տեղը:
 223 Նոյն տեղը:
 224 Նոյն տեղը, էջ 337:
 225 Գիրք Հարցմանց, էջ 109:
 226 Գ. Ջահուկեան, Քերականական եւ Ուղղագրական Աշխատութիւնները, էջ 145:
 227 Վարդան Արեւելցի, Մեկնութիւն Քերականի (աշխատասիրութեամբ՝ Լ. Պաշտեանի), Երեւան, 1972, էջ 116:
 228 Գիրք Քարոզութեան, Ձմերան, էջ 647:

այլն որ ի կարգին»²²⁹։ Իսկ «օրը» նրա կարծիքով փաղանուն է, որովհետեւ ունի միւս բոլոր օրերի յատկանիշները եւ միաժամանակ, նոյն անուանումը. «Եւ փաղանունաբար կոչի օր, զի տայ զանունն եւ տայ զիրն. զի կարեմք ասել թէ երկու շաբաթն օր է եւ զսահման աւուրն ունի: Ասեմք երեք շաբաթ օր, չորեք շաբաթ օր: Ասեմք դարձեալ ծառագարդի օր, վարդավառի օր, պահոց օր, զատկի օր: Եւ սոքա ամէնքն ունին զանուն աւուրն եւ ունին զսահման աւուրն»²³⁰։ Ինչպէս տեսնում ենք, Տաթեւացու բացատրութիւնները իսկապէս փիլիսոփայական-տրամաբանական սկզբունքով են: Այս տերմինների վերաբերեալ նա ունի այլ մասնակի պարզաբանումներ եւս. «Հոմանունն է՝ որոյ անունն մի լինի եւ բնութիւն այլ եւ այլ»²³¹. կամ՝ «ցուցանէ թէ քանի նշանակութիւն ունի»²³². «բազմանունն մի է իրօք»²³³։

Նա բերում է նաեւ երկխօսութեան մի օրինակ, որտեղ ցոյց է տալիս հոմանունան, պազմանունան, յարանունան տարբերութիւնները.

- ԶՔրիստոս Աստուած հոմանունն ասես թէ՛ ոչ:
- Ասէ հակառակն՝ ոչ:
- Ընդէ՞ր ոչ:
- Քրիստոս եւ Աստուած երկու անուն է, որպէ՞ս ասիցեմ մի:
- Յորժամ հոմանունն ոչ ասես, բազմանունն ասա:
- Ոչ ասեմ բազմանունն, զի բազմանունն մի է իրօք, այլ Քրիստոսն եւ Աստուած կրկին է իրօք:
- Ապա հարկ է քեզ՝ կամ այլ անուն ասել, որ իր եւ անունն զանազանէ կամ յարանուն, զի ոչ անուամբ եւ ոչ իրօք հաղորդի՞²³⁴:

Ինչպէս նշել ենք, Տաթեւացին դերանունը միատրում է գոյականի եւ բայի հետ իբրեւ փոփոխուող խօսքի մաս, այստեղ եւս հակադրելով ուղղական հոլովն իբրեւ ուղիղ եւ միաները իբրեւ թէք:

Յուցական սա, դա, նա դերանուններն առանձնացնում է իբրեւ յատուկ դէմք նշանակողներ. «Դերանունն է սա, դա, նա եւ յատուկ զդէմքն նշանակէ»²³⁵: Նշել ենք նաեւ, որ նա կապ է տեսնում այդ դերանունների եւ յօդերի միջեւ. «Իսկ երեք գիրն ցուցական է, դա, նու, սէ որպէս այն՝ դա, նա, սա»²³⁶:

Թուարկելով յարաբերական դերանունները, նա ընդգծում է դրանց գործառական նշանակութիւնը. «Եւ տես զպարագայք բաղադատութեան է գոլ, այսինքն ով, ում, ուր, երբ, զինչ, որպէս, որքան»²³⁷:

Ոմն դերանունը համարելով անորոշ («մի ոմն անորիչ է»²³⁸), միաժամանակ նշում է, որ նրա կիրառութիւնը նշանակում է, թէ խօսքի առարկայի մասին ասում է ենթադրաբար. «Իսկ ենթադրութիւն է զանազանելին եւ ոչ զանազանեալն բացորոշ յատկութեամբ, որպէս ոմն մարդ»²³⁹:

Ածականի վերաբերեալ Տաթեւացին բերում է Արիստոտելի այն կարծիքը, որ համեմատութեան աստիճանները որակական փոփոխութիւնն չեն բերում յատկանիշին. «զրէ Արիստոտէլ, թէ (որ զինչ գերազանցութեամբ ասի, ի մի ինչ միայն գտեալ լինի): Զոր օրինակ՝ թէ ոք ասի կարօղ, կարողա՞ գոյն, կարող ագոյն յոյժ, մի լինի»²⁴⁰: Սակայն դատելով այն բանից, որ նա «սեռ» բառի գրաբարեան բաղադատական աստիճանը՝ «սեռականագոյն» բացատրում է՝ «այն է, որ բարձրագոյն եւ գերազանց

229 Գիրք Քարոզութեան, Ձմերան, էջ 647:
 230 Նոյն տեղը:
 231 Լուծումն Պարսպմանց Կիրգի, էջ 691:
 232 Նոյն տեղը:
 233 Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, էջ 451:
 234 Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, էջ 451:
 235 Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 88բ:
 236 Մատենադարան, ձեռագիր հ. 1115, էջ 200բ:
 237 Մեկնութիւն Մատթէի, էջ 160ա:
 238 Նոյն տեղը, էջ 300ա:
 239 Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, էջ 472:
 240 Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, էջ 78:

սեռ կոչեմք»²⁴¹, պէտք է ենթադրել, որ նա կողմնակից է եղել դրանց տարբերակուածութիւնը ընդունելուն:

Տաթեւացին նոյնպէս տարբերում է բայի երեք ժամանակ. «էն ներկայական է, զի էրն եւ եղիցին անցեալն եւ հանդերձեալն է»²⁴²: Անցեալ ժամանակը ըստ նրա ցոյց է տալիս «զվախճան անցելոյն», ապառնին՝ «սկիզբն հանդերձելոյն», իսկ ներկան՝ ընթացքի մէջ գտնուող գործողութիւն. «իսկ էն անսկիզբն եւ անվախճան է»²⁴³:

Բայի կրաւորական սեռի հետեւեալ բացատրութիւնն է տալիս. գործողութեան կրողը միաժամանակ գործողութեան պատճառն է. «Դատին կրաւորական է, նախ զինքեամբ դատին եւ ոչ այլ ով»²⁴⁴ (հասկանալի է, որ իր բացատրութեամբ նա ներառել է միայն անդրադարձութիւն – ոչ անդրադարձութիւն հակադրութիւնը):

Նա նշում է «մի» արգելականի «հրամայական եւ հրաժարական» բնոյթը. «Մի՛ գանձէք յերկրի: Հրամայական է եւ հրաժարական»²⁴⁵:

Բայի թուի համար կիրառում է «բազմաւորակի» եւ «առանձին» տերմինները (նախորդ քերականները «առանձինի» փոխարէն հիմնականում գործածում են «եզական» տերմինը):

Ինչպէս նշել ենք, Տաթեւացին հետեւելով Արիստակէսին, անունները եւ բայերը բաժանում է երկու խմբի. կատարեալ եւ անկատար: Եւ եթէ Յովհաննէս Երզնկացին ընդունելութեան մէջ զնում էր անցեալ դերբայը՝ նրա մէջ տեսնելով հիմնականում բայական յատկանիշներ, չմերժելով սակայն նաեւ անուանականը, ապա Տաթեւացին նրան միայն բայական յատկանիշներ է վերագրում: Դեռ աւելին. նա անցեալ դերբայը համարում է կատարեալ բայ եւ հակադրում անորոշին, որի մէջ տեսնում է եւ բայական, եւ անուանական յատկանիշներ: Եւ քանի որ անցեալ եւ անորոշ դերբայները ձեւական հակադրութեան այլ եզր չունեն բացի ա՛րց, ուստի անցեալ դերբայի կատարեալ լինելը կապում է վերջաւորութեան ա՛ր հետ (ժողովել-ժողովեալ), իսկ անորոշ դերբայի անուանական յատկանիշները՝ ի՛ր հետ (ժողովել-ժողովելի). վերջինիս բայական յատկանիշները տեսնում է նախ իբրեւ գործողութիւն ցոյց տուող. «ծիծաղական մարդն է եւ ծիծաղիլ՝ գործն»²⁴⁶, ապա նրա սեռական հոլովածներում. «Առաքելոյ, ժողովելոյ, ճանաչելոյ, ռահ գործելոյ, քաւելոյ: Սոքա հոլովք բայից են, յի պիտոյ է ամենայն ուրեք եւ զի չեն կատարեալ բայք, վասն այնորիկ այք չունին եւ զի չեն անուն, ին չունին, որ ի հիւնն փոխի»²⁴⁷:

Ըստ «գործիական», «ներգործական», «արարողական» պատճառների տարբերում է գրիչ-գրող, մկրտիչ-մկրտող, փորձիչ-փորձող դերբայական ձեւերը: Գործիական պատճառ ասելով նկատի ունի իբրեւ գործիչ, միջոց լինելը. դա վերաբերում է գրիչ, մկրտիչ, փորձիչ ձեւերին. իսկ երկրորդ շարքը բնորոշում է մերթ ներգործական, մերթ արարողական տերմիններով. «Եւ գրիչ կոչի եղէգն, որ ի ձեռնին է. եւ գրիչ կոչի գրողն, որ դաւիրն է. մինն գործիական եւ մինն ներգործական պատճառ»²⁴⁸, «Զի՞նչ է մկրտիչն եւ մկրտողն. որպէս գրիչ եւ գրող. մինն գործիական պատճառ եւ մինն արարողական»²⁴⁹:

Քերականական որոշ հարցերի նկատմամբ Տաթեւացին հանդէս է բերում կանխակալ մօտեցում: Ընդհանրապէս հանդէս գալով գրոց լեզուն անփոփոխ թողնելու տեսակէտի պաշտպանութեամբ²⁵⁰,

²⁴¹ Համառօտ Տեսութիւն ի Գիրս Պորփիւրի, էջ 343:
²⁴² Գիրք Հարցմանց, էջ 312:
²⁴³ Նոյն տեղը:
²⁴⁴ Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 58ա:
²⁴⁵ Մեկնութիւն Մատթէի, էջ 121ա:
²⁴⁶ Համառօտ Տեսութիւն ի Գիրս Պորփիւրի, էջ 383:
²⁴⁷ Մատենադարան, ձեռագիր հ. 1115, էջ 200բ:
²⁴⁸ Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 80ա:
²⁴⁹ Մեկնութիւն Մատթէի, էջ 40ա:
²⁵⁰ Թօսելով այն մասին, թէ ի՞նչ օգուտ կայ, որ շինականը աղօթք լսի, որ «խորթին բառով է» եւ չհասկանայ, Տաթեւացին պատասխանում է, թէ դա նոյնն է, որ մի պատուական ակ գտնուի մի մարդու ձեռքին, որ չգիտի նրա գինը եւ գտնուի ակնավաճառի ձեռքին. քարի արժէքը միեւնոյնն է դրանից չի փոխուում (Գիրք Քարոզութեան, Զմեբան, էջ 363):

նա իր աւանդապահութեամբ նպատակ է հետապնդում անխոցելի պահել հայերէնի ինքնուրոյնութիւնը. թերեւս սրանով պէտք է բացատրել նաեւ նրա մերժողական վերաբերմունքը «կու» եղանակիչի կիրառութեան նկատմամբ: Այն դէպքում, երբ Յովհաննէս Երզնկացին «կու»ով ձեւերը գրանցում է իբրեւ ընդունելութիւն գտած եւ սովորական գործածութեան մէջ անցած, Տաթեւացու հակայածաւալ դրական ժառանգութեան մէջ մենք «կու»ի այնքան սակաւթիւ գործածութիւն ենք գտնում²⁵¹, որ հակուած ենք նոյնիսկ կարծելու, որ հեղինակային օրինակներում դրանք պէտք է որ եղած չլինեն: Հետաքրքիր է, որ նա «կու» եղանակիչի գործածութեան համար մեղադրում է միարարներն («ազգն Փռանկաց»²⁵²), որոնք մկրտութեան ժամանակ ո՛չ թէ ասում են «մկրտի ի ձեռս իմ», այլ՝ «կու մկրտեմ»²⁵³: Մինչդեռ այս դէպքում ըստ Տաթեւացու երկու խախտում է տեղի ունենում. 1. Նա «կու»ն դիտում է իբրեւ ուղիղ խնդիր, այսինքն՝ «կու մկրտեմ» նոյնն է, թէ՛ «Մկրտեմ զկուն», «գոր եւ անյարմար շարաբանութեամբ զկուն ցուցանեն մկրտել եւ ոչ նուիրեալն»²⁵⁴: 2. Երկրորդ դէպքում շեշտում է «կու» եղանակիչի հարկադրական երանգը, այսինքն՝ նրա օրերում արդէն միտում է եղել «կու»ի գործառութեան սահմանափակման. «անպատշաճութիւն է զի յասելն թէ՛ եւ կու մկրտեմ, երեւի թէ՛ նուիրեալն ոչ իւր կամաւն է եկեալ ի մկրտութիւն, այլ բռնութեամբ եւ ի հարկէ կու մկրտեմ»²⁵⁵:

Առանձին դիտողութիւններ ունի նախդիրների, ձայնարկութեան վերաբերեալ, որոնց մասին արդէն նշել ենք:

Ե. ՇԱՐԱՀԻՒՍՈՒԹԵԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Տաթեւացին քանի որ իր նախորդների նման նոյնացնում էր դատողութիւնը եւ նախադասութիւնը, ուստի անուան եւ սահմանման նրա բնորոշման մէջ կարելի է տեսնել անուան եւ նախադասութեան կապը՝ վերջինս դիտելով իբրեւ անուան ծաւալում. «Անուն է սահման համառօտ եւ սահման է անուն ծաւալեալ, քանզի միապէս յայտնեն զբնութիւն մարդոյ անունն եւ սահմանն: Զի թէ ասէ ոք. կանդանի՛ բանական, մահկանացու, մտաց եւ հանճարոյ ընդունակ. այս զբնութիւն մարդոյ յայտնէ եւ թէ ասէ կարծ եւ համառօտ՝ մարդ է. եւ այս զբնութիւն մարդոյ յայտնէ»²⁵⁶:

Համադրելով անուան եւ սահմանման Տաթեւացու միւս բնորոշումները եւս «ամենայն ինչ անուամբ կամ սահմանաւ ճանաչի, այլ սահմանաւ առաւել քան անուամբ»²⁵⁷. «անուն մարդոյ յայտնէ զբնութիւն մարդոյ, անուն առիւծու յայտնէ զբնութիւն առիւծու, քանզի համազօր է սահմանի անունն»²⁵⁸, պէտք է նշել հետեւեալը. նա սահմանման առաւելութիւնը ընդգծում է միայն մի դէպքում, որ ի տարբերութիւն անուան սահմանումը թուարկում է եւ ներկայացնում էական յատկանիշները, սակայն քանի որ անունն արդէն իսկ ենթադրում է սահմանման մէջ տրուող էական յատկանիշների առկայութիւնը, ուստի ըստ Տաթեւացու, դրանք այնուամենայնիւ, համազօր են:

Նա նախադասութիւնը եւ դատողութիւնը դիտում է իբրեւ անուան եւ բայի կապակցութիւն. «Աւգնեստ Բայ է. երբ ասես Տէր կամ Աստուած՝ չինի բան, զի յանուանէ եւ ի բայէ բանն կատարի»²⁵⁹:

²⁵¹ Օրինակ, «Մեկնութիւն Մատթէի» երկում, որ կազմուած է շուրջ 680 էջից, մենք հանդիպել ենք «կու» եղանակիչի 2-3 գործածութեան:
²⁵² Գիրք Հարցմանց, էջ 588:
²⁵³ Նոյն տեղը:
²⁵⁴ Նոյն տեղը:
²⁵⁵ Նոյն տեղը:
²⁵⁶ Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, էջ 555: Տե՛ս նաեւ, Գիրք Պարապմանց Կիւրղի, էջ 530: Ինչպէս նշել ենք, այս սահմանմանը հետազայում հանդիպում ենք Դաւիթ Ալեթնացու մօտ. հմմտ. «Անուն է, որ յայտնէ զգոյացութեան սահման ի կարծոյ, որպէս ասել մարդ. յայտնեցաւ սահման նորա, զի է գոյացութիւն մարմնական, ներշնչական, զգայական, կենդանի, բանական, մակացութեանց ընդունակ, իսկ միայն մարդ կոչելով յայտնեցաւ ամենայն բաղկացութիւն ընդ նմա» (Դ. Ալեթնացի, Մեկնութիւն Քերականի, էջ 97):
²⁵⁷ Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 165:
²⁵⁸ Գիրք ոչ կոչի Ոսկեփորիկ, էջ 555:
²⁵⁹ Մատենադարան, ձեռագիր, հ. 1115, էջ 198բ:

Ճաթեղացիին դիմում է նաև «ենթակայ» եւ «ստորագեալ» որակիչ սահմանումներին, սակայն բացատրութիւնը այս դէպքում եւս հիմնականում փրկատփայական-տրամաբանական սկզբունքով է, եթէ մի կողմ թողնենք ենթակայի եւ ստորագեալի շարադասութեան հարցը: Քննելով այն հարցը, ըստ որի ենթական եւ ստորագեալը նախադասութեան մէջ գտնուում են նիւթի եւ տեսակի յարաբերութեան մէջ, իսկ վերջիններս հաւասար են հանդէս գալիս իրենց յարաբերութեան մէջ, նշանակում է արդեօք, որ ենթական եւ ստորագեալը նոյնպէս առաւելութիւն չունեն մէկը միւսի նկատմամբ, Ճաթեղացիին չի համաձայնում հարցադրման նման եղանակի հետ, որովհետեւ նրա կարծիքով ենթակային եւ ստորագեալին պարտադրուած չէ՛ նման կապ. «Եթէ ստորագեալ ի բանն ունի գտեղի տեսակի եւ ենթական գտեղի նիւթոյ: Արդ՝ տեսակն ո՛չ է առաւել քան զնիւթն իւր, այլ հաւասար, ապա եւ ո՛չ ստորագեալն քան զենթակայն: . . . Թէպէտ տեսակն ո՛չ է առաւել քան զնիւթն իւր, յորում ունի զգույն իւր, սակայն ստորագեալն ոչ է ի յայն գորմէ ստորագի, որպէս ի յենթակայոջ: Այլ որպէս վերջնագոյն ի ստորնագուտումն»²⁶⁵: Այսինքն, ըստ Ճաթեղացու, ստորագեալ նշանակում է, ո՛չ թէ ենթակայից ստորագուած, այլ ստորնագոյն (ըստ ՆՃԲ-ի՝ կարի ստորին, ներքին, վայրագոյն), այսինքն այստեղ ո՛չ թէ նիւթի եւ տեսակի, այլ դիրքի խնդիր է: Ստորագեալի վերջադաս լինելը, չի՛ նշանակում, թէ նա ստորագուած է ենթակայից:

Նրա կարծիքով, ստորագեալը «առաւել է», քան ենթական: Դա ակնյայտ է նաև «զի՞նչ է ենթական եւ ստորագեալն» հարցի պատասխանից. «Ենթական ի ներքոյ եղեալն է եւ ստորագեալն, որ ի վերայ գայ. է ենթական, նախ զի ի ներքոյ է: Երկրորդ՝ առաջին: Երրորդ՝ գոյ: Նուազ ընդդէմ այսմ ստորագեալն: Նախ զի ի վերայ է: Երկրորդ՝ յետոյ: Երրորդ՝ գոյ եւ պատահումն: Զորրորդ՝ առաւել»²⁶⁶: Այս բնորոշումից բխում են հետեւեալ եզրակացութիւնները.

1. ենթական շարադասութեամբ նախորդում է ստորագեալին.
2. ենթական արտայայտում է գոյը (առկայ նիւթը).
3. ստորագեալը արտայայտում է գոյը եւ պատահումը (առկայ նիւթը եւ շարժումը):

Ճաթեղացու այս սահմանումը ի՞նչ աղերսներ եւ տարբերութիւններ ունի նախորդ քերականների նման հարցադրումների հետ:

Ենթակայի նախադաս լինելը հայ միջնադարեան քերականները գրեթէ բոլորն ընդունել են: Նրանց մեծամասնութիւնը ընդունել է նաև անուան առաւելութիւնը բայի նկատմամբ: Այս կարծիքի հիմքում ընկած է եղել գոյի եւ պատահման յարաբերութեան հարցը. նրանք, ովքեր ընդունել են, որ իր առաջացմամբ գոյը նախորդել է պատահմանը, ընդունել են նաև անուան առաջնութիւնը բայի նկատմամբ: Այսպէս, օրինակ, ըստ Դաւթի, «նախ յառաջանալ ի դէպ է գոյոյն քան պատահման, յայտ է՝ անուան քան բայի»²⁶⁷: Այս կարծիքին են նաև Մովսէսը, Յովհաննէս Երզնկացիին: Ճաթեղացիին քանի որ ի տարբերութիւն այս քերականների գտնում է, որ բայը (ստորագեալը) միաժամանակ գոյի եւ պատահման արտայայտութիւն է, ուստի ընդունում է, որ այն առաւելութիւն ունի գոյը արտայայտող անուան (ենթակայի) նկատմամբ: Նշենք, որ գոյի եւ պատահման նման բնորոշում նախորդներից հանդիպում ենք Վարդան Արեւելցու մօտ. «Իսկ բանին առաջին մասն անունն է եւ զգոյութեան սահման ունի անունն . . . յետ անուան բայ է, որ զանունն եւ զգործն ցուցանէ»²⁶⁸: Իսկ ստորագեալի առաւելութիւնը ենթակայի նկատմամբ ընդունել է Բարթոլոմէոս Մարաղացիին իր «Համառօտ հաւաքումն յոյժ օգտակար ի դիպէթիկայէն» աշխատութեան մէջ («ստորագեալն է պատուականագոյն մասն նախադասութեան»²⁶⁹), որը 1363 թ. Ճաթեղացիին ընդօրինակել է Յովհան Որոտնեցու պատուէրով, եւ բացատրուած չէ, որ Մարաղացու կարծիքը ազդեցութիւն է ունեցել:

²⁶⁵ Համառօտ Տեսութիւն ի Գիրս Պորփիրի, էջ 355:
²⁶⁶ Նոյն տեղը, էջ 353:
²⁶⁷ Գ. Ջահուկեան, Քերականական եւ Ուղղագրական Աշխատութիւնները, էջ 139:
²⁶⁸ Նոյն տեղը, էջ 253:
²⁶⁹ Յովհաննէս Բունցի, Յաղագս Քերականին, Երեւան, 1977, էջ 121:

Զ. ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՃԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Ինչպէս յայտնի է, ոճաբանութիւնն իբրև առանձին առարկայ ուսումնասիրութեան նիւթ է դարձել միայն Բ. դարի սկզբին: Մասնաւորապէս, հայ իրականութեան մէջ, ինչպէս նկատում է Ս. Մելքոնեանը, մինչեւ ԺԹ. դարի երկրորդ կէտը «ոճաբանութեան հարցերն արծարծուել են գերազանցապէս ճարտասանութեան մէջ»²⁶⁵: Սակայն, ինչպէս շարահիւսութեան, այնպէս էլ ոճաբանութեան վերաբերեալ բոլոր քերականները չէ՛, որ տեղեկութիւններ են հաղորդել: Յատկապէս միջնադարեան քերականների աշխատութիւններում դրանք հանդէս են գալիս անհամեմատ փոքր ծաւալով, իսկ որոշ հեղինակների մօտ ընդհանրապէս բացակայում են, ուստի հասկանալի է ուսումնասիրողների այն հետաքրքրութիւնը, որ հանդէս է բերում նաև առանձին դիտողութիւնների նկատմամբ:

Ճաթեղացու դիտողութիւնները ոճաբանութեան վերաբերեալ նոյնպէս մեծաքանակ չեն:

Բանաւոր եւ գրաւոր խօսքի տարբերակումից բացի նա խօսքի երեք տեսակ է ընդունում. սովորական, առակաւոր եւ իմաստուն. «Գ է որոշումն բանին, այսինքն հասարակաց բան, առակաւոր բան, իմաստութեամբ բան»²⁶⁶:

Բանաւոր խօսքի մասին խօսելիս, նա ընդգծում է հաղորդող ընկալող կապը. խօսողը պէտք է հոգածութիւն հանդէս բերի ունկնդրի նկատմամբ. «Իմաստուն մարդն մեղմով եւ հանդարտ խօսի, որ ի միտս լսողացն տպաւորի որպէս կնիք ի մոմն»²⁶⁷: Պօքի ընկալման յաջողութիւնը մեծապէս կախուած է խօսողի գիտելիքներից եւ ճարտասանական ունակութիւններից: Միայն գործնական գիտելիքներ ունեցողը առանց «տեսական իմաստութեանց ոչ ունի զմխիթարութիւն գիտութեան որպէս գիտնականն, ոչ ունի զմտաց պայծառութիւն որով լուսաւորի եւ գեղեցկանայ, որպէս տեսականն իմաստութեան լուսովն»²⁶⁸: Սակայն տեսական եւ գործնական գիտելիքների համադրումն էլ բաւական չէ, եթէ վարդապետը «ցոփախօս» է եւ անընդունակ խօսքի տեղի եւ ժամանակի ընտրութեան. «Յորժամ ունի միայն գտեսականն առանց բնական խելաց, թեթեւամիտ եւ ցոփախօս շաղաւաշուրթն գոլով, անպատշաճաբար յամենայն ուրեք ցոփաբանէ անհանճար . . . զի ոչ գիտէ զդէմն եւ գտեղին եւ գժամանակն ընտրել»²⁶⁹: Մինչդեռ իմաստուն քարոզողը ոչ միայն տեղի եւ ժամանակի ընտրութիւն է կատարում, այլ եւ հաշուի առնում լսարանի բնոյթը. «Իսկ որ հանճարեղ իմաստունն է, գիտէ . . . այլապէս խօսիլ մարմնաւորացն եւ այլապէս հոգեւորացն, իշխանացն եւ ռամկաց եւ այլոցն ամենայնի»²⁷⁰:

Իսկ ինչպիսի՞ն պէտք է լինի խօսքը: Զափով, — պատասխանում է Ճաթեղացիին եւ մեկնում. «Արդ չափովն նախ այն է, որ սալաւ խօսիք եւ ոչ յաճախ եւ անչափ խօսիլն՝ յանցումն է մարդոյ . . . : Երկրորդ՝ այն է չափով, որ հանդարտ խօսի եւ ոչ շուտափոյթ եւ բարձր ձայնիւ»²⁷¹: Պօքը պէտք է նաև իմաստաւորուած եւ տրամաբանուած լինի՝ «զի իմաստութիւն աղ է եւ համեմիչ բանին, որպէս աղն կերակրոյ»²⁷², իսկ տրամաբանուած խօսքը, ըստ նրա, նպատակաւոր ուսուցիչ, ներքին կուռ կապի մէջ գտնուող խօսքն է: Տրամաբանութիւնից զուրկ խօսքն ի վերջոյ հանգում է ստի եւ դատարկաբանութեան, որից պէտք է զգուշանալ. «Նոյնպէս եւ կարգաւոր խօսքն կրկին է: Նախ՝ որ զխօսից սկիզբն եւ զմէջն եւ զկատարումն գիտէ, կարգաւ խօսի, որպէս կարգաւ փոխեմք գոտս նախ ի մերձն եւ ապա հետուն: Երկրորդ՝ կարգաւ խօսքն ճշմարիտ է, իսկ անկարգն՝ սուտ . . . : Իսկ թէ ակամայ եւ անգիտութեամբ է սուտն՝ նա լինի դատարկաբանութիւն: Ապա ուրեմն պարզ է զգուշանալ յանկարգ խօսից եւ ի ստութեանէ թէ՛ կամաւ եւ թէ՛ ակամայ. այսպէս է պոռնկութիւն լեզուի»²⁷³:

²⁶⁵ Ս. Մելքոնեան, Ակնարկներ Հայոց Լեզուի Ոճաբանութեան, Երեւան, 1984, էջ 38:
²⁶⁶ Մատենադարան, ձեռագիր Հ. 5869, էջ 324բ:
²⁶⁷ Գիրք Քարոզութեան, Ձմեռան, էջ 180:
²⁶⁸ Գիրք Քարոզութեան, Ձմեռան, էջ 172:
²⁶⁹ Նոյն տեղը, էջ 171:
²⁷⁰ Նոյն տեղը:
²⁷¹ Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 405:
²⁷² Նոյն տեղը:
²⁷³ Գիրք Պարսկական Կիւրղի, էջ 628:

Այս ամէնը Տաթևացիին ընդհանրացնում է հետեւեալ կերպ, «կախուղ եւ հանդարտ խօսիւքն կակղացուցանէ զմիտս լսողացն որպէս կակուղ մոմ եւ ընդունի զպատկեր բանիցն: Զի չորս իր է, որ զբանն առաւել լսելի առնէ: Նախ՝ բարի բանն. երկրորդ՝ կարգաւոր խօսքն. երրորդ՝ մեղմով ձայնն. չորրորդ՝ յարմար ասելն: Իսկ չար բանն եւ անկարգ եւ աղաղակն եւ շտապ ասելն խռովէ զմիտս լսողացն եւ ունայն մնայ բանն: Զի որպէս հողմ որ շարժէ զալիս ջուրց, նոյնպէս սաստիւ եւ աղաղակաւ ասելն զիսուն՝ յուզէ զմիտս լսողացն, որպէս գաղջ անձրեւն հեղեղէ զսերմանիսն եւ լինի անպտուղ. նոյնպէս շտապ ասելն բանից: Եւ որպէս ցուրտ սառուցանէ զմոմն, նոյնպէս չար եւ անկարգ բանն կարծրացուցանէ զմիտս»²⁷⁴:

Տաթևացիին բոլորովին դէմ չլինելով խօսքի պատկերաւորման բազմազան միջոցների կիրառութեանը եւ անձամբ տիրապետելով «գեղեցիկ իմաստութեամբ» օժտուած խօսքի գաղտնիքներին, խստութեամբ է վերաբերուել ճոռոմ խօսքին, որտեղ նրա կարծիքով միտքը մթազնում է բառերի աւելորդ ծանրութիւնից. «Ճոռոմութիւն է բանիւ զբանն ծածկել կոկովանօք, այսինքն՝ նոր բանիւ»²⁷⁵ (ՆՀԲ-ն բացատրում է կոկովանք՝ իբրեւ պաճուճանք բանից, սուտ գովութիւն. Տաթևացիին նոր իմաստ է դրել՝ «նոր բառիւ», նկատի առնելով, որ ճոռոմաբանել նշանակում է ինչ-ինչ յատկանիշներ աւելացնել երեւոյթին):

Ինչպէս արդէն նշել ենք, առողանութեան մասին խօսելիս, Տաթևացիին բանաւոր խօսքում էական տեղ էր յատկացնում նաեւ առողանութեանը, այն համարում «արուեստ եւ զարդ բանից», «տեսակարար եւ կերպարանաւոր»: Ըստ առողանութեան նա տարբերում է ընթերցանութեան մի շարք տեսակներ. խորհրտական, ողբական, հեզնական, հարցական, հրաժարական, յանձնառական. «նոյն կամ սգոյ եւ այլ ամենայն ի յառողանութեանն է»²⁷⁶:

Գրաւոր խօսքը Տաթևացիին մի քանի բաժանման է ենթարկում: Մերթ նա իբրեւ չափանիշ ընդունում է հեղինակի շարադրանքի լեզուն եւ մտքի խորութիւնը. «Ի Դ բաժանին բանք. է որ բանն եւ ձայնն խոր, որպէս Պիթագորեայն. է որ ձայնն պարզ եւ բանն խոր, որպէս Պլատոնին. է որ ձայնն խոր եւ բանն պարզ, որպէս Արիստոտէլին եւ է որ ձայնն եւ բանն պարզ, որպէս Առաքելոցն»²⁷⁷: Ոճական միւս տարբերակման հիմքում ընկած է խօսքի չափը եւ խորութիւնը. «Այլ գիտելի է, զի ի Դ տրամատին իմացմունք գրոց: է որ բանն յերկար եւ միտքն չափեալ (Մովսէսի խօսքն ուղղուած ժողովուրդին). եւ որ բանն չափեալ եւ միտքն յերկար (Թբի խօսքը, Սաղմոսները, Երգ Երգոցը). եւ է որ բանն եւ միտքն չափեալ, որպէս առակս . . . զի խրատական են: Եւ է որ բանն եւ միտքն յերկար, որպէս Նսային եւ այլ Մարգարէքն»²⁷⁸:

Ըստ նրա մեկնութիւնը նոյնպէս կարելի է մի քանի եղանակով անել. ըստ ճառի, մտքի, տեղի եւ այլաբանութեան. «Նախ՝ ըստ ճառին է մարմնապէս մեկնութիւն, բայց ըստ մտացն՝ հոգեպէս . . . : Երրորդ՝ ըստ տեղւոյն յարմարութեան որիչ մեկնի ի տեղւոյն այս, որիչ՝ յայլ տեղիս: Զորրորդ՝ ըստ այլաբանութեան՝ զանազանապէս տեսութիւն առեալ ըստ բանին եւ ըստ մտացն բաղդատութեան»²⁷⁹: Կարելի է նկատել, որ այս բաժանումը տրուած է նաեւ ըստ ուղղակի եւ այլաբանական նշանակութեան: Ի վերջոյ սրանց են հանգեցուած սովորական շարադրանքի, առակի, բարառութեան, վկայութեան տարբերակումը նոյնպէս. «նոյնով գնոյն. այլով գայլ. նոյնով գայլ. այլով գնոյն: Առաջինն յայտնի է. երկրորդն՝ առակ. երրորդն՝ բարառաբար. չորրորդն՝ վկայութեան»²⁸⁰:

Տաթևացիին յատկապէս մանրամասնօրէն է վերլուծում միջնադարեան գրականութեան մէջ շատ տարածուած ոճական հնարանքներից մէկը՝ փոխաբերական խօսքը, ընդ որում, նա թէ՛ սա, թէ՛

²⁷⁴ Գիրք Քարոզութեան, Զմեբան, էջ 180:
²⁷⁵ Գիրք Պարսպմանց Կիրոլի, էջ 628:
²⁷⁶ Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 210ա:
²⁷⁷ Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 37բ:
²⁷⁸ Գր. Տաթևացի, Համառօտ Հաւաքումն յԱռակաց, Մատենադարան, ձեռագիր Հ. 5869, էջ 325ա:
²⁷⁹ Գիրք քարոզութեան, Զմեբան, էջ 191:
²⁸⁰ Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 89ա: Դժուար չէ նկատել, որ վերոյիշեալ բոլոր բաժանումներում գործում է երկանդամ բաղադրիչների (A եւ B) համադրումը. AA, AB, BA, BB:

այլաբանութիւնը եւ թէ՛ առակը միաւորում է «առակաւոր խօսք» կամ «առակաւոր բան» անուանմամբ՝ նկատի ունենալով սրանց ընդհանրութիւնը, այսինքն՝ փոխաբերական նշանակութիւնը եւ արժէքը:

Փոխաբերական խօսքում նա տարբերում է երկու մակարդակ. բնական եւ բարոյական: Առաջինը երեւոյթի ուղղակի իմաստն է, եւ սրա հիմքի վրայ է, որ առաջանում է երկրորդը (փոխաբերական նշանակութիւնը): Իբրեւնք իր իսկ բացատրութիւնը. «Աչք իմաստնոյն է գլուխ իւր» արտայայտութեան բնական հիմքն այն է, որ աչքը գտնուում է գլխի վրայ: Սակայն խօսքն այստեղ այդ ուղղակի իմաստի մասին չէ. «զի ո՛չ զայս զգալի աչացն ասէ եւ ո՛չ զմարմնական գլխոյս, զի ահա ցուցաւ, որ ամենեցուն աչք ի գլուխն է եղեալ, այլ զիմանալի աչաց եւ զիմանալի գլխոյն է բանն»²⁸¹, այսինքն խօսքն ընկալելու եւ հասկանալու մասին է: Սա էլ հէնց արտայայտութեան «բարոյական», այսինքն՝ փոխաբերական նշանակութիւնն է:

Տաթևացու կարծիքով բառի, արտայայտութեան փոխաբերական ընկալումը մասամբ սովորոյթի հետեւանք է: Նա օրինակ է բերում իր օրերում ընդունուած «տուն ունի՞ս» (կին ունե՞ս նշանակութեամբ) արտայայտութիւնը: Արտայայտութեան առաջացման համար նրա կարծիքով դեր է խաղացել կնոջ նշանակութիւնը տնտեսութեան մէջ. «կինն ժողովումն եւ հաւաքումն է մարդոցն եւ ընչիցն, զի մարդն է որպէս գետ եւ կինն որպէս ծով, առ որ ժողովին գետը . . . զկինն շինուած կոչէ Աստուծոյ, զի առանց կնոջ աւեր է տունն եւ տան շինութիւն կինն է»²⁸² Սա է պատճառը, որ կին եւ տուն հասկացութիւնները սկսել են ընկալուել համարժէք. «Զայս սովորութիւն կալան այժմ եւ կոչեն զկինն՝ տուն. տուն ունի՞ս, տուն առեա՞լ ես»²⁸³ (որ նշանակում է կին ունե՞ս, ամուսնացե՞լ ես):

Տաթևացիին նշում է նաեւ երկու երեւոյթների նմանութիւնը իբրեւ փոխաբերական խօսքի առաջացման պատճառ: Իբրեւնք մի օրինակ, որ յատուկ է յատկապէս միջնադարեան մտածողութեանը եւ զուգահեռն առաջին հայեացքից կարող է անսովոր թուալ. խօսքը սատանային արեգակ անուանելու մասին է: Պատճառն ըստ Տաթևացու երկուսի նմանութիւնն է. «արեգակն առաւել ջերմով եւ երբեմն՝ վնասէ . . . այսպէս եւ սատանայ ջերմացեալ ի սէր աշխարհիս, ցրտացեալ ի սիրոյն Աստուծոյ՝ վնասէ»²⁸⁴:

Տաթևացիին «առակաւոր խօսքի» մէջ է դասում նաեւ դիմառնութիւնը (առարկանների, կենդանիների, երեւոյթների անձնաւորումը), որովհետեւ դա էլ ունի փոխաբերական արժէք («նոյնով զայլ ուսուցանեն»), ընդ որում, իւրաքանչիւր կենդանի մարդկային որեւէ յատկանիշի կրող է հանդէս գալիս. «Զանազան մեղքն կերպարան առնէ զմարդն, որպէս ագահն՝ զայլուն, ցանկասէրն՝ խոզի, խաբօղն՝ աղուէսի եւ գողն՝ մուկ, ծոյլն՝ էջ եւ բարկացողն՝ շուն, խորամանկն՝ ուղտ եւ հպարտքն՝ աքաղաղ»²⁸⁵:

Ըստ Տաթևացու այլաբանական խորհրդանիշի ընտրութեան համար առակում, փոխաբերական խօսքում կարեւոր պայման է, որ այն լինի ֆանտի, իր յատկանիշներով դիտարկուած եւ կենսափորձով հաստատուած: Ուստի «առակաւոր խօսքի» օրինակը միշտ «ընտանի եւ ծանօթ է ամենեցուն»²⁸⁶: Այս բոլոր բացատրութիւնների հետ միաժամանակ, Տաթևացիին բազմիցս զգուշացնում է, որ «առակաւոր բանը» չպէտք է հասկանալ բառացի: Անհեթեթութիւն կը լինի կարծել, թէ «անզգամն եկեր զմարմին իւր» նշանակում է, թէ մէկը կերել է իր մարմինը «ո՛չ թէ զայն ստուգէ բանս, թէ մարդ զիւր մարմին ուտէ, այլ օրինակաւ ցուցանէ զբանս թէ ո՛րպէս հարեալն ի դիւէ կատաղի եւ զմարմինն իւր ուտէ»²⁸⁷: «Առակաւոր խօսքում» միշտ պէտք է որսալ ճշմարտութիւնը.

²⁸¹ Գիրք Քարոզութեան, Զմեբան, էջ 190:
²⁸² Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 196-197:
²⁸³ Նոյն տեղը, էջ 198:
²⁸⁴ Նոյն տեղը, էջ 392:
²⁸⁵ Մեկնութիւն Մատթէի, էջ 238բ:
²⁸⁶ Մեկնութիւն Մատթէի, էջ 194բ:
²⁸⁷ Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 248:

«Որտալ զճշմարտութիւնն, այսինքն ըմբռնել զճշմարտութիւնն, որպէս որսորդն զորսն դիտէ եւ որոնէ զհետսն մինչեւ գտանէ»²⁸⁸:

Ճաթեւացին բարձր է գնահատել «առակաւոր խօսքի» դերը: Եթէ Արիստոտելը փոխաբերութեան գործածութիւնը դիտում էր իբրեւ տաղանդի նշան, ապա ըստ Ճաթեւացու դրա հասկանալը նոյնպէս մատչելի էլ՝ բոլորին. «յանարժանից (է) ծածկեալ»²⁸⁹: Նա «առակաւոր խօսքը» համեմատում է սանդուղքի հետ, որով «միտք մարդոյն ի վեր ելանէ»²⁹⁰: Այն օգնում է նաեւ ամրակայելու սովորածը. «Առանց օրինակի բանն շուտ գնայ, բայց գեղեցիկ օրինակաւ հաստատ մնայ»²⁹¹ եւ հաստատելու խօսքը. «առակն պիտանի է բանին եւ վկայ հաստատութեան»²⁹²:

Նրա կարծիքով «առակաւոր խօսքը» բացառիկ արժէք ունի Սուրբ Գրքում. «զպայծառութիւնն արեգական հայելով տեսանեմք . . . նոյնպէս ի պայծառ լոյս Աւետարանին՝ առակաւոր բանիւք»²⁹³:

Փոխաբերական խօսքի տեսական լաւ իմացութեանը Ճաթեւացին զուգակցել է դրա հմուտ, բազմաբնոյթ կիրառութիւնները (դարձուածքներ, փոխաբերութիւններ, պատկերաւոր համեմատութիւններ). մտօք հայել յիմանալին, հոգին գիրամայ մեղօք, կարկատեմ սուտս, իբրեւ պարիսպս անկանել (այսինքն պաշտպանել), ի բերան կայր (արտասանուում էր), աղքատանալ ի մեղաց (ՆՀԲ-ն այս վերջին ձեւը համարում է անսովոր եւ հազուադէպ՝ վկայակոչելով միայն Մաքսիմոս Կոստանդնուպոլսեցու «աղքատանալ ի շարութեանէ» կիրառութիւնը): Ճաթեւացու գրական ժառանգութիւնը յատկապէս հարուստ է փոխաբերութիւններով եւ պատկերաւոր համեմատութիւններով, որոնց նա դիմում է օրինակներ բերելիս, թէ՛ նախատական եւ թէ՛ դրուատական խօսք ասելիս եւ վերջապէս ասածն ակնառու դարձնելու նպատակով. «Ոսկին եւ պատուական ակն յարեգակնէ առնուն զճանաչն, իսկ իմաստութիւնն փայլեցուցանէ իբրեւ զարեգակն»²⁹⁴: «Հերձուածողին բերանն բացեալ զգարչահոտ բանս հանէ եւ խօսի եւ ծածկեալ զմեռելոտի մտածմունս խորհի»²⁹⁵: «Իմաստուն մարդն . . . նման է պայծառ աստեղաց, որ մեծագոյն քանակաւ փոքր երեւի տեսողաց. բարձրացեալ եւ գերամբարձեալ մտօք ի յերկինս, անմոլար ըստ ինքեան եւ այլոց մոլար թուեցեալ, այսինքն՝ տգիտաց»²⁹⁶:

Նա վերլուծում է նաեւ բազմաթիւ առակներ, բացատրում, թէ ինչո՞ւ է ընտրուել այն կամ այն այլաբանական խորհրդանիշը:

Ինքնատիպ եւ բազմաբնոյթ են նրա կողմից հոմանիշների, հականիշների, բազմիմաստ բառերի կիրառութիւնները, որոնց շարքը նա երբեմն լրացնում է իր ստեղծած (բառաբարդման եւ ածանցման ճանապարհով) նոր բառերով²⁹⁷:

Հոմանիշների առատ կիրառութիւնը ծառայել է մի կողմից՝ խուսափելու կրկնութիւնից, միւս կողմից՝ համակողմանիօրէն, ամբողջական բացատրելու երեւոյթը: Օրինակ, գիսաստղի համար մերթ օգտագործում է գիսաւառք աստղ, մերթ՝ սլացեալ աստղ եւ մերթ՝ աստղաֆետր նոր բառը (որ պէտք է լինէր աստղագեւոր, այսինքն ազի ունեցող աստղ): Չկրկնելու համար կրկին գիմեալ բառակապակցութիւնը, դիմում է բառաբարդման եւ երկրորդ անգամ օգտագործում կրկնագէմ բառը: Նոյն նպատակով անգօտի-ն փոխարինում է գօտէլոյժ բառով: Ոստելով արծուի մասին եւ զանազան տեղեկութիւններ հաղորդելով նրա վերաբերեալ, Ճաթեւացին հետեւեալ մակդիրներն է

²⁸⁸ Գիրք Պարապմանց Կիւրդի, էջ 697:
²⁸⁹ Համառօտ Հաւաքումն յԱռակաց, էջ 324բ:
²⁹⁰ Գիրք Բարոգութեան, Ձմեռան, էջ 376:
²⁹¹ Նոյն տեղը:
²⁹² Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 324բ:
²⁹³ Մեկնութիւն Մատթէի, էջ 192ա:
²⁹⁴ Գիրք Բարոգութեան, Ձմեռան, էջ 225:
²⁹⁵ Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 15ա:
²⁹⁶ Գիրք Բարոգութեան, Ձմեռան, էջ 174:
²⁹⁷ Համոզուած լինելով, որ Ճաթեւացու գրական ժառանգութեան լեզուա-ոճական առանձնայատկութիւնները առանձին եւ ամբողջական ուսումնասիրութեան նիւթ կարող են դառնալ, այնուամենայնիւ, որոշ կողմերով դրանք ներկայացնում ենք իբրեւ նրա տեսական հայեացքների լուսարանման օժանդակ միջոց:

կիրառում. բարձրաթիւիչ, սառաչ (իր կազմած նոր բառերից է), բազմակեաց, թագաւորական, վերագոյն: Հոմանիշների շարքեր է ստեղծում հետեւեալ բառերով.

կոծին, հեծեն, ողբան, ապաշաւեն
ի սպառ, ի վախճան, ի վերջքն
հուսկ յետոյ, անագան, ի վերջին դարս
յանկէտ, յաւիտեան
խոզաբարոյ եւ անառակ
շարակցեալ, կալեալ, կապեալ
ժպիրհ, դառն եւ յանդուգն եւ այլն:

Իւրօրինակ եւ հետաքրքիր են Ճաթեւացու աշխատութիւններում հոմանիշների անհատական կիրառութիւնները, որոնք թոյլ են տալիս հետեւելու, թէ ի՞նչպէս է միջնադարեան հեղինակը ընդհանրութիւններ գտել տարբեր իմաստ ունեցող բառերի միջեւ: Այդ կարգի հոմանիշներից են.

օղապարիկք, հպարտք
երկրաբարչ եւ անհանճար
նրբահայեացն եւ ուսեալն
ծանրաշարժ, ծոյլ, տրտմակեաց
ոչ մտերիմ, գրախօս, զլացող
բազմամանուած, բազմահիւս, բազմանիւթ, բազմաթիւր, բազմասուտ:

Ակնյայտ է, որ նման կիրառութիւնների համար էական է բառի փոխաբերական իմաստի եւ առհասարակ իմաստային նրբերանգների հաշուի առնելը: Օրինակ, վերջին շարքում առաջին երեք բառը օգտագործուած են փոխաբերական նշանակութեամբ, որը բացայայտում է վերջին երկու հոմանիշների միջոցով. «Բազմամանուած, որպէս ասէ զբազմահիւսս ժողովեն, որ է բազմանիւթ կամ բազմաթիւր կամ բազմասուտ» (ընդ որում, վերջինը Ճաթեւացու նորակազմութիւններից է)²⁹⁸:

Ճաթեւացին հմտօրէն է օգտագործում նաեւ հականիշները, դրանցով նշանակուող երեւոյթները բնութագրելով իբրեւ «ներհակ» կամ «հակառակ». «Ներհակ են կորուստն եւ գիւտն, որպէս լոյս եւ խաւար»²⁹⁹. «Ճշմարտութիւն է պարզաբան, որ ոչ ունի ստութիւն եւ հակառակ իւր, որպէս զխաւար՝ լոյս, իսկ ճշմարիտն ունի գաւառն հակառակ իւր, որպէս լոյս՝ խաւարն»³⁰⁰:

Նա նկատել է, որ հականիշներով նշանակուած են հակադիր բեւեռում գտնուող երեւոյթները. «Բարկութիւն վերին ծայրքն է եւ հեղուքիւն ներքին եւ ամենայն ուրեք ընդդէմ միմեանց են»³⁰¹, թէպէտ ըստ նրա, ոչ բոլոր երեւոյթներն են օժտուած հակառակ եզրով, ինչպէս օրինակ, ճշմարտութիւնը կամ իմաստութիւնը. «Ճշմարտն փոխի երբեմն ի սուտն, որպէս իմաստասիրաց բանքն, իսկ ճշմարտութիւնն ոչ փոխի»³⁰². «Եւ դարձեալ զի նոցա ամենեցուն ներհակ գոյ, որպէս մեծութեան՝ աղքատութիւն, առողջութեան՝ հիւանդութիւն եւ կեանաց՝ մահ: Իսկ իմաստութեան՝ ոչ ինչ է ներհակ»³⁰³:

Ճաթեւացու գործածած հականիշները նոյնպէս կարելի է խմբաւորել ըստ համագործածական կամ անհատական լինելու: Առաջինները բաւական մեծ թիւ են կազմում.


գեղեցկութիւն — տգեղութիւն
ուրախութիւն — տրտմութիւն
ուշիմ — ապուշ
խորագէտ — պարզամիտ
բարեբարոյ — չարաբարոյ
յանդուգն — հեղ
հաւատ — անհաւատութիւն
երկնաւոր — երկրաւոր
հոգեւոր — մարմնաւոր
աղքատք — մեծամեծք

²⁹⁸ Գիրք Պարապմանց Կիւրդի, էջ 762:
²⁹⁹ Մեկնութիւն Մատթէի, էջ 162ա:
³⁰⁰ Գիրք Բարոգութեան, Ձմեռան, էջ 173:
³⁰¹ Մեկնութիւն Մատթէի, էջ 76բ:
³⁰² Գիրք Բարոգութեան, Ձմեռան, էջ 173:
³⁰³ Գիրք Հարցմանց, էջ 178:

Հայարտ — խոնարհ
կարգաւոր — անկարգ
հակակայ — միաբանք

օտարք — ազգականք
դիւրահաւան — անհաւան
միջնորդաւ — անընդմիջաբար:

Տաթեւացիները երբեմն նոյն բառի համար բերում է մի քանի հականիշներ, որոնք իրենց հերթին կազմում են հոմանիշների շարք.



Անհաստական հականիշները երբեմն անհամասեռ են կառուցուածքային առումով (ասենք՝ մէկն արտայայտուած բառով, միւսը՝ բառակապակցութեամբ).

լեզուազար — լեզուովն հեզ
բարձրիմաց — երկրաքարչ խորհրդով
որիչ որիչ — միահետ
ջրհոր — անջրդի գուբ:

Կան հականիշներ, որոնք հակադրուած են նաեւ բաղադրիչներով եւ լրացումներով.

դիւրամուտ եւ դժուարել
վաղ առաւօտն եւ խոր երեկոյն
թշնամիք անհաշտելիք եւ սիրելիք անբակտելիք:

Տաթեւացիները երբեմն դիմում է նաեւ ոճական այնպիսի հնարանքի, ինչպիսին օքսիմորոնն է (երբ երեւոյթը բնութագրուում է հակառակ յատկանիշով).

բարկութիւն բարի
հեզութիւն չար:

Յայտնի է, որ առածներում, ասացուածքներում հականիշների գործածութիւնը սիրուած միջոց է, ինչպէս. «Գիտունին գերի եղէ, անգէտին՝ ոչ սիրելի»: «Դուրսը քահանայ, ներսը՝ սատանայ»: Ուստի Տաթեւացու թեւաւոր խօսքերից, ասոյթներից յատկապէս նրանք, որոնք հականիշներ ունեն մօտ են ժողովրդական բառ ու բանին.

Յիմար լեր ի չարիս եւ իմաստուն ի բարիս:

Ձի որ ամառն շրջի ի կունէ ի կուռն, ի ամեռն շրջի ի դունէ ի դուռն:

Ոչ կարէ չափաւորն զանչափն իմանալ եւ տեսանել:

Ո՛չ ամենայն առաջին պատուական է, ո՛չ ամենայն յետին՝ անարգ:

Բժշկութիւն հոգւոյս՝ դառնութիւն մարմնոյս լինի:

Անկատար հայրն կարէ կատարեալ որդիս ծնանիլ, որպէս կոյր հայրն աչխաւոր որդի ծնանի:

ԳՎՈՒՆ ԵՐՐՈՐԳ

ԲԱՌԱՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՏԱԹԵՒԱՑՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Բառերի ստուգաբանութիւնը եւ մեկնութիւնը հայ միջնադարեան քերականական գրականութեան մէջ ընդունուած երեւոյթ է եղել: Աստիճանաբար, գրաւոր եւ խօսակցական լեզուի միջեւ աճող տարբերութիւնը ստիպել է քերականներին, նաեւ՝ մեկնողական երկերի հեղինակներին իրենց աշխատութիւններում բազմաթիւ բառեր մեկնել կամ բացատրել: Միջնադարեան հայ քերականները դա անուանում են նաեւ ստուգաբանութիւն, թէեւ գիտական ստուգաբանութեան սկզբունքների մենք հանդիպում ենք սակաւաթիւ հեղինակների աշխատութիւններում⁵⁰⁴: Աւելի յատկանշական է այն փաստը, որ ստուգաբանութեան նկատմամբ հանդէս է բերում լուրջ մօտեցում ի տարբերութիւն Եւրոպայի⁵⁰⁵: Դաւիթը նշում է, որ «ո՛չ ամենեցուն է գիտս այս, այլ խոհեմազունիցն եւ եթ»⁵⁰⁶: Գրիգոր Մագիստրոսը, որ մշակում է ստուգաբանութեան մի շարք գիտական սկզբունքներ, նոյնպէս գտնում է, որ «ոչ է բազմաց զսա գիտել, բայց իմաստնոց»⁵⁰⁷. Նոյն կերպ են վերաբերում ստուգաբանութեանը Յովհաննէս Արզնկացի եւ Գրիգոր Տաթեւացի. վերջիններս Մագիստրոսի նման ստուգաբանութեան համար կարեւոր պայման են համարում այլ լեզուների իմացութիւնը. «Իարձեալ՝ պիտանի է ի ստուգաբանութիւնս բանի: Զի թէ՛ ո՞ք զամենայն լեզուս գիտիցէ, ոչ ինչ բառի կարօտանայ»⁵⁰⁸, — գրում է Տաթեւացին:

Տաթեւացի բառերի մեկնութիւնը եւ ստուգաբանութիւնը անհրաժեշտ է համարել, որովհետեւ նրա կարծիքով բառերն ունեն ներքին իմաստներ, որոնք յաճախ խաթարում են տգէտ ընթերցողներին, գրիչների կողմից. «Ճշմարտից իմաստքն ի ներքոյ բառիցն եւ գրոցն է ծածկեալ: Եւ սոքա այլայլին ի տգէտ գրչաց եւ ի գնչու եւ ի տգէտ ընթերցողաց. յայտ է թէ՛ եւ բանն այլայլի ի նոցանէ»⁵⁰⁹, այսինքն բառի աղաւաղումը, ըստ Տաթեւացու, տանում է նաեւ մտքի աղաւաղման. հետեւաբար բառի բացատրութիւնը եւ ստուգաբանութիւնը ունեն կրկնակի արժէք:

Տաթեւացին ի տարբերութիւն շատ քերականների տարբերում է ստուգաբանութիւնը եւ բառի բացատրութիւնը. առաջին դէպքում, եթէ նա գործ ունի փոխառեալ բառի հետ, ապա բառը ստուգաբանում է այն լեզուի տուեալներով, որից այն փոխ է առնուած, իսկ բացատրութեան դէպքում տալիս է հիմնական իմաստը (կամ իմաստները). յատկանշական է «կանոն» բառի ստուգաբանութիւնը եւ մեկնութիւնը. «Ստուգաբանութեամբ կոչի կանոնն քանոն, այսինքն ուղղութիւն եւ կարգ եւ օրէնք, իսկ մեկնութեամբ կոչի սահման»⁵¹⁰:

Ի մի բերելով Տաթեւացու կատարած ստուգաբանութիւնները, յստակօրէն կարելի է առանձնացնել երկու սկզբունք.

ա. այսպէս կոչուած «ժողովրդական ստուգաբանութեան» սկզբունք (մեծ մասամբ նա դիմում է այս սկզբունքին).

բ. ստուգաբանութեան գիտական սկզբունք (հիմնականում ընդգրկում է փոխառեալ եւ բնածայն բառերը):

Սրանց մէջ ըստ իմաստային դաշտերի կարելի է առանձնացնել յատուկ անունների, աշխարհագրական անունների, կրօնական ծէսերի, ամսանունների խմբերը:

⁵⁰⁴ «Ստուգաբանութիւն» տերմինը մենք օգտագործում ենք որոշ վերապահութեամբ, որովհետեւ, ինչպէս յայտնի է, ստուգաբանութիւնը իբրեւ այդպիսին հանդէս է գալիս միայն ԺԹ. դարից, իսկ միջնադարեան հայ քերականները կիրառել են գիտական ստուգաբանութեան որոշ սկզբունքներ միայն:
⁵⁰⁵ Այդ մասին տես, Գ. Ջահուկեան, Քերականական եւ Ուղղագրական Աշխատութիւնները, էջ 213:
⁵⁰⁶ Նոյն տեղը, էջ 134:
⁵⁰⁷ Նոյն տեղը, էջ 213-214:
⁵⁰⁸ Գրիգ. Հարցմանց, էջ 297:
⁵⁰⁹ Մատենադարան, ձեռագիր Հ. 1115, էջ 196բ:
⁵¹⁰ Գրիգ. Հարցմանց, էջ 538:

Բառերի մեկնությունն իր ծառայով գերազանցում է ստուգաբանող բառերի քանակին: Սրանք գիտական առումով աւելի արժեքաւոր են եւ հետաքրքիր, առաւել եւս, որ ինչպէս նշել ենք, դրանք ընդգրկուած չեն «Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի» վկայութիւնների մէջ, իսկ Աճառեանի «Հայերէն Արմատական Բառարանում» վկայակոչուած են մասամբ միայն:

Ճաթեւացին նկատելով, որ հայերէնում բառերի զգալի մասը բազմիմաստ է, թուարկել է մեկնուող բառերի բազմաթիւ իմաստներ, այսպիսով ստեղծելով հոմանիշ բառերի մի մեծ ցանկ: Միւս կողմից մեկնուող բառերի մի մասն արդէն անհասկանալի դարձող, գործածութիւնից դուրս եկող կամ բառիմաստի փոփոխութիւն կրած բառերն են, ուստի դրանց ցանկով կարելի է որոշ եզրակացութիւններ անել հայերէնի բառապաշարում այդ դարերում կատարուած փոփոխութեան ընթացքի վերաբերեալ: Բացի այդ, այդ մեկնութիւնները պատմական արժէք են ներկայացնում ինքնին, որովհետեւ բառերի բացատրութեան վաղ փորձերից են, եւ դրանց զգալի մասը գիտական է եւ այսօր էլ ընդունելի:

Ա. ԲԱՌԵՐԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

Բառերի բացատրութեամբ Ճաթեւացին սկսել է զբաղուել դեռ սարկաւազութեան տարիներից: 1371 թ. նա ընդօրինակում է մի ձեռագիր, որն իմաստասիրական մի շարք գործերի հետ պարունակում էր նաեւ հայատառ եռալեզուեան արաբերէն-պարսկերէն-հայերէն բառգիրք⁵¹¹: Այս փաստը հետաքրքրական է այնքանով, որ հետագայում Ճաթեւացին բառերի բացատրութեան մէջ համարժէքները բերելիս երբեմն դիմում է նաեւ այլ լեզուների, որոնց թւում եւ արաբերէնին, եւ պարսկերէնին: Սրանք, սակայն, յունարէնի եւ եբրայերէնի համեմատութեամբ խիստ փոքր թիւ են կազմում:

Ճաթեւացու մեկնած բառերի ցանկում առանձնանում են հետեւեալ խմբերը.

- ա. նրա օրերում արդէն անհասկանալի դարձած, ոճական սահմանափակում ստացած բառեր
- բ. հոմանիշների խումբ
- գ. համանունների խումբ
- դ. բառեր, որոնք նա բացատրում է նորովի
- ե. բառեր, որոնց համարժէքները բերում են այլ լեզուներով:

Ճաթեւացին կիրառում է հումանում, բազմանում, փաղանում, յարանում, համանում տերմիններ:

Միջնադարեան միւս քերականների նման նա չի տարբերում համանուն եւ բազմիմաստ բառերը՝ հումանում տերմինը հաւասարապէս կիրառելով երկուսի համար էլ. «հոմանուն է, որոյ անունն մի լինի եւ բնութիւնն այլ եւ այլ»⁵¹². «հոմանուն է, վասն որոյ ցուցանէ թէ քանի նշանակութիւն ունի»⁵¹³:

Ինչպէս նախորդ գլխում տեսանք, նրա կիրառութեամբ տարբերակուած են բազմանունը եւ փաղանունը: Բազմանունը համարժէք է արդի հայերէնի հոմանիշ տերմինին («բազմանունն մի է իրօք»):

Համանունը բերում է իբրեւ բազմանունան համարժէք, այսինքն ինչպէս բազմանունը սա եւս ունի նոյն երեւոյթն այլ կերպ անուանելու գործառութիւն. «Ամուք համանուն ներքինի կոչին»⁵¹⁴:

Հակառակը դիտում է իբրեւ միմեանց «հակառակ» եւ «ներհակը» երեւոյթները նշանակող բառեր:

⁵¹¹ Մատենադարան, ձեռագիր հ. 7151:
⁵¹² Գիրք Պարապմանց Կիւրղի, էջ 691:
⁵¹³ Նոյն տեղը, էջ 530:
⁵¹⁴ Մեկնութիւն Մատթիի, էջ 249բ:

Սրանցից բացի երբեմն դիմում է տրամաբանական տերմինների. սեռ եւ տեսակ («Ապաշխարհութիւն սեռ է եւ բաժանի ի Գ տեսակս կամ ի Գ մասունս: Որ է նախ զըջումն, երկրորդ՝ խոստովանութիւն, երրորդ՝ հատուցումն»⁵¹⁵. համազոյգ («Կամքն եւ կարն համազոյգ են»⁵¹⁶):

Ճաթեւացու մեկնած բառերի մէջ մեծ թիւ են կազմում հոմանիշները. հիմնականում երկանդամ եւ եռանդամ, համեմատաբար քիչ թուով՝ բազմանդամ: Դրանք բազմաբնոյթ են թէ՛ իմաստային, թէ՛ ոճական եւ թէ՛ կառուցուածքային անուաներով⁵¹⁷:

Հոմանիշների շարքում մենք առանձնացրել ենք մի խումբ, որը հետաքրքիր է յատկապէս դրանց առաջացման առումով: Այդ բառերը նշխ-ն ներկայացնում է իբրեւ հոմանիշներ, սակայն Ճաթեւացու օրօք դրանք գիտակցուել են իբրեւ տարբեր իմաստ ունեցողներ.

- պանդուխտ, նշրեհն, եկն
- խէթ, որս, քէն || նենգ
- հիւանդութիւն, տկարութիւն, ցաւ
- կոխ, մարտ, պատերազմ
- աղքատ, տնանկ
- երկրպագանել, պաշտել
- գող, աւազակ || յափշտակող:

Պանդուխտ – որ եկեալ է յայլ գաւառէ ի մէջ մեր եւ կարօտ է տան եւ ժառանգութեան եւ այլ ոց (Գիրք Քարոզ. Ամ. 360).

նշրեհն – որ կամաւ թողեալ է զազգն իւր եւ զհայրենիս եւ յօտարութիւն շրջի անինչ (նոյն տեղը).

եկն – որ եկեալ հարեալ է ի մեզ եւ կարօտ է հաւատոց եւ բարեաց գործոց, խրատու եւ ուսման, որոց պարտ է ողորմիլ առաւել եւ տալ զպիտոյան (նոյն տեղը):

խէթ – մնացուած բարկութիւն է (Մեկն. Մատթ. 105բ).

որս – (մնացուած) մախանաց (նոյն տեղը).

քէն եւ նենգն – (մնացուած) ատելութեան, զի բանին մասին է (նոյն տեղը):

հիւանդութիւն – է պակասութիւն առողջութեան (Մեկն. Մատթ. 70ա).

տկարութիւն – (է) պակասութիւն գօրութեան (նոյն տեղը).

ցաւ – (է) ի զգայական ջիւքն (նոյն տեղը):

կոխ – որ է լեզուաւ (Գիրք Քարոզ. Ամ. 393).

մարտ – որ է անձամբ (նոյն տեղը).

պատերազմ – որ է սրով եւ աղեղամբ (նոյն տեղը):

Աղքատ – որ ի բնէ ծնողաց կարօտ է ընչից եւ պակաս (նոյն տեղը, 359).

տնանկ – որ մեծ տանէ ակնեալ է եւ չքաւորեալ (նոյն տեղը):

Երկրպագանել – մարմնոյն է եւ պաշտելն մտաց: Դարձեալ երկրպագանելն ծուներ կրկնելն է (Մեկն. Մատթ. 59բ).

պաշտել – օրինաց կատարումն է, այսինքն որ ի միտս, հաւատ, յոյս, սէր. այս պաշտելն է: Եւ որ ի ձեռս նուէրք մատուցանեն եւ ձայնիւ փառաբանեն պաշտել կոչի (նոյն տեղը):

Գող – որ ի ծածուկ նենգեն, գող կոչին եւ զրկող . . . զի այն որ գաղտ տանի զինչս ի տանէն գող կոչի (Գիրք Քարոզ. Ամ. 25).

յափշտակող, աւազակ – որ յայտնի ի ճանապարհս իւլեն, յափշտակողք եւ աւազակք կոչին (նոյն տեղը):

Համեմատելով նշխ-ն եւ Ճաթեւացու բացատրութիւնները, դժուար չէ նկատել, թէ ինչպէս են այդ բառերը վերածուել հոմանիշների (թէեւ բոլորը չեն, որ բացարձակ հոմանիշներ են): Դա նախ

⁵¹⁵ Մեկնութիւն Սաղմոսաց, էջ 52բ:
⁵¹⁶ Գիրք Քարոզութեան, Զմեբան, էջ 175:
⁵¹⁷ Հոմանիշ բառերի իմաստային, ոճական, կառուցուածքային դասակարգման սկզբունքների համար դիմել ենք Ս. Մելքոնեան, Ակնարկներ Հայոց Լեզուի Ոճաբանութեան, Երեւան, 1984. Ա. Սուքիասեան, Հոմանիշները ժամանակակից Հայերէնում, Երեւան, 1971, աշխատութիւնների:

եւ առաջ պայմանաւորուել է իմաստային ընդհանուր եզրի առկայութեամբ: Այսպէս, պանդուխտ, նժուխ բառերի համար ընդհանուր է հայրենի տնից հեռանալը, օտարութեան մէջ գտնուելը, սակայն ի տարբերութիւն պանդուխտի, որ նշանակել է մի գաւառից մի այլ գաւառ տեղափոխուած մարդ, նժուխ կոչուել է ընդհանրապէս հայրենի եզերքը, հայրենիքը թողած մարդը: Պանդուխտը հետագայում սկսել է գործածուել այս երկրորդ իմաստով նոյնպէս, իսկ նժուխը անցել է բառապաշարի քիչ գործածական բառերի շարքը⁵¹⁸:

Տաթևացու այս բացատրութիւնները բացառիկ նշանակութիւն ունեն պատմական բառարանագրութեան համար. վկայակոչելով նրան, հաստատապէս կարելի է ասել, որ վերոյիշեալ բառերի իմաստային տարբերակութիւնը յստակօրէն ընկալուել է մինչեւ ԺՆ. դարի սկիզբը. միւս կողմից՝ դրանք արժէքաւոր են բառագիտութեան, ոճագիտութեան համար, որովհետեւ այդ բառերի իմաստային տարբերակութեան ընդգծումով Տաթևացին ուշադրութիւն է հրահրում բառի ճիշդ գործածութեան վրայ:

Տաթևացու բառամեկնութիւնների մէջ հանդէս եկող հոմանիշների յաջորդ խումբը միատարր չէ՝ կառուցուածքային առումով, այսինքն բառը բացատրուած է յարադրութիւններով, շրջաստութեամբ, որոշիչ եւ այլ լրացումներ ունեցող բառակապակցութիւններով.

անապատ – ապառաժ եւ դժուարին տեղի է. անշէն է եւ ամենայն պիտոյից պակասութիւն (Գիրք Քարոզ. Զմ. 105).

բազմաբաղձիկ – այսինքն բազմաց բաղձալի (Գիրք Պարապմ. Կիւրղի, 606).

երկնչիլ – երկբայիլն է եւ առնելն գթեքանաւատութիւն (նոյն տեղը, 713).

խորշիլ – խոյս տալ (նոյն տեղը, 647).

միամիտ – միակամ, միաբան լինել. ոչ երկմիտ եւ երկբայ լինել. անմեղ լինել (Մեկն. Մատթ. 156բ).

լուսինն – տիկին երկնից ասեւ (նոյն տեղը, 26).

շաղփաղփ – այսինքն խառնափնդոր եւ հակառակ միմեանց (Գիրք Պարապմ. Կիւրղի).

պաղատել – ժտելով խնդրելն է (նոյն տեղը, 647).

պարզամիտ – յստակ լինել (Մեկն. Մատթ. 156բ).

պատասպարելն – է թիկամբ ամբանալ (Գիրք Քարոզ. Ամ. 531).

ցողն – կանուխ անձրեւն է (նոյն տեղը, էջ 700).

մտարն – անբանից կերակրոյ է տեղի (Գիրք Քարոզ. Զմ. 45).

մատուռն – որ է կաթուղիկէն մեծ (նոյն տեղը, 88):

Կան եւ սակաւաթիւ օրինակներ, երբ բառակապակցութիւնն է բացատրուած բառով.

յորդ անձրեւ – գոր տարափ կոչէ (Գիրք Քարոզ. Զմ. 18).

ոչ բարեկիրթ – այսինքն դժուարակիրթ կամ դժուարիմաց (Գիրք Պարապմ. 594):

Հոմանիշների միւս խումբը հանդէս է գալիս ոճական տարբերակութեամբ, այսինքն գուգա-հեռ տրուած են գրական եւ խօսակցական, գրական եւ բարբառային, համագործածական եւ մասնաւոր գործածական, գործուն եւ ոչ գործուն ձեւերը.

հայեցողութիւն – որ ըստ գեղջուկ բարբառոյ յիշոցք թարգմանի (Գիրք Քարոզ. Ամ. 81).

հղանցն – որ է ծոփքն (Մեկն. Սաղմ. 82ա).

դժուարքմբեր – անտանելի (Գիրք Քարոզ. Զմ. 121).

կնիք – մատնէհար (նոյն տեղը, 68).

հաղբ – որոգայթն է (Գիրք Պարապմանց, 549).

յարացոյց – օրինակն է (Գիրք Պարապմանց, 555).

⁵¹⁸ Հմտ. ՆՀԲ-ի բացատրութիւնների հետ. պանդուխտ – որ հեռացեալ է ի հայրենի երկրէն՝ յօտար աշխարհ դեպքերի. վտարանդի. նժուխ. եկ նժուխ – պանդուխտ. օտարական. տարաշխարհիկ. եկ եկ – եկեալ ոք արտաբնու. օտարական . . . պանդուխտ. գաղթական:

ջալլամն – որ է ըշտտուրմուղն (Գիրք Հարցմանց, 365).
ֆարբ – այսինքն արքայիկ (Գիրք Քարոզ. Զմ. 136).

Ն. Հոմանիշների վերջին խումբը հանդէս է գալիս բառամեկնութիւնների այն տիպում, որտեղ գուգահեռ տրուած են բնիկ եւ փոխառեալ ձեւերը.

անսուաղութիւն – գոր փէքիթ կոչեն (Գիրք Քարոզ. Ամ. 359).

առեալատչեայ – որպէս չաշնի (ձեռ. հ. 1115, 202ա).

արմաւ հաւ – գոր այլք փիւնիկ ասեն, որ է յԱրաբիայ. որ ծախէ զինքն հրով եւ դարձեալ կենդանայ (Գիրք Հարցմանց, 50).

շուշան – որ ի ծովու բուսանի եւ դեղին է ծաղիկն, գոր նունուֆար կոչեն (Մեկն. Մատթ. 123բ).

սուր – Դ է սուր պատերազմողաց, որպէս պէլէթիկն. երկրորդ՝ երկայրի. երրորդ՝ սուր հատող. չորրորդ՝ նետ եւ նիզակ խոցող (նոյն տեղը, 161ա).

փող – գոր այժմ այլ ազգէք նային անուանեն (նոյն տեղը, 145բ).

ֆղանցն – որպէս այլ ազգէք չլնկ կոչեն (Մեկն. Սաղմ. 82ա).

ֆուսիթայն – որ է ծփուլն (Գիրք Քարոզ. Ամ. 175)⁵¹⁹:

Բառամեկնութիւններում առանձնանում է մի խումբ, որոնք նոյն բառի տարբերակները չի նշելով՝ գրափոխութեան, ածանցման, հնչիւնի յաւելման կամ անկման ուղիներով առաջացած, Տաթևացու կողմից բացատրուած են իբրեւ տարբեր իմաստ ունեցող բառեր: Այս բացատրութիւնները դարձեալ հետաքրքիր են բառի պատմութեան առումով, որովհետեւ քերականական երեւոյթը պատճառ է դարձել բառի իմաստափոխութեան եւ իբրեւ առանձին միաւոր հանդէս գալուն. Տաթևացու բացատրութիւններում այդպիսի տարբերակուած զոյգեր են դժգմիլ-գժգմիլ, դժբել-դրժբել, դսրո-վել-դրսովել, կրճտել-կրճել, ցրուել-ցրել, բխում-բղխում:

Դժգմեցայ – որ է տրտմեցայ (ձեռ. հ. 1115, էջ 201ա).

գժգմեցայ – որ է խոժորեցայ (նոյն տեղը) (Հմտ. ՆՀԲ. որ եւ գժգմիմ, դժգմիմ – խոժորիլ. դժկամիլ. տժգունիլ. տխրիլ):

Դրժեցայ – որ է խաբեցայ (ձեռ. հ. 1115, էջ 201ա).

դժրեցայ – որ է դժարացայ (նոյն տեղը) (Հմտ. ՆՀԲ. որ եւ դրժել – նենգել. դաւել. դաւաճանել. խարդախել. ստել):

Դքսովել – որ է պարսաւել (նոյն տեղը).

դսրովել – որ է բամբասել (նոյն տեղը) (Հմտ. ՆՀԲ. որ եւ դրսովել – եպրել. բամբասել. պարսաւել . . . զրապարտել):

Կրճտել, կրճել – Ոչ ասէ կրճտել, այլ կրճել, զի բունութեամբ է եւ ոչ կամաւ (Մեկն. Մատթ. 195բ) (ՆՀԲ-ն «կրճտեմ» բացատրում է. «կրճել գատամունս», իսկ «կրճեմ»՝ «կրճ-կրճ ձայն հանել ատամանց կամ շօշափել զմիմեանս բարխմամբ. մանաւանդ յերեսաց սառնամանեաց», այսինքն նոյնպէս նշում է դրա հարկադիր բնոյթը, որը եւ ընդգծում է Տաթևացին):

Ցրուել, ցրել – ցրուել՝ փախչելն է⁵²⁰ եւ ցրել՝ կորուսանելն (նոյն տեղը, էջ 307ա) («ցրուեմ»ի դիմաց ՆՀԲ-ն փախչել իմաստը չի տալիս, սակայն վկայութիւնների մէջ այդ նշանակութեամբ կիրառութիւն կայ. «ցրուեցաւ ժողովուրդն իւր ի նմանէ», որ այստեղ նշանակում է՝ հեռացաւ, խոյս տուեց):

Բխումն, բղխումն – Բղխումն, որ ունի երկու քմակից գիրն զատ եւ իսէ, ոչ ամենայն ուրեք այլ յատկութիւն է, որ զինչ բղխումն վասն Աստուծոյ եւ վասն հոգւոյ լինի: Բ գիր է եւ մարմնական բխմանց մին գիր, որպէս աղբիւր լուսոյ եւ այլ ինչ (Մեկն. Սաղմ. 79բ): (Ցանկանում ենք ուշադրութիւն հրահրել հետեւեալի վրայ. այս երկու ձեւերից նախնականը բուլ ձեւն է եւ միայն յետնաբար՝ բուլղս (տե՛ս, ՀԱԲ, հ. 1, էջ 481): Ինչպէս տեսնում ենք, սրա անուղղակի

⁵¹⁹ Այս վերջին դէպքում փոխառութիւն են երկուսն էլ. ֆուսիթայն ասորական փոխառութիւն է իսկ ծփուլը չնայած ստուգաբանուած չէ, սակայն նրա փոխառեալ լինելը կասկած չի յարուցում, քանի որ Աճառեանի վկայութեամբ այն գործածուած է միայն Տաթևացու կողմից (տե՛ս, ՀԱԲ, հ. 2, էջ 476):

⁵²⁰ Բնագրում՝ փաղչել. Մեկնութիւն Մատթի, էջ 307ա:

արտացոլումը կայ նաև Ճաթեւացու բացատրութեան մէջ. ընդհանրապէս բխելու համար (լոյսի եւ «այլ ինչի») օգտագործում է բխումն ձեւը, իսկ այլաբանական բնոյթի ծագման համար (որ հետագայում է տարբերակուել) բղխումն ձեւը:

Բառամեկնութիւններում հանդէս եկող յաջորդ մեծ խումբը համանունների խումբն է: Ինչպէս արդէն նշել ենք, Ճաթեւացին սրանց, ինչպէս եւ բազմիմաստ բառերի համար գործածում է հոմանուն որակիչ սահմանումը.

սրինգ – ոմանք զձայն արուեստականացս ասեն եւ ոմանք զծննդայս եւ ոմանք որ եղեգամբ հնչեն (Մեկն. Սաղմ. 6ա) (արդի հայերէնում պահպանուել է միայն վերջին նշանակութեամբ).

փայլակն – ոմանք գփայլածուն ասեն եւ այլք գփայլատակելն, որ կայծ ի կայծէ յամպոց, բայց աստ զարեգակն ասէ (Համառօտ տես. Պորփ. 334) (արդի հայերէնում գործածուում է երկրորդ կայծակի արձակած լոյս, ինչպէս եւ կայծակ, շանթ իմաստներով).

գրիչ – կոչի արուեստաւորն եւ գրիչ գործիքն (ձեռ. 1115, էջ 196բ). (արդի հայերէնում համապարօծական բառերի շարքում է երկրորդ նշանակութեամբ, իսկ առաջին իմաստով մասնաւոր գործառական շերտի բառերից է).

միեղջերու – կրկին է. մին որ մեծ գագան ասեն ի Հնդկիս եւ մին փոքր նման ուլոյ ի Փղշտս (Մեկն. Սաղմ. 49բ) (արդի հայերէնում այլ իմաստներով է կիրառուում. հմմտ. է. Աղայեան, Արդի Հայերէնի Բացատրական Բառարան, էջ 1010, «միեղջիւր» բառայօդուածը).

շուշան – Գ ազգ է. նախ որ ի ծովու բուսանի եւ դեղին է ծաղիկն, զոր նուուֆար կոչեն. երկրորդ ի վայրի, որ սպիտակ է գունով եւ անձրեւով բուսանի. երրորդ՝ որ կարմիր է եւ բոցով արեգական ծաղկի (Մեկն. Մատթ. 123բ) («շուշան» անուանումը պահպանելով դեղին», «նուուֆար», «կոկո», իսկ վերջինի համար կիրառում է «հարսնամատ Բ. Ղազարեան, Բուսանունների հայերէն-լատիներէն, ռուսերէն-անգլերէն-ֆրանսերէն-գերմաներէն բառարան, Երեւան, 1981).

խորխիս – ոմանք մեղր ասեն, ոմանք հաց ասեն իւղով եւ մեղերը զանգեալ (Գիրք Քարոզ. Ամ. 685) (արդի հայերէնում երկու իմաստներն էլ կան. առաջինը մեղրահացն է կամ մոմով մեղրը, երկրորդը՝ ալիւրով, իւղով կամ մեղրով պատրաստուած խորիզը):

Ճաթեւացին բերում է նաև համանուններ, որոնք իբրև այդպիսիք ընկալուում են այսօր էլ.

կէտ – հոմանուն է. ձուկն կոչի կէտ եւ կէտ գրոյն (ձեռ. հ. 1115, 211ա).

լեգու – կոչի գործիք խօսիցն եւ լեգու կոչի որակ խօսիցն (Գիրք Հարցմանց, 297).

արձանագիրն – կրկին է. նախ որ վէմս գրեմք. երկրորդ՝ որ ի թղթի գլխատմութիւնս արձանացնեմք (Մեկն. Սաղմ. 27ա):

Միաւորելով համանուն եւ բազմիմաստ բառերը, Ճաթեւացին վերջիններս մեկնելիս իմաստների շարքում յաճախ թուարկում է նաև փոխաբերական կիրառութիւնները.

պսակ – որպէս թագաւորաց. կոչի եւ մարտիրոսաց. կոչի եւ հարսանեաց եւ ծաղիկ բուսոյ. պտուղ ծառոց. գլուխ անդամոց, որ պսակն զբոլոր եւ զկատարումն նշանակէ, որպէս ի գովեստ նորին դրուատի (Գիրք Քարոզ. Ամ. 670).

օծումն – զմոռոյ որպէս մեռելոց. փափկութեան նիւթական իւղոյ. հիւանդաց. ըմբշամարտաց. քահանայիցն վասն միջնորդելոյ. թագաւորաց վասն տիրելոյ. որդեգրութեան որպէս մկրտելոցն (Մեկն. Սաղմ. 81ա).

ձանապարհ – մարմնոյ, որ ոտիւք կոխի. կենցաղոյս. վարուց. աւրինաց. հոգւոյ ի յելս ընթացից. մտաց քննութեանց (նոյն տեղը, 67ա).

Աստուած – հոմանուն է եւ Գ նշանակութիւն ունի, այսինքն ճիշդ Աստուածն եւ զկոչեցեալն եւ զսուտն: . . . Եւ կոչեցեալն ոչ գէտութիւն այլ զգիծս Աստուծոյ ունի, որպէս սուրբք ի մարդկանէ: Եւ սուտքն ոչ գէտութիւն եւ ոչ զգիծս, որպէս կուռքն: Արդ զճիշդն Աստուած պատուով գրենք, զկոչեցեալն յերկար եւ զսուտն ի ներքոյ պատուով (նոյն տեղը, 91ա).

ձորան – հոմանուն է, զի զգեստ կոչի արտաքին հանդերձ, որ ծածկէ զմարմին եւ ձորձ կոչի մարմինն, որ ծածկէ հոգին (Գիրք Քարոզ. Ամ. 54). Ձորձ ասելն նախ զհնութիւն եւ զապակահնութիւն ցուցանէ (Ոսկեփորիկ, 173):

Մի շարք բառերի Ճաթեւացին տալիս է նորովի բացատրութիւն. արտակերտիւն – որք արտաբոյ ուղղութեան թիւրեցիկ զգիրս եւ զբանս (ձեռ. հ. 1115, 197ա). (հմմտ. նշն. «Ի դուրս բերել. արտադրել. ի լոյս ընծայել. հանդիսացուցանել, կամ հանել ի սեղան»): Ճաթեւացու բառերը. արտադրել. ի լոյս ընծայել. հանդիսացուցանել, կամ հանել ի սեղան»): Ճաթեւացու բացատրութեան մասին պէտք է ասել հետեւեալը. յենուելով այդ բառի առաջին բաղադրիչի «դուրս, արտաքին» նշանակութեան վրայ, նա օգտագործում է այն «օտար, ոչ հարազատ» իմաստով, այսինքն կերտել օտար ազդեցութեամբ, հետեւաբար, հարազատ չմնալ սեպհականին. վերջնական իմաստը՝ թիւրեղ օտար ազդեցութեամբ:

երբ – որ է օդ (Գիրք Հարցմանց, 190). (հմմտ. նշն, «Իբր եռացումն ապականաբար, հիւթ որդնեաց. նեխութիւն. փտութիւն. ապականութիւն»): Աճառեանը նոյնպէս բացատրում է «փտութիւն, ապականութիւն, նեխութիւն»): Ճաթեւացու բացատրութիւնը եզակի է մնում:

Թայրաթառ – ոչ միայն թայրաթոռ, որք են աղբաւոք եւ օտարք, այլ մեծամեծք եւ ազգականք (Մեկն. Մատթ. 161ա). (հմմտ. նշն. «ընտանիք, մերձաւորք», ըստ Աճառեանի՝ «ազգական, խնամի»):

ձոռումութիւն – է բանիւ զբանն ծածկել կոկոլանօք, այսինքն նոր բառիւ (Գիրք Պարապմանց, 628):

Մեղրապոպ – որ է ամերուկն (Գիրք Քարոզ. Ամ. 42). (հմմտ. նշն. «պտուղ անուշահոտ, որպէս փոքրիկ սեխ ի ձեւ ձմերուկի. շամամ»):

Պառաւակն – ասէ վասն հին եւ տկար եւ անմիտ սըտախօսութիւն լինելոյն (Գիրք Պարապմանց, 694):

Ճաթեւացին բառերը մեկնելիս երբեմն դիմում է իր կողմից ստեղծուած նոր բառերի (կազմուած բառաբարդման եւ ածանցման ուղիներով), որը մասամբ երեւոյթը նոր կողմով դիտարկելու, նոր չափանիշով ընկալելու արդիւնք է: Եւ քանի որ նրա գրական ժառանգութեան մէջ ընդհանրապէս մեծ թիւ են կազմում նոր բառերը, մի քանի խօսք դրանց մասին: Իր «Հայերէն Նոր Բառեր Հին Մատենագրութեան մէջ» աշխատութիւնում Հրաչեայ Աճառեանը համեմատելով Ճաթեւացու միայն «Լուծումն Պարապմանց Կիրոզի» երկը բնագրի հետ՝ գրում է. «Գրիգոր Ճաթեւացույն սոյն աշխատութիւնը տպուած է Կիրոզի Պարապմանց գրքին հետ: Հայկազեան բառարանը թէեւ գործածած է այս գիրքը, բայց ամենեւին ձեռք դպրոցացած է Ճաթեւացույն Լուծման, նոյնը կրկնած են նաև Առձեռնի աշխատասիրողները: Ահա այդ պատճառով է, որ 260 երեսնոց համեմատաբար փոքր աշխատութեան մէջ կը գտնեմ 41 նոր բառ»⁵²¹: Պէտք է ասել, սակայն, որ Ճաթեւացու գրական ժառանգութեան մէջ տեղ գտած նոր բառերը չեն ուսումնասիրուել նաև հետագայ բանասէրների կողմից:

Ստորեւ բերում ենք մեր կողմից գտնուած Ճաթեւացու այն նոր բառերը, որոնք գործածուած են կամ հոմանիշների շարքում (նկատի առնելով, որ դրանց շրջապատում այդ բառերը բառամեկնութեան արժէք են ձեռք բերում), կամ ընդգրկուած են բառերի բացատրութեան մէջ.

* դիւսապարհ եւ վայրաբարչ բնութիւն (Գիրք Քարոզ. Ամ. 307)⁵²²
երախայրիք եւ *նախապատարագ եղ են (Մեկն. Մատթ. 38ա)
լինին կոխան եւ *ըրկոյս (նոյն տեղը, 188բ)
զլացօղ, *բասրասէր, դարովօղ (Լուծումն Պարապմանց, 775)

521 Հ. Աճառեան, Հայերէն Նոր Բառեր Հին Մատենագրութեան մէջ, հ. Բ, վեներտիկ, 1926, էջ 83:
522 Նոր բառերը տարբերակուած են աստղանշանով (*): Ասենք, որ դրանք ընդգրկուած չլինելով նշն-ում, մասամբ տեղ են գտել «Առձեռն Բառարան Հայկազեան Լեզուի» մէջ, Ալ. Ստ. Մալխասեանի «Հայերէն Բացատրական Բառարանում»: Սակայն, քանի որ սրանց մէջ չեն նշուած բառագործածութեան առաջին աղբիւրները եւ հեղինակները, ուստի այնուամենայնիւ, մենք բերում ենք դրանք:

դէտ - այսինքն *նայեակ (Գիրք Քարոզ. Ձմ. 182)

*իրակեալ (իրակեմ) - իր գործեալ (ձեռ. Հ. 1115, 212բ)

*նրագալոյժ - վասն զի ճրագով յերեկոյս լուծանեմք զպահքն (Գիրք Քարոզ. Ձմ. 31)

*չմարդամոյրժ - ի կարգ աղքատաց են (Գիրք Քարոզ. Ամ. 360)

արծաթ - է *թերեփ ոսկի (Մեկն. Սաղմ. 24ա):

Տաթեւացու միւս նորակազմութիւններէն են՝ *ակօսահերձ, *ակօսադրեալ, *դժուարհամբեր (դժուար յաղթահարելի նշանակութեամբ. դժուարհամբեր պատուէրքս), *ինքնապարտ, *կրկնազէն, *օղասիրտք (օղասիրտք են հպարտքն), *միափեղ կի (երկբացիկ կամ միափեղ կի դուռ):

Հին մատենագրութեան մէջ բազմաթիւ բառաբարդումներ են վկայուած «օձ» բառով: Նշի-ն բերում է շուրջ երեք տասնեակ ձեւ: Տաթեւացին ունի երեք նոր կազմութիւն. *օձատանջ, *օձախար, *օձաչարչար:

Իմաստային աղերսներ ունեն *գիճասէր եւ *ջրասնոյցք նորակազմութիւնները: Առաջինը բերում է իբրեւ պարկեշտին հականիչ, երկրորդով բնորոշում է ցանկասիրութիւնը (ջրասնոյցք են ախտասէրքն):

Նորակազմ են նաեւ՝ *սրալսօղ (սուր լսողութիւն ունեցող. սրալսօղ էջ), *պարանոցաթաւալ (մինչեւ պարանոցը թաղուած նշանակութեամբ), *վաղածանօթ (վաղուց ծանօթ), *վատատես (տկարատես իմաստով), *սառաչ (սառը հայեացք ունեցող. սառաչ է արծուին), *ընդասոյգ (ընդասոյգ արար), *չանաղէմք (չան ողէմք ունեցող. թէ մարդ լինի շանաղէմք), *սաստասարսուռն (սաստասարսուռն ատենս), *աստղաբեւոր, *հոգիաբաշխութիւն, *հաշանդամ բառերը: Վերջինիս մասին ուղղում ենք ասել հետեւեալը. ինչպէս յայտնի է, հայերէնը ունի «հաշ» եւ «հաշմ» բառերը: Երկրորդով բարդուած «հաշմանդամ» բառը նշանակում է խեղուած անդամ ունեցող: Իսկ Տաթեւացու «հաշանդամ» նորակազմութիւնը կիրառուած է նիհար, ծիւրուած մարմին ունեցող նշանակութեամբ:

Տաթեւացին յաճախ է դիմում նաեւ նոր բառաձեւերի կազմութեան այնպիսի եղանակներով, ինչպիսիք են ածանցումը, կամ հակառակ՝ ածանցի կրճատումը եւ ածանցների փոխանցումը: Օրինակ, ընդունուած երկխօս, խօսնայր, գիշակն, կիսամաքուր, կիսասուրբ ձեւերից -ութիւն ածացով կերտում է *երկխօսութիւն, *խօսնայրութիւն, *գիշակնութիւն, *կիսամաքութիւն, *կիսասուրբութիւն գոյականները: Ընդհակառակը՝ անձնյարգութիւն, խստակրօնութիւն բառերին դիմելով, կիրառում է *անձնյարգու եւ *խստակրօն ձեւերը, առաջինն իբրեւ հարադրութեան բաղադրիչ (անձնյարգու լինել), երկրորդն՝ իբրեւ որոշիչ (խստակրօն ճգնաւորութիւն):

Կան նաեւ ածանցների փոխանցման դէպքեր. բաշաղանք-ի փոխարէն՝ *բաշաղմունք. ներհակաբար եւ ներհակապէս, բացատրապէս ձեւերի փոխարէն՝ *ներհակօրէն եւ *բացատրաբար: Դանդաղել, բարբաջել հոմանիչների շարքում բերում է նաեւ *ընդվայրաբանել ձեւը (բառարաններում նշուած են միայն ընդվայրաբան, ընդվայրաբանութիւն ձեւերը):

Հետաքրքիր է, որ բառաստեղծման մէջ արտացոլուած է երեւոյթների եւ հասկացութիւնների միջնադարեան ընկալումը. օրինակ, վայրաբար բառի սկզբնական իմաստը կապուած է սատանայի հետ, որի բնակութեան տեղը երկիրն էր՝ ներքեւը. այս իմաստով դիւաւաւայրաբար նորակազմութիւնը ուղղակիօրէն բացայայտում է վայրաբար բառի սկզբնական իմաստը եւ լրացնում ստորաբար, երկրաբար, վայրաբար բառերի շարքը նորովի՝ շեշտելով, որ դրանք նշանակում են նաեւ չարի կողմից խտրողուած, սայթաքուած: Նոյնը վերաբերում է նաեւ նախապատարագ բառին, որն այստեղ գործածուած է առաջին պատարագ իմաստով եւ Տաթեւացու կիրառութեամբ դարձել է երախայրիք (որ նշանակում է առաջին պտուղ) բառին հոմանիչ:

Նոր բառերի մի մասն էլ արդիւնք են կրօնական արարողութիւնների տարբերակման: Այսպէս, պատարագից առաջ ճրագ վառելը Տաթեւացին անուանում է նրագալոյց, իսկ պահքի աւարտը խորհրդանշող ճրագի վառելը՝ նրագալոյժ: Սրանց աւելացնում է նաեւ՝ նրագալոյսը: Այդ կերպ տարբերում է նաեւ ապականութիւն եւ մականականութիւն (չառ սպականուած իմաստով) բառերը. մենեղիի (կցուրդ երեկոյեան ժամերգութեան) հետ օգտագործում է առաւօտերգը:

Տաթեւացու բառամեկնութիւններում իբրեւ առանձին իմաստային խումբ առանձնանուն է քարերի (ակնեղ ենի) բացատրութիւնը.

բիւրեղ - քան այն ծովատիպ է եւ օղակերպ եւ ընդ ակինթն լծակցի (Գիրք Քարոզ. Ամ. 465)

դաւանակն - որ է կանաչ զմրուխտ, որ է դեղ աչաց (Մեկն. Մատթ. 8բ)

գմբուխտ - կանաչ է գունով եւ ձիթով սնանի (Գիրք Քարոզ. Ամ. 465)

ըզնկաբարն - մարդկային ըզնկան գունով քարն այն (նոյն տեղը)

կոնազմ - պղ նձագոյն, գոր կոչեն ոմանք կայծ (նոյն տեղը). (ըստ ՆՃԲ-ի գոնազմ)

յասպիս - յասպոյ որակի գոյնն, է կանաչ որպէս զմրուխտ (նոյն տեղը)

շափիւղայ - այս քարն նման է երկնային օդոյն կապուտակ գունով, որպէս լազվարդ (նոյն տեղը)

ոսկէֆար - քարն այն ունի գնմանութիւն ոսկույ փայլելոյ (նոյն տեղը)

սարդիոն - գհրոյ գոյն ունի պայծառ, բժշկական ունի գորութիւն, որ զխոցեալս ի սրոյ բժշկէ (նոյն տեղը)

տըպազիոն - ակն այս կարմիր է գունով որպէս կայծակն եւ աչացաւն յորժամ տեսնէ՝ առողջանայ (նոյն տեղը)

կարկեհան - ծիրանի է գունով (նոյն տեղը, 466)

յակիճք - գոգոյ ունի գորակ եւ լուսաւորի (նոյն տեղը)

առտակն - որ է կայծ եւ կարկեհան (Մեկն. Մատթ. 8բ):

Իսկ իմաստային ի՞նչ փոփոխութիւններ են կրել Տաթեւացու բացատրած բառերը: Դրանց մի մասն արդէն նրա օրերում անհասկանալի են եղել կամ գործատական սահմանափակում են ստացել: Այդ բառերի մի մասը այսօր էլ գործածական չէ. նրանք փոխարինուել են նոյնիմաստ այլ բառերով, որոնք տեղ են գտել հէնց Տաթեւացու բացատրութիւնների մէջ.

աղիւն - ինչքն եւ ստացուածք են մարդոյն (Գիրք Քարոզ. Ամ. 360)

ասպար - գէնք . . . գործի փրկութեան (Մեկն. Սաղմ. 58ա)

դրսովել - որ է պարսաւել (ձեռ. Հ. 1115, 201ա)

եգաբանելն - միաբանելն է (նոյն տեղը, 198բ)

շաղփաղփել - որ է աղ ճատել կամ բարբաջել (նոյն տեղը, 196բ)

Նրա բացատրած բառերից համադրական բառերի շարքում են ըմբոշխնել, յորջորջել, համադոյ (որից արդի հայերէնն ունի համադոյակցութիւն ձեւը), սատար եւ այլ բառեր:

ըմբոշխնեալ (ըմբոշխնեմ) - որ է վայելեալ (ձեռ. Հ. 1115, 212բ)

յորջորջելն - կոչելն է (նոյն տեղը, 197ա)

սատարն - միջնորդ եւ աւգնականն է (նոյն տեղը):

Բառիմաստի ընդլայնմամբ, նեղացմամբ կամ ընդհանրապէս նոր իմաստով են հանդէս գալիս անպարիշտ, իմաստակ, խրատ, հանգամանք, հրահանգ, սրինգ եւ բազմաթիւ այլ բառեր:

անպարիշտ - կոչի անհաւատն եւ անաստուածն, որպէս կուպաշտն, նոյնպէս եւ հերձուածողն (Գիրք Քարոզ. Ամ. 439). (անպարիշտ-ամբարիշտ՝ արդի հայերէնում այդ իմաստներից բացի ունի նաեւ անօրէն, անգութ, անհաշտ նշանակութիւնները)

իմաստակ - կոչին որք միոյ արհեստի են գլուխ որպէս քերականութեան, ճարտասանութեան, աստղաբաշխութեան եւ այլք (Գիրք Հարցմանց, 269). (բառիմաստի շրջմամբ ձեռք է բերել թերուս, սոփեստ, անիմաստ, անմիտ նշանակութիւնները)

խրատն - ուսումն է եւ գիտութիւն (ձեռ. Հ. 1115, 198բ)

հանգամանք - աւրինակ եւ որպիսութիւնք (նոյն տեղը, 204ա)

հրահանգն - կրթութիւն (նոյն տեղը, 197ա)

սրինգ - ոմանք զձայն արուեստականաց ասեն եւ ոմանք զձոնձոյս եւ ոմանք որ եղեգամբ հնչեն (Մեկն. Սաղմ. 6ա). (Տաթեւացու այս բացատրութեան մասին պէտք է ասել հետեւեալը. յայտնի է, որ սրնգի հնչելը կոչուել է սրինգ կամ շրինգ եւ հաւանաբար, որոշ մատենագիր-

Այս ամենով հանդերձ, մեկ անգամ եւս ցանկանում ենք ընդգծել, որ Տաթևացու բառամեկնութիւնների բուն արժէքը նրանց մատչելիութեան եւ գիտականութեան մէջ է: Այդ է պատճառը, որ Տաթևացու բացատրութիւնները հիմնականում համընկնում են գրաբարեան բառազանձը լաւագոյնս ներկայացնող ՆՀԲ-ի բառամեկնութիւնների հետ: Ահա մի քանի օրինակ Տաթևացու բառամեկնութիւններից, որոնք իբրեւ ճիշդ բացատրութիւն տրւում են նաեւ վերջինիս կողմից.

- ազնուական – այսինքն գեղեցիկ եւ պատուական (Մեկն. Մատթ. 294ա) (ՆՀԲ – պատուական եւ ընտիր. ազնիւ. գերապանծ. գեղեցիկ . . .).
- աղօթք – խօսք է առ Աստուած (Մեկն. Մաղմ. 28բ) (ՆՀԲ – Աղաչանք առ Աստուած).
- այժմ – այսինքն յիշատի (Մեկն. Մատթ. 172բ) (ՆՀԲ – . . . արդարեւ. յիշատի).
- անիմաստութիւն – իմաստութեան պակասութիւն կոչի անիմաստութիւն (Գիրք Քարոզ. Ձմ. 187) (ՆՀԲ – Պակասութիւն իմաստութեան եւ անիմաստն գոյ).
- բացերեւ – յայտնի (ձեռ. հ. 1115, 197ա) (ՆՀԲ – բաց եւ երեւելի. ակներեւ. յայտնի).
- եղջիր – գէն եւ գաւրութիւն է եղին. գարդ է նմա (Մեկն. Մաղմ. 30բ) (ՆՀԲ – գէն եւ գարդ գրիսոյ ոմանց ի չորքոտանեացն մանաւանդ եղին կամ եղջերուաց).
- թմրիլ – ընդարմանալ ասի (Գիրք Հարցմանց, 127) (ՆՀԲ – ընդարմանալ. անզգայանալ . . .).
- ինքնագիր – միայն ինքն ձեռամբ իւրով գրեաց (Գիրք Քարոզ. Ամ. 658) (ՆՀԲ – յինքնէն, անձամբ ձեռամբ իւրով գրեալ . . .).
- լալականք – որ գրանք ասեն աղետից (Մեկն. Մատթ. 145բ) (ՆՀԲ – լացօղ եւ ողբացօղ ի վերայ մեռելոց. ողբերգակ).
- կրմուղ – որ է անընտել եւ վայրի (Գիրք Քարոզ. Ամ. 567) (ՆՀԲ – անվարժն լինել կամ չտանել ն սանձի . . .).
- կրեշտակ – պատգամաւոր լսի (Մեկն. Մատթ. 164բ) (ՆՀԲ – պատգամաւոր երկնային . . .).
- վերաւճուքիւն – մեկնութիւն յայտնապէս (ձեռ. հ. 1115, 196բ) (ՆՀԲ – . . . մեկնութիւն, բացատրութիւն).
- վերստին – կրկին ասէ (Գիրք Քարոզ. Ամ. 366) (ՆՀԲ – այսինքն անդստին՝ ի սկզբանէ երկրորդեղով. դարձեալ).
- տող – շար եւ կարգ լսի (ձեռ. հ. 1115, 206բ) (ՆՀԲ – ուղղագիծ դասաւորութիւն. շարք եւ կարգ իրաց):

Բառերի բացատրութեան իւրօրինակ օժանդակ միջոց պէտք է համարել նաեւ Տաթևացու ինքնատիպ բառագործածութիւնները. օրինակ, մի շարք բառեր նա կիրառում է նոր իմաստով: Այդ բառերից են՝ կտակագիր, որ նա գործածում է ո՛չ թէ կտակ, կտակ գրող, այլ՝ կտակի ձեռով գրուած նշանակութեամբ. սերմնահան – ո՛չ թէ մշակ, սերմանող, սերմնացան, այլ՝ արդիւնաւէտ, արդիւնաւորուած (սերմնահան բանն). արուեստաւորապէս – ո՛չ թէ ճարտարօրէն, այլ իր իսկ բացատրութեամբ՝ «գեղեցիկ իմաստութեամբ»: «վա՛յ եւ եղուկ» կապակցութիւնը ՆՀԲ-ն բացատրում է. «վայի արժանի, եղ կելի»: Տաթևացին այն գործածում է նախատել իմաստով (Յովհան Ոսկեբերանի «նախատէ գբաղաքան» նախադասութիւնը փոխարինում է «վ՛այ եւ եղ ուկ կարդայ» նախադասութեամբ⁵²⁶:

Տաթևացու բառագործածութիւնները օգտում են նաեւ ընկալելու բառերի նախնական տարբերակութիւնները, նշանակութիւնը եւ նոյնիսկ՝ հաստատելու այս կամ այն ենթադրութիւնը: Այսպէս օրինակ, Աճառեանը կիրառելով Աղեքսանդրացու, «Պարապմանց գրքի» նոր բառերը քննելիս՝ յաճախ է դիմում Տաթևացուն ճշգրտման կատարելու համար եւ պարզում, որ բնագրային օրինակում սխալ բառագործածութիւններ կան («օժանդ»՝ փոխանակ «օժանդակ», «տուփող»՝ փոխանակ «տուփողաց» եւ այլն⁵²⁷: Սօսելով «բլաթկին» (մահակ, կոպալ) բառի մասին, Աճառեանն այն համեմատում է պարսկերէն balāṭigīn ձեւի հետ եւ գտնում, որ «ըստ այսմ լաւագոյն գրչութիւնն է Տաթևացույն բալաթ-իկին ձեւը»⁵²⁸:

⁵²⁶ Հմմտ. Գր. Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, 168ա եւ Յովհաննու Ոսկեբերանի յԱւետարանագիրն Մատթէոսի, Վենետիկ, 1826, էջ 565:
⁵²⁷ Հ. Աճառեան, Հայերէն Նոր Բառեր Հին Մատենագրութեան մէջ, հ. Բ էջ 81:
⁵²⁸ Նոյն տեղը, էջ 139:

«Մեկնութիւն Մատթէի» աշխատութեան մէջ Տաթևացին Յովհան Ոսկեբերանի «Եւ իբրեւ զկոյաղնդիւնսն որ աղբով պարարին»⁵²⁹ նախադասութիւնը փոխարինում է «Որպէս կուսիւտեան, որ գարշ աղբով պարարի»⁵³⁰ նախադասութեամբ, որտեղ մեզ հետաքրքրում է կուսիւտեան ձեւը: ՆՀԲ-ն կոյաղնդիւն բացատրում է. «բնդեան աղբայոյզ, բզէզ»՝ վկայակոչելով միայն Ոսկեբերանի կիրառութիւնը: Աճառեանը ընդգծում է դիպիտ ձեւի սխալ լինելը. Տաթևացուն չի վկայակոչում: Մինչդեռ, ինչպէս տեսնում ենք, Տաթևացին քաջատեղեակ է բառի ճիշդ գործածութեանը:

Սկզբնապէս տարբերակուած են եղել հայել եւ նայել բառերը, որ հաստատում է նաեւ Տաթևացին: Նրա կողմից այդ տարբերակումը նկատել է նաեւ է. Աղայեանը. «Հայել եւ նայել բառերի իմաստային այս տարբերութիւնը գիտակցել է նաեւ Տաթևացին, որ «Գիրք Հարցմանց» էջ 407-ում բացատրում է՝ հայել «ցածրից վերեւ նայել», նայել՝ «վերջից ներքեւ նայել»⁵³¹:

Ն. Ադոնցն իր «Հայաստանը Յուստինիանոսի Դարաշրջանում» աշխատութեան մէջ քննելով ամուսնական յարաբերութիւնները Հայաստանում, գրում է. «Հնարաւոր է, որ օժիտ բառը հայերէնում եւս գործ է ածուել այն նուէրի իմաստով, որ փեսացուն տալիս է հարսնացուին»⁵³²: Մի կողմ թող նկատել այն հարցը, որ անուանի հայագէտը այդ բառը դնում է «հայոց լեզուի ո՛չ արիական տարրերի թուին»⁵³³, նրա վերոյիշեալ կարծիքը հաստատում է Տաթևացու տուեալներով. նա տարբերում է բաժինքը, օժիտը եւ պարգեւները, որոնք տրուել են հարսին համապատասխանաբար՝ հօր, փեսայի եւ բարեկամների կողմից. «Բաժինք տուեալ լինին ի հօրէ հարսին վասն պիտոյից պատկին: Եւ օժիտք ի փեսայէն ինքն տուեալ: Իսկ պարգեւքն՝ ի բարեկամացն լինին տուեալ»⁵³⁴:

Ասեմք նաեւ, որ Աճառեանի կարծիքով հին մատենագրութեան մէջ գէթ բառը (վնաս, յանցանք նշանակութեամբ) առաջին անգամ գործածուած է Առաքել Սիւնեցու, «Առամգրքի» մէջ, որից կազմուած գիրքւոր բառը՝ «մեկ անգամ գործածուած է յետին գրուածքի մը մէջ»⁵³⁵: Մինչդեռ այս երկու բառն էլ մենք գործածուած ենք գտնում Տաթևացու կողմից. «Ձի՛նչ է իմ գէթն»⁵³⁶. «Գիրքւոր եւ վնասակար եմ Աստուծոյ»⁵³⁷:

Սակաւաթիւ եւ Տաթևացու բառագործածութիւններում օտար ձեւերը, ինչպէս օրինակ, քամիների յունարէն անուանումները. կիկիաս, ամպէլ օիդ, արգէստէս, լիփս, թրասկիաս. լեարդից դուրս եկող ծորանների անուանումները. քալասիկէ, ասայիկէ, կաթալիկէ, երկրաշափակաւ կիբիկոն, զիկ տերմինները. Փանառ, տիաթիկ, իդորոս (կենդանու անուանում), քնիչտ, ծփու (վերջին երեք բառը Աճառեանի վկայութեամբ գործածուած են միայն Տաթևացու կողմից) բառերը:

Սակաւաղէպ եւ նաեւ բարբառային բառաձեւերի գործածութիւնները, ինչպէս օրինակ՝ համալ, խասիաթ, խասպար, չուխայ, մթխալ (դրամի տեսակ), չանկալ, փոշիմանիմ, կոնդտ, խարալիզակ, սաթիլինձ (վերջինս Տաթևացին օգտագործում է ո՛չ թէ շախմատ, այլ՝ նարտ խաղի իմաստով⁵³⁸):

Ոսակցական լեզուի ազդեցութենամբ պէտք է բացատրել բառերի այնպիսի ձեւերի կիրառութիւնը, որտեղ առկայ են դրամիտութիւն, ո՛չ օրինաչափ հնչիւնափոխութիւն, հնչիւնի անկում եւ յաւելում. հանդերձ գրգռել եւ խոշոր (փոխանակ՝ գրգռեալ). սրբիչն է կալին եւ քառեղսն (քառաժանին). շաղակեր (չաղակեր). ցփսի (ցպիս). փաւսուս (քասիուս). սրայիկ (սրբիկ):

⁵²⁹ Յովհաննու Ոսկեբերանի յԱւետարանագիրն Մատթէոսի, էջ 597:
⁵³⁰ Մեկնութիւն Մատթէի, 178բ:
⁵³¹ է. Աղայեան, Բառաքնական եւ Ստուգաբանական Հետազոտութիւններ, Երևան, 1974, էջ 93:
⁵³² Ն. Ադոնց, Հայաստանը Յուստինիանոսի Դարաշրջանում, Երևան, 1987, էջ 217, ստղատակ:
⁵³³ Նոյն տեղը, էջ 216:
⁵³⁴ Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 203:
⁵³⁵ Հ. Աճառեան, Հայերէն Նոր Բառեր Հին Մատենագրութեան մէջ, հ. Բ, էջ 147:
⁵³⁶ Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 449:
⁵³⁷ Նոյն տեղը, էջ 628:
⁵³⁸ Նոյն տեղը, էջ 634:

Բ. ՏԱԹԵՒԱՑՈՒ ԿԱՏԱՐԱԾ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մենք որոշ չափով քննութեան նիւթ ենք դարձրել նաեւ Տաթեւացու կատարած այն ստուգաբանութիւնները, որոնք արուել են «Ժողովրդական ստուգաբանութեան» սկզբունքով, նկատի առնելով, որ չնայած ակնյայտ ծայրահեղութիւններին եւ սխալներին, դրանք այնուամենայնիւ, առնչուել են քերականական գիտելիքներին: Բացի այդ, դրանց մէջ արտացոլուած է նաեւ ժամանակի մտածողութիւնը՝ կեանքի, կենցաղի, պատմութեան, հաւատալիքների եւ այլ նի վերաբերեալ, ուստի այս առումով հետաքրքիր է դրանց զգալի մասը: «Ստուգաբանութիւնը, - գրում է Գ. Ջահուկեանը, - որը Թրակացու մօտ համարուում է քերականութեան բաժիններից մէկը, հայերի մօտ ամէնից աւելի վաղ ծագած լեզուական դիսցիպլինն է. նրա նախնական ձեւը ժողովրդական ստուգաբանութիւնն է, որը կիրառուում է ժողովրդի կողմից իրեն անծանօթ անունները իմաստաւորելու համար»⁵³⁹:

Տաթեւացին շատ յաճախ զուգորդում է նոյն բառի ստուգաբանութիւնը եւ մեկնութիւնը կամ ստուգաբանութեան ժողովրդական ու գիտական սկզբունքները. օրինակ՝

- աղբատ - սոքա ողորմելիք են, որք հասարակ անուամբ աղքատք կոչին, այսինքն ի յաղխեաց եւ ի յընչից հատեալ, զի աղխն՝ ինչ եւ ստացուածք են մարդոյն եւ կամ աղքատ, այսինքն յաղեաց եւ ի գթոց հատեալ, զի սոքա մարդկան ատելիք են եղեալ (Գիրք Քարոզ. Ամ. 360).
- նաւասարդ - նոր ասի, այսինքն սկիզբն տարույ եւ դարձեալ այժմ է եղանակ նաւեղոյ ի վերայ ովկիանու (Գիրք Հարցմանց, 200):

Ինչպէս նշել ենք, Տաթեւացու ստուգաբանած բառերը կարելի է բաժանել մի քանի իմաստային խմբերի:

Ամսանունները ստուգաբանելիս նա հիմնականում դիմում է Վանական վարդապետին⁵⁴⁰:

Նրա ստուգաբանած յատուկ անունների թիւն անցնում է եօթ տասնեակից: Դրանք հիմնականում Աստուածաշնչում հանդիպող անուններն են, սակայն Տաթեւացին միշտ չէ, որ հետեւում է վերջինիս ստուգաբանութիւններին: Յատկանշական է այն, որ ճիշդ են ստուգաբանում այն անունները, որոնք գիտակցում են իբրեւ փոխառեալ:

- Էմմանուէլ - ի յԵրբայեցեոցն ի մերս ընդ մեզ Աստուած Թարգմանի (Գիրք Քարոզ. Ձմ. 72).
- Դաւիթ - Թարգմանի բաւականաձեռն կամ սիրեցեալ (Գիրք Քարոզ. Ամ. 517).
- Թովմաս - Երկուորեակ (Մեկնութիւն Մատթ. 148բ).
- Մարիամ - Լուսաւորութիւն Թարգմանի (Գիրք Քարոզ. Ձմ. 8).
- Միքայէլ - որպէս զԱստուած (Գիրք Հարցմանց, 144).
- Յակոբոս - խաբօղ սատանայի (Մեկն. Մատթ. 148բ).
- Պետրոս - Թարգմանի վէմ (նոյն տեղը)⁵³⁸:

Տաթեւացին գիտակցում է նաեւ փոխառեալ բառի բարդ կազմութիւնը: Օրինակ, բոլոր այն բառերը, որոնք ունեն «էլ» (եբրայերէն օ՛ւ Աստուած) բաղադրիչը (Անայէլ, Գաբրիէլ, Դակուէլ, Էմմանուէլ, Միքայէլ, Ուրիէլ եւ այլն) Տաթեւացին անպայման ստուգաբանում է կապուած Աստուած բառի հետ:

Անդրանիկ Հայկական անունը ստուգաբանում է հետեւեալ կերպ. «Անդրանիկն անուն կրկին ունի իմացումն. նախ ի բազում եղբարս. երկրորդ՝ երէց եւ առաջին»⁵⁴²:

⁵³⁹ Գ. Ջահուկեան, Քերականական եւ ուղղագրական աշխատութիւնները, էջ 133.
⁵⁴⁰ Տե՛ս, Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ (աշխատասիրութեամբ Լ. Պաշիկեանի), Մատենադարանի գիտական նիւթերի ժողովածու, հ. 1, 1941:
⁵⁴¹ Այս բոլոր ստուգաբանութիւնները հիմնականում համընկնում են Աճառեանի բացատրութիւնների հետ (հմտ. Հ. Աճառեան, Հայոց Անձնանունների Բառարան, հ. հ. 1-5, Երեւան, 1942-62):
⁵⁴² Գիրք Հարցմանց, էջ 472:

Ստուգաբանող բառերի միւս մեծ խումբը առնչուած է կրօնին, նրա ծեսերին եւ արարողութիւններին: Սրանց մէջ նոյնպէս ճիշդ են ստուգաբանում հիմնականում փոխառեալ բառերը.

Սիռն - հոմանուն է: Եւ երեք դիմօք խօսի, այսինքն հին եւ նորս եւ վերին: Ջի հինն Սիռն կոչի նախ ամբոցքն գոր Դաւիթ շինեաց: Երկրորդ՝ ժողովուրդն հրէից: Իսկ նորս նախ շինեալն, երկրորդ՝ հաւատացեալք կոչին Սիռն . . . : Իսկ վերինն . . . կոչին նոր եկեղեցի եւ վերին Սիռն (Մեկնութ. Սաղմ. 20բ) (հմտ. Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 10, Երեւան, 1984, էջ 396).

Եկեղեցի - հոմանուն է եւ Գ նշանակութիւն ունի. զի կոչի եկեղեցի շինեալն ի քարանց եւ յայլ նիւթոց իբր ժողովարան: Եւ եկեղեցի կոչին հաւատացեալ ժողովուրդքն ի սմա. . . : Եկեղեցի կոչի եւ սրբոցն ժողովք (Գիրք Քարոզ. Ամ. 396, 705: Տե՛ս, նաեւ՝ Գիրք Հարցմանց, 532, 613). (հմտ. ՀԱԲ. հաւաքոյթ ժողովրդի, զինուորների, յետնաբար՝ հաւատացեալների հաւաքատեղի, յետնաբար՝ եկեղեցի):

սաղմոսարան - երգարան կամ նուագարան: Սաղմոսարան կոչի ժ աղի գործիքն, սաղմոսարան կոչի եւ գիրքս գրեալ (Մեկն. Սաղմ. 6ա). (հմտ. ՀԱԲ. աղեղի լարում, թելաւոր նուագարան, քնարի վրայ երգ):

մանանայն - Թարգմանի զի՞նչ է սա: . . . Եւ էր ինքն բոլոր եւ սպիտակ նման գնծի եւ քաղցր որպէս մեղր (Գիրք Հարցմանց, 338) (հմտ. ՀԱԲ. եբր. «զի՞նչ է այս»):

սերովբէն - ջեռուցիչ ասի կամ կիզիչ (Գիրք Քարոզ. Ամ. 566, 581) (հմտ. ՀԱԲ. այրել):

կաթողիկէն - ընդհանրական ասի (Գիրք Հարցմանց, 532) (հմտ. ՀԱԲ. ընդհանրական, տիեզերական):

Եպիսկոպոս - Ընդհանուր ասի կաթողիկոսն եւ տեսուչ՝ եպիսկոպոսն (Գիրք Քարոզ. Ամ. 52) (հմտ. ՀԱԲ. պահապան, տեսուչ, վերատեսուչ. . .):

կիւրակէ - որ է տէրուական (Գիրք Հարցմանց, 196, 643: Տե՛ս, նաեւ՝ Մեկնութ. Մատթ. 330բ) (հմտ. ՀԱԲ. բուն նշանակում է տէրուական):

արեղայն - հայր ասի (Գիրք Քարոզ. Ամ. 52) (հմտ. ՆՀԲ. ապ՝ այսինքն հայր եղեալ կրօնաւորութեամբ):

Տաթեւացին ժողովրդական ստուգաբանութեան է ենթարկում քանակայ, քրիստոնեայ, տէր, վարդապետ, խորան, մատաղ, գորդայ, կեդար եւ բազմաթիւ բառեր: Դրանց շարքում են նաեւ կենդանիների անուանումները, աշխարհագրական անունների մի մասը:

Գետերի անունները ստուգաբանելիս նա բերում է նաեւ նրանց յայտնի այլ անուանումները եւս.

- Տիգրիս - որ է Դիւաթ կամ Քոբար (Մեկն. Մատթ. 11ա).
- Գեհոն - որ է Ջեհոն կամ Նիլոս (նոյն տեղը, 9բ):

Յորդանան գետի անունը ստուգաբանում է իբրեւ նրա վտակների անուններից կազմուած բարդութիւն:

Յորդանան - անուն բաղադրեալ է, զի ի ստորոտէ Լիբանան լեռնէ երկու աղբիւր ելանէ. մինն կոչի Ար եւ միւսն՝ Դան եւ ի մի խառնեալ՝ լինի Յորդանան (Գիրք Քարոզ. Ձմ. 60):

Ի տարբերութիւն Գրիգոր Մազիստրոսի Տաթեւացին չափազանց քիչ է անդրադառնում պարսկական փոխառութիւններին: Այդ սակաւաթիւ բառերի մէջ են նաւասարդ, նաւակատիք, գերեզման բառերը: Առաջին երկուսի մէջ ճիշդ է ստուգաբանում «նաւ» բաղադրիչը (որ նշանակում է «նոր»):

- նաւասարդ - նոր ասի (Գիրք Հարցմանց, 200, 509).
- նաւակատիսն - նորոգումն (Գիրք Քարոզութեան, Ամ. 477):

Նա նշում է գերեզման բառի պարսկական փոխառութիւն լինելը եւ ենթարկում ժողովրդական ստուգաբանութեան հէնց պարսկերէնի տուեալներով. գերեզման - պարսիկ բառ է՝ ներքոյ հողոյ (Գիրք Հարցմանց, 678):

Տաթեւացու ստուգաբանութիւններում պէտք է նշել բարձր հաղորդատուութեան (ինֆորմացիայի) առկայութիւնը. նա շատ յաճախ ստուգաբանութիւնը միջոց է դարձնում՝ հաղորդելու զանազան տեղեկութիւններ պատմութեան, մշակոյթի, իր ժամանակի բարձրի, սովորոյթների վերաբերեալ. աչքաթող չի անում նաեւ այլ ժողովուրդներին: Սրա շնորհիւ նրա ստուգաբանութիւնները վաղ փորձերից լինելուց բացի, ձեռք են բերում նաեւ պատմական եւ ճանաչողական արժէք: Իերենք Գրիգոր անձնանունան, Նեղոս եւ Տրգրիս գետերի անունների, «Գօգ եւ Մագօգ», կիմ, վարդապատ բառերի ստուգաբանութիւնները.

«Դայեակ նորա (Գրիգոր Լուսաւորչի - Ս. Գ.) յորժամ տարաւ զնա ի Կեսարիա եւ ի մերձենայն ի քաղաքն, նստաւ ի ներքոյ ծառոյ ինչ հանչիլ եւ եկեալ հաւ մի նստաւ ի վերայ ծառոյն, զոր ոմանք գուրգուր եւ ոմանք դուռն կոչեն եւ ձայնեաց գուրգուր: Իսկ իմացաւ դայեակն եթէ՝ Հոգին Սուրբ է ձեւակերպեալ ի տիպ հաւու, որ ունի զնմանութիւն աղանոյ եւ անուանեաց զմանուկն Գրիգոր, զի գրկեալ, գգուեալ եղեւ ի Հոգոյն Սրբոյն»³⁴³: Ինչպէս տեսնում ենք, հիմնուելով Ագաթանգեղոսի «Պատմութեան» վրայ, Տաթեւացին յաւելել է ստուգաբանութիւնը՝ աւանդապատում հատուածով:

Հետաքրքիր են նաեւ նրա նկարագրութիւնները՝ կապուած Նեղոս գետի պաշտամունքային ծիսակատարութիւնների եւ Տրգրիս գետի հետ. «Զի ի գալ գետոյս աւետիս մատուցանեն միմեանց մարդիկ աշխարհին եւ զարդարեալք եւ լուցեալ լապտերօք, խնգօք եւ երգօք ընդ առաջեալ են գետոյն եւ տարեալ զշուրն իւրաքանչիւր ոք յերկիր իւր եւ ուրախանան»³⁴⁴: Տրգրիս գետի անունը նա ստուգաբանում է «չատ» կամ «համարձակ» եւ շարունակում. «որքան զնայ ընդ Ասորիս ոչ ինչ առնէ շահ օգնութեան, այլ վնաս եւ աւէրք եւ յորժամ ելանէ ի նոցանէ եւ մտանէ ի Բոսոր եւ ի Բաբելոն՝ բազում առուս բաժանեալ ոռոգէ զարմտիս եւ պտղաբերէ. . . Զի գետս այս ի Հայոց ելանէ եւ զնայ ի հեռաւոր աշխարհս»³⁴⁵:

Պատմական տեղեկութիւն է պարունակում «Գօգ եւ Մագօգ» անուան Տաթեւացու ստուգաբանութիւնը. խօսքը Սկիւթներին այլ ժողովուրդների կողմից տրուած անուանման մասին է. նրանց անուանել են Սկիւթ, Սարմատ, Ալան, Ռոկսոլան, իսկ ըստ Տաթեւացու՝ նաեւ Նիկի (այդպէս նրանց պէտք է, որ անուանած լինեն Յոյները, որովհետեւ Տաթեւացին բերում է նաեւ հայերէն համարժէքը՝ «յաղթօղք») եւ «Գօգ եւ Մագօգ». «Գօգ եւ Մագօգ՝ զկիւթացոց ազգն ասեն հիւսիսոյ, որոյ անուն կոչի Նիկի, այսինքն՝ յաղթօղք: Եւ ոմանք ասեն թէ Գօգ եւ Մագօգ ի յնբրայեցոց լեզուն ժողով հեթանոսաց ասի»³⁴⁶:

Կիմ բառի ստուգաբանութեան մէջ առկայ է ո՛չ միայն աստուածաբանական ընդունուած տեսակէտը, այլ եւ միջնադարեան հայ իրականութեան մէջ կնոջ ունեցած դերին տրուած գնահատականը.

Կիմ - իբր թէ կէս մարդոյ, իբր թէ կող մի . . . իբր թէ կողաբոյս կամ կողածին . . . իբր թէ կայանք մարդոյն . . . իբր թէ կրօղ գորութեան եւ ընչից առն . . . իբր թէ կցորդ եւ օգնական առն . . . իբր թէ կեանք (Գիրք Հարցմանց, 276):

Վարդապատ բառի ստուգաբանութեան մէջ հետաքրքիր է պատմական բացատրութեան փորձը եւ Տաթեւացու կարծիքը, որ քրիստոնէութեան ընդունումով հեթանոսական տօների մի մասը վերափոխատարուել են եւ ձեռք բերել այլաբանական նշանակութիւն. «Զի՞նչ նշանակէ անուն տօնիս վարդապատ: . . . Զի հեթանոսք զայս տօնէին յանուն Ափրոդիտեայ կուոցն եւ զվարդն նմա մատուցանէին եւ յանուն նորա ծաղկօք տօնէին: Այլ Տէրն մեր զանտի յոյսն նոցա խափանեաց եւ յինքն դարձոց»³⁴⁷:

³⁴³ Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 421:
³⁴⁴ Մեկնութիւն Մատթէի, էջ 10ա:
³⁴⁵ Նոյն տեղը, էջ 11ա:
³⁴⁶ Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, էջ 332:
³⁴⁷ Գիրք Քարոզութեան, Ամարան, էջ 498:

Նա ստուգաբանում է նաեւ մի շարք փիլիսոփայական ուղղութեան անուանումներ, ընդ որում դրանց բացատրութեան մէջ կարելի է տեսնել նաեւ նրա վերաբերմունքը այս կամ այն ուսմունքի նկատմամբ.

Ճեմակաւնք - կոչին Արիստոտէականքն: Նախ զի Արիստոտէ կանգեալ ուսուցանէր, որպէս Պլատոն նստեալ: Երկրորդ՝ զի շրջէին ընդ ամենայն աշխարհ եւ ճամարիտ գիտութիւն (Համ. տես. ի գիրս Պորփիրի, 334):

Ստոյիկեաւնք - կոչին Սրահականք: Զի ստոյին սրահ լսի: Կամ զի սրահական շրջէին եւ ո՛չ ի տուն իմաստնիցն մտանէին եւ դարձեալ բաժանականք էին ի մարմնոյ, որ է սրահ հոգւոյն: Նոքա զամենայն ինչ մարմին ասեն (նոյն տեղը, 335):

Այսպիսով, Տաթեւացին բառերը ստուգաբանելիս զուգորդում է գիտական եւ ժողովրդական սկզբունքները: Նրա ճիշդ ստուգաբանած բառերը կազմում են ընդհանուր ստուգաբանութիւնների մէկ հինգերորդ մասը: Եւ քանի որ ստուգաբանութիւնն իբրեւ գիտութիւն իր խօսքն ասելու էր միայն ժ-Թ. դարում, հետեւաբար, այդ ցուցանիշը փոքր թիւ չէր միջնադարեան հայ քերականի համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1. Տաթեւացին չնայած քերականական առանձին աշխատութիւն չունի, սակայն նրա գրական ժառանգութեան մէջ տեղ են գտել մեծ թուով լեզուական հարցեր, որոնք համադրելով Արիստակէսի եւ Գէորգ Սկեւուացու երկերի մեկնութիւններում տեղ գտած հարցադրումները հետ՝ կարելի է խօսել Տաթեւացու որոշակիօրէն համակարգուած լեզուագիտական հայեացքների մասին:
2. Տաթեւացու տեսական հայեացքները հայ միջնադարեան քերականական մտքի մի նոր աստիճան են նշանաւորում: Մասնաւորապէս, ուշադրութեան արժանի են լեզուի վերաբերեալ նրա ընդհանուր հարցադրումները. լեզուի իբրեւ հաղորդակցման միջոցի վերլուծութիւնը, իրականութիւն-միտք-լեզու կապի քննութիւնը, լեզուն իբրեւ մտքի դրսեւորման միջոցի, իբրեւ ազգերի տարբերակիչ յատկանիշներից մէկի դիտարկումը:
3. Հնչիւնաբանութեան վերաբերեալ դիտողութիւններում Տաթեւացին չի բաւարարում միայն աւանդական դարձած հարցերի քննութեամբ (տառ-գիր, բաղաձայն-ձայնաւոր յարաբերութիւնը, հնչիւնափոխութեան, ուղղագրութեան մի շարք հարցեր եւ այլն), այլ եւ փորձում է նաեւ խօսել գրանշանների արտաքին ձեւաւորման, հնչիւնի արտաբերման մէջ օղի խաղացած դերի, յարալեզուական շարժանշանների մասին:
4. Զեւաբանական եւ շարահիւսական շատ հարցերի քննութեան մէջ նոյնպէս Տաթեւացին շարունակելով համադրել նախորդ քերականների տեսակէտները, այնուամենայնիւ, յաճախ է հրաժարում ընդունուած կարծիք յայտնելուց, իւրովի մօտեցում հանդէս բերում քնննող հարցի նկատմամբ, եթէ անգամ դա դուրս է մնում օրինաչափութիւնից, ինչպէս օրինակ՝ մերժողական վերաբերմունքը «կու» եղանակիչի նկատմամբ, ստորոգեալը իբրեւ նախադասութեան գլխաւոր անդամ դիտելը:
5. Միջնադարեան հայ քերականների աշխատութիւններում ոճաբանութեան վերաբերեալ տեղեկութիւնների սակաւութեան պատճառով մեծ է նաեւ հետաքրքրութիւնը Տաթեւացու ոճաբանական դիտողութիւնների նկատմամբ: Իրանց մէջ կան բազմաթիւ ինքնատիպ վերլուծութիւններ, մասնաւորապէս՝ բանաւոր խօսքի յատկանիշների, փոխաբերական խօսքի բնորոշման վերաբերեալ:
6. Տաթեւացու գրական ժառանգութեան մէջ տեղ են գտել բազմաթիւ բառամեկնութիւններ: Քննութեան ենթարկելով՝ դրանք մերթ դիտել ենք իբրեւ ժամանակակից բացատրութիւն (այդ դէպքում դրանք դասակարգուել են իմաստային, կառուցուածքային եւ ոճական սկզբունքներով) եւ մերթ՝ իրենց կրած պատմական փոփոխութիւնների ընթացքով (դրանց մի մասն արդէ հայերէնում գործածական չէ, մի մասը համադրական բառերի շարքում է, միւս մասը հանդէս է գալիս բառիմաստի ընդլայնմամբ, նեղացմամբ կամ նոր իմաստով):

Տաթևացիներն բառերը մեկնում է մի շարք եղանակներով՝ կիրառելով հոմանուն, բազմանուն, փաղաքանուն, համանուն եւ այլ տերմիններ: Բառերը մեկնելիս նա գործածում է իր կողմից ստեղծուած (բառաբարդման եւ ածանցման ուղիներով) նոր բառերը. նրապալոյժ, չմարդաւոյրք, քերեքի, դիւասայթաք եւ այլն:

Տաթևացու բառազորածուծութիւնների մի մասը նոյնպէս օգնում է ընկալելու բառերի նախնական տարբերակութիւնը եւ որոշ չափով նաեւ հաստատելու այս կամ այն ենթադրութիւնը:

7. Տաթևացիներն ստուգաբանել է նաեւ բազմաթիւ բառեր, ընդ որում թէ՛ գիտական եւ թէ՛ ժողովրդական ստուգաբանութեան սկզբունքներով: Դրանց մէջ առանձնանում են մի շարք իմաստային խմբեր (յատուկ անունների, ամսանունների, աշխարհագրական անունների, կրօնական արարողութիւնների եւ այլն): Նրա կատարած ստուգաբանութիւններում պէտք է նշել բարձր հաղորդատուութեան (ինֆորմացիայի) առկայութիւնը, որովհետեւ նա շատ յաճախ բառերը ստուգաբանելիս տուեալ երեւոյթին, առարկային առնչուող բազմաթիւ տեղեկութիւններ է հաղորդում: Սրա շնորհիւ իրա ստուգաբանութիւնները ձեռք են բերում նաեւ պատմական եւ ճանաչողական արժէք:

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

Աբեղեան Մ. Հայոց Հին Գրականութեան Պատմութիւն, հ. 2, Երեւան, 1946 (տե՛ս, նաեւ Երկեր, հ. 4, Երեւան, 1970):

Աբրահամեան Ա. Ա., Գրաբարի Ձեռնարկ, Երեւան, 1976:

Աբրահամեան Ա. Գ., Գլաձորի Համալսարանը, Երեւան, 1983:

Աբրահամեան Ա. Գ., Հայոց Գիր եւ Գրչութիւն, Երեւան, 1973:

Ադոնց Ն., Հայաստանը Յուստինիանոսի Դարաշրջանում, Երեւան, 1978:

Ալիշան Լ., Սիսական, Վենետիկ, 1893:

Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Հայ Դպրոցի, Գահիրէ, 1946:

Ակինեան Ն., Գաւազանագիրք Կաթողիկոսաց Աղթանարայ, Վիեննա, 1920:

Աղայեան Է. Բ., Հայ Լեզուաբանութեան Պատմութիւն, 1-2, Երեւան, 1958-62:

Աղայեան Է. Բ., Բառաբանական եւ Ստուգաբանական Հետազոտութիւններ, Երեւան, 1974:

Աղայեան Է. Բ., Արդի Հայերէնի Բացատրական Բառարան, 1-2, Երեւան, 1976:

Աղայեան Է. Բ., Ակնարկներ Հայոց Տոմարների Պատմութեան, Երեւան, 1986:

Աճառեան Հ., Հայերէն Արմատական Բառարան, 1-4, Երեւան, 1971-79:

Աճառեան Հ., Հայոց Անձնանունների Բառարան, 1-5, Երեւան, 1942-62:

Աճառեան Հ., Հայերէն Գաւառական Բառարան, Թիֆլիս, 1913:

Աճառեան Հ., Հայոց Լեզուի Պատմութիւն, 1-2, Երեւան, 1940-51:

Աճառեան Հ., Հայերէն Նոր Բառեր Հին Մատենագրութեան Մէջ, 1-2, Վենետիկ, 1913-1922:

Ամալեան Հ. Մ., Միջնադարեան Հայաստանի Բառարանագրական Յուշարձաններ (Ե.-ԺԵ. դ.դ.), Երեւան, 1966:

Ամալեան Հ. Մ., Միջնադարեան Հայաստանի Բառարանագրական Յուշարձաններ (ԺԶ.-ԺԷ. դ.դ.), Երեւան, 1971:

Այտրեան Ա., Քննական Քերականութիւն Աշխարհաբար կամ Արդի Հայերէն Լեզուի, Վիեննա, 1866:

Առաքելեան Վ. Դ., Դասական եւ Յետդասական Գրաբարը, Պատմա-Բանասիրական Հանդէս ՊԲՀ, 1976, 1:

Առաքելեան Վ. Դ., Բառաբանական Դիտողութիւններ, ՊՀԲ, 1979, 4:

Առաքելեան Վ. Դ., Գրիգոր Նարեկացու Լեզուն եւ Ոճը, Երեւան, 1975:

Առաքելեան Վ. Դ., Հինգերորդ Դարի Հայ Թարգմանական Գրականութեան Լեզուն եւ Ոճը, Երեւան, 1984:

Աստուածաշունչ, Սանկտպետրբուրգ, 1817:

Աւետիսեան Կ., Աշխարհագրական Անունների Բացատրական Բառարան, Երեւան, 1969:

Աւետիսեան Գ., Միւրմելեան Ս., Աւգերեան Մ., Նոր Բառագիրք Հայկազեան Լեզուի, 1-2, Երեւան, 1979-81:

Աւգերեան Մ., Առձեռն Բառարան Հայկազեան Լեզուի, Վենետիկ, 1865:

Արեւշատեան Ս. Ա., Տաթևի Փիլիսոփայական Դպրոցը եւ Գրիգոր Տաթևացու Աշխարհայեացքը, Բանբեր Մատենադարանի, 1958, 4:

Արեւշատեան Ս. Ա., Նոմինալիզմի Առաջացումը ու Զարգացումը Միջնադարեան Հայաստանում, Բանբեր Մատենադարանի, 1962, 6:

Բաղդասարեան Է. Մ., Յովհաննէս Երզնկացիի եւ Նրա Որդանական Արձակը, Երեւան, 1977:

Բեղիբեան Պ. Ա., Մի Քանի Ստուգաբանութիւններ, ՊՀԲ, 1962, 1:

Բեղիբեան Պ. Ա., Ժամանակակից Հայերէնի Դարձուածաբանութիւն, Երեւան, 1973:

Բեղիբեան Պ. Ա., Ստուգաբանութիւններ, ՊՀԲ, 1966, 2:

Գաբրիէլեան Հ., Հայ Փիլիսոփայական Մտքի Պատմութիւն, հ. 2, Երեւան, 1958:

Գրիգորեան Գ., Վահրամ Բաբունու Փիլիսոփայութիւնը, Երեւան, 1969:

Գրիգորեան Գ., Յովհան Որոտնեցու Փիլիսոփայական Ուսմունքը, Երեւան, 1980:

Դաւիթ Անյաղթ, Վերլուծութիւն «Ներածութեան» Պորփիրի (աշխատասիրութեամբ՝ Ս. Արեւշատեանի), Երեւան, 1976:

Դաւիթ Զէյթունցի, Մեկնութիւն Քերականի (աշխատասիրութեամբ՝ Ե. Մելքոնեանի), Երեւան, 1981:

Դուռնովո Լ. Հայկական Մանրանկարչութիւն, Երեւան, 1967:

Եսայի Նչեցի, Վերլուծութիւն Քերականութեան (աշխատասիրութեամբ՝ Լ. Պաշտեանի), Երեւան, 1966:

Զարբհանալեան Գ., Պատմութիւն Հայերէն Դպրութեանց, Վենետիկ, 1878:

Զարբհանալեան Գ. Հայկական Հին Դպրութեան Պատմութիւն, Վենետիկ, 1897:

Թովմա Մեծոբեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ Յաջորդաց Իւրոց, Փարիզ, 1860:

Թովմա Մեծոբեցու Յիշատակարանը (աշխատասիրութեամբ՝ Կ. Կոստանեանցի), Թիֆլիզ, 1892:

Թովմասեան Ն., Գրիգոր Տաթևացու, Սոցիալ-Տնտեսագիտական Հայեացքները, Երեւան, 1966:

ԺԴ. դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ (կազմեց՝ Լ. Պաշտեան), Երեւան, 1950:

ԺԵ. դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ (կազմեց՝ Լ. Պաշտեան), Երեւան, 1955:

Իշխանեան Ռ. Ա., Հայ Մատենագիտութեան Պատմութիւն, (Ե.-ԺԸ. դ.դ.), Երեւան, 1964:

Պաշտեան Լ., «Գրչութեան Արուեստի» Լեզուական-Քերականական Տեսութիւնը Միջնադարեան Հայաստանում, Երեւան, 1962:

Պաշտեան Լ. Ա., Գլաձորեան Համալսարանը եւ Նրա Սանքի Աւարտական Ատենախօսութիւնը, Երեւանի Պետ. Համալսարանի Գիտական Աշխատութիւնների Ժողովածու, հ. 23, 1947:

Պաշտեան Լ., Հայ Բնագիտական Միտքը ԺԴ.-ԺԸ. դարերում, ՊՀԲ, 1971, 2:

Պուրաբաշեան Ա., Հայ-Ռուսերէն Բառարան, Ա.-Բ, Երեւան, 1986-87:

Կարնեցի Հ., Մեկնութիւն Երգ Երգոց Անուանեալ Բանիցն Սաղմօնի, Կալկաթա, 1820:

Կիւլէսեան Բ., Իսլամը Հայ Մատենագրութեան Մէջ, Վիեննա, 1930:

Հայ Ժողովրդական Առակներ, Զրոյցներ, Պաղար, Առածներ ու Հանելուկներ, Երեւան, 1960:

Հայ Ժողովրդի Պատմութիւն, ՀՄՄՀ ԳԱ հրատ. հ. 3, Երեւան, 1976:

Հայ Ժողովրդի Պատմութիւն, Երեւան, 1975:

Հայ Մշակոյթի Նշանաւոր Գործիչներ (Ե.-ԺԸ. դ.դ.), Երեւան, 1976:

Ղազարեան Ա., Հայոց Լեզուի Համառօտ Պատմութիւն, Երեւան, 1981:

Ղազարեան Ռ. Ա., Բուսանունների Հայերէն-Լատիներէն-Ռուսերէն-Անգլերէն-Տրանսերէն-Գերմաներէն Բառարան, Երեւան, 1981:

Ղանալանեան Ա., Առածանի, Երեւան, 1960:

Մաղոյեան Ա., Առաքել Միւնեցի, Երեւան, 1987:

Մալխասեանց Ս., Հայերէն Բացատրական Բառարան, 1-4, Երեւան, 1944-45:
 Մանանդեան Հ., Կշիռները եւ Չափերը Հնագոյն Հայ Աղբիւրներում, Երեւան, 1930:
 Մառ Ն., Ամառնային Ուղեւորութիւնից դէպ ի Հայս, Վիեննա, 1892:
 Մառ Ն., Ժողովածոյք Առակաց Վարդանայ, Սանկտպետերբուրգ, 1894:
 Մեղրեցի Ե., Բառգիրք Հայոց (աշխատասիրութեամբ՝ Հ. Ամալեանի), Երեւան, 1975:
 Մելքոնեան Ս., Ակնարկներ Հայոց Լեզուի Ոճաբանութեան, Երեւան, 1984:
 Մեյէ Ա., Հայագիտական Ուսումնասիրութիւններ, Երեւան, 1978:
 Մովսիսեան Ա., Ուրուագծեր Հայ Դպրոցի եւ Մանկավարժութեան Պատմութեան, Երեւան, 1958:
 Մուրվալեան Ա., Հայոց Լեզուի Դարձուածաբանութիւն եւ Բայակազմութիւն, Երեւան, 1959:
 Մուրվալեան Ա., Հայոց Լեզուի Բառային Կազմը, Երեւան, 1955:
 Յակոբ Լրիմեցի, Տոմարագիտական Աշխատութիւններ (աշխատասիրութեամբ՝ Զ. Էյնաթեանի), Երեւան, 1987:
 Յակոբեան Թ., Մելիք-Բախչեան Ս., Բարսեղեան Հ., Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղա-
 նուների Բառարան, հ. 1, Երեւան, 1964:
 Յակոբեան Վ. Ա., Կանոնագիրք Հայոց, հ. Ա, Երեւան, 1964:
 Յաղազ Տարեմտին ի Վանական Վարդապետէ Ասացեալ (աշխատասիրութեամբ՝ Լ. Ուաչիկեանի),
 Մատենադարանի Գիտական Նիւթերի Ժողովածու, հ. 1, Երեւան, 1941:
 Յովհաննէս Բունցի, Յաղազս Գերականին (աշխատասիրութեամբ՝ Լ. Ուաչիկեանի, Ս. Աւագեանի),
 Երեւան, 1979:
 Յովհաննու Ոսկեբերանի յԱւետարանագիրն Մատթէոսի, Վենետիկ, 1826:
 Յովհաննու Որոտնեցոյ Վերլուծութիւն, «Ստորագրութեանց» Արխիտոտէլի, Երեւան, 1956:
 Յովսէփեան Գ., Ուաղբակեանք կամ Պոռեանք Հայոց Պատմութեան Մէջ, Վաղարշապատ, 1928:
 Յովսէփեան Գ., Թովմա Մեծոփեցու Կեանքը, Վաղարշապատ, 1914:
 Ներսէս Շնորհալի, Ընդհանրական Թուղթք Սրբոյն Ներսիսի Շնորհալոյ, Երուսաղէմ, 1871:
 Ներսէս Շնորհալի, Յովհաննէս Երզնկացի, Մեկնութիւն Սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի,
 Կ. Պոլիս, 1825:
 Չալոյեան Վ. Կ., Հայ Փիլիսոփայութեան Պատմութիւն, Երեւան, 1975:
 Չամչեանց Մ., Հայոց Պատմութիւն, հ. Գ, Երեւան, 1985:
 Պետրոսեան Հ., Գալստեան Ս., Դարագիւլեան Թ., Լեզուաբանական Բառարան, Երեւան, 1975:
 Պողոսեան Պ., Ոճագիտական Ըմբռնումների Մագումն ու Ջարգացումը Հին Յունաստանում եւ
 Հռոմում, Երեւան, 1975:
 Ջահուկեան Գ., Գրաբարի Քերականութեան Պատմութիւն, Երեւան, 1974:
 Ջահուկեան Գ., Ժամանակակից Հայերէնի Տեսութիւն Հիմունքների, Երեւան, 1974:
 Ջահուկեան Գ., Լեզուաբանութեան Պատմութիւն, 1-2, Երեւան, 1960-62:
 Ջահուկեան Գ., Հայոց Լեզուի Ջարգացումը եւ Կառուցուածքը, Երեւան, 1969:
 Ջահուկեան Գ., Հայոց Լեզուի Պատմութիւն, Երեւան, 1987:
 Ջահուկեան Գ., Քերականական եւ Ուղղագրական Աշխատութիւնները Հին եւ Միջնադարեան
 Հայաստանում, Երեւան, 1954:
 Սրապեան Ա., Հայ Միջնադարեան Զրոյցներ, Երեւան, 1969:
 Սուքիասեան Ա., Հայոց Լեզուի Հոմանիչների Բառարան, Երեւան, 1967:
 Սուքիասեան Ա., Հոմանիչները Ժամանակակից Հայերէնում, Երեւան, 1971:
 Վարդան Արեւելցի, Մեկնութիւն Քերականի (աշխատասիրութեամբ՝ Լ. Ուաչիկեանի) Երեւան,
 1972:
 Տաթևացի Գր., Գիրք Գաւազան Տալոյ, Կ. Պոլիս, 1752:
 Տաթևացի Գր., Գիրք Որ Կոչի Ոսկեփորիկ, Կ. Պոլիս, 1746:
 Տաթևացի Գր., Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729:
 Տաթևացի Գր., Գիրք Քարոզութեան, Ամարան, Կ. Պոլիս, 1741:
 Տաթևացի Գր., Գիրք Քարոզութեան, Ձմերան, Կ. Պոլիս, 1740:
 Տաթևացի Գր., Լուծումն Պարապմանց Կիւրղի, Կ. Պոլիս, 1717:
 Տաթևացի Գր., Համառօտ Տեսութիւն ի Գիրս Պորփիւրի, Մաղրաս, 1793:

Փէշումալ ճեան Գր., Բառգիրք Հայկազեան Լեզուի, 1-2, Կ. Պոլիս, 1844-46:
 Օրբելեան Ստ., Միւնիքի Պատմութիւն, Երեւան, 1986:
 Օրմանեան Մ., Ազգապատում, մասն Բ, Կ. Պոլիս, 1914:
 Օրմանեան Մ., Հայոց Եկեղեցին, Կ. Պոլիս, 1912:
 Адамян А. А., Эстетические воззрения средневековой Армении. Период раннего
 Феодализма. Е., 1955.
 Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915.
 Амбарцумян В., Язык и стиль «История Тарона». Ованеса Маминаяна. (Авторе-
 ферат канд. дис.), Е., 1918.
 Аревшатын С. С., Философские взгляды Григора Татеваци. Е., 1957.
 Аревшатын С. С., Лалафарян С., Сочинение Ионна Воротнеци «Об элементах»
 (Բանբեր Մատենադարանի) Вестник Матенадарана, 1956, 3.
 Джауныан Г., Языкознание в Армении в У-ХУШ вв. История лингвистических
 учений. Средневековый Восток, Л., 1981.
 Мастера искусства об искусстве (под ред. А. Губера), т. Б. М., 1969.
 Мирзоян А. С., О группе иллюстрированных рукописей Татевского монастыря
 (Автореферат канд. дис.), Е., 1972.
 Оганесян Л. История медицины в Армении, часть вторая, Е., 1946.

ՁԵՆՈՒԹԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Բառգիրք Արաբերէն-Պարսկերէն-Հայերէն, Մաշտոցի անու. Մատենադարան, ձեռագիր հ. 7151:
 Մատթէոս Զուղայեցի, Վարք Գրիգորի Տաթևացոյ, Մաշտոցի անու. Մատենադարան, ձեռագիր
 հ. 6607:
 Տաթևացի Գր., Լուծումն Համառօտ դժուարիմաց բանից ի գիրս գրչութեան. Լուծումն Համառօտ ի
 Տաթևացի Գր., Լուծումն Համառօտ դժուարիմաց բանից ի գիրս գրչութեան. Լուծումն Համառօտ ի
 խրատ գրչութեան. Յաղազս գրչութեան արուեստի, Մաշտոցի անու. Մատենադարան, ձեռագիր
 հ. 1115:
 Տաթևացի Գր., Լուծումնք Յոբայ, Մաշտոցի անու. Մատենադարան, ձեռագիր հ. 1264:
 Տաթևացի Գր., Մեկնութիւն Մատթէի, Մաշտոցի անու. Մատենադարան, ձեռագիր հ. 3584:
 Տաթևացի Գր., Մեկնութիւն Յովհաննու, Մաշտոցի անու. Մատենադարան, ձեռագիր հ. 5169:
 Տաթևացի Գր., Մեկնութիւն Նայեայ, Մաշտոցի անու. Մատենադարան, ձեռագիր հ. 5869:
 Տաթևացի Գր., Մեկնութիւն Սաղմոսաց, Մաշտոցի անու. Մատենադարան, ձեռագիր հ. 5869:
 Տաթևացի Գր., Մեկնութիւն Առակաց, Մաշտոցի անու. Մատենադարան, ձեռագիր հ. 5869:
 Տաթևացի Գր., Մեկնութիւն Երզոց Երզոյն, Մաշտոցի անու. Մատենադարան, ձեռագիր հ. 9348:
 Տաթևացի Գր., Մեկնութիւն «Հայր մեր»ի, Մաշտոցի անու. Մատենադարան, ձեռագիր
 Տաթևացի Գր., Վասն Աթոռոյն Աղթամարայ, Մաշտոցի անու. Մատենադարան, ձեռագիր
 հ. 9622: